3005

Հայաստանի պատմություն
27 պատկերով
Թիֆլիս 1916 թ.

9(47.925
Ա-22

9(47.925)
Խ-22

Ա. ԽԱՆՋՅԱՆ ԵՒ Գ. ՎԱՐԴԱՆԵՍԱՆ

ՄԵՐՈՑ ՀԵՐՈՐԱՅԻՆ ԴԵՐ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Գլխաւոր կէտերը)

27 պատկերով

IV-րդ բաժանմ. դասընթացի եւ ժողովրդ. ընթերցան. համար

Երեսդ-բարեփոխուած հրատարակ.

2012
9(47.925)
2004

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Ադամեանցի, Պօլից. 7
1916

47192-ա
32488.ա

I

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԵՐԿԻՐԸ

Հին Հայաստանը տարածւում էր Փոքր Ասիայի արեւելեան մասում՝ Կովկասից հարաւ։

Սա մի լեռնոտ երկիր է, որը զանազան լեռնաշղթաներով բաժանւած է մի քանի՝ համարեա թէ անջատ՝ հովիտների ու բարձրաւանդակների։

Այդ փոքրիկ երկիրներից իւրաքանչիւրը մի առանձին ինքնուրոյն իշխանութիւն էր, որ կոչւում էր նախարարութիւն, իսկ իշխանը՝ նախարար։

Նախարարութիւններից մի քանիսը իրար հետ միանալով, մի թագաւորութիւն էին կազմում։ Այդպիսով հնում Հայաստանում մի քանի հայկական թագաւորութիւններ էին առաջ եկել։ Երանցից գլխաւորներն էին *Մեծ Հայքը*, *Փոքր Հայքն* ու *Ծոփաց Աշխարհը*։

Մեծ Հայքը տարածւում էր Արաքս կամ Երասխ գետի հովտում, Արարատ կամ Մասիս լեռան շուրջը և իր սահմանների մէջ էր առնում հարաւային Կովկասի մի մասը, Վանայ լճի աւազանը և Եփրատ գետի վերին մասերը։

Մեծ Հայքից դէպի արեմուտք էր ընկնում *Փոքր Հայքը*, իսկ դէպի հարաւ՝ *Ծոփաց Աշխարհը*։

Հայաստանի այդ երեք մասերն էլ իրանց առանձին թագաւորն ունէին։ Նրանք երբեք հաշտ չէին ապրում և շատ անգամ պատերազմներ էին մղում միմեանց դէմ, դրա համար էլ հայ թագաւորները չէին զօրեղանում ու մի մեծ տէրութիւն կազմում։

Հայաստանի թոյլ ճեղուն քիչ չէին նպաստում նաև նախարարները։ Նրանք էլ չէին ցանկանում, որ թագաւորները զօրեղանան, որովհետև այդ դէպքում նրանք կորցնում էին իրանց ինքնիշխանութիւնը և հարկատու էին դառնում թագաւորին։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հայաստանի բնակիչները մի քանի դասակարգի էին բաժանւած։

Ամբողջ երկրի հողերն ու կալւածները թագաւորի, նախարարների և նրանց աղգականների ու բարեկամների սեփականութիւնն էին համարում։ Սեփականութիւնը ժառանգաբար անցնում էր որդուց-որդի։



Նկար 1. Քուրմեր։

Բոլոր մեծ և փոքր կալւածատէրերը Հայաստանի ազնւական դասն էին կազմում։ Նրանք կոչւում էին ազատներ։

Ժողովրդի մեծացած մասը—գիւղացիք, արհեստաւորներն ու վաճառականները կալւածներ չունէին և կոչւում էին ոչ-ազատներ կամ հպատակներ։

Ազատները.—Ազատները երկրի մշակութեամբ կամ ուրիշ աշխատանքներով չէին զբաղւում, որովհետև անպատւաբեր ու անվայել էին համարում։ Ազատների սովորական զբաղմունքները էին զինւորական վարժութիւնները, որսորդութիւնն ու զանազան ուրիշ զարճութիւններ։ Նրանք միայն իրաւունք ունէին միշտ զէնք կրել։ Ոչ-ազատները այդ իրաւունքից զրկւած էին։

Ազատների դասակարգին էին պատկանում նաև քուրմերը—քահանայական դասը, որոնք նոյնպէս ունէին իրանց սեփական կալւածները։ Բացի սեփական կալւածներից, քուրմերը վայելում էին նաև տաճարներին յատկացւած կալւածների եկամուտները։ Թէ քուրմերին և թէ տաճարներին պատկանող կալւածներից ոչ մի տուրք չէին վերցւում։

Քուրմերի գլխաւոր պաշտօնն էր՝ տաճարներում աստւածներին զոհ մատուցանել և ժողովրդի մէջ հաստատ պահել կրօնապաշտական կրօնը։

Նրանք շատ անգամ ուրիշ պաշտօններ էլ էին վարում. օրինակ՝ լինում էին դատաւորներ, թագաւորական կամ նախարարական դիւանապետներ, դրագիրներ և այլն։

Քուրմերը նաև բժշկութիւններ էին անում։

Քուրմերից առհասարակ վախենում էին բոլորը։ Նրանք մեծ ազդեցութիւն ունէին ամբողջ ժողովուրդի վրայ։

Ոչ-ազատները.—Թէ արհեստականութեան և թէ քրմապատկան բոլոր հողերը մշակում էր գիւղական ժողովուրդը։ Գիւղացիք պարտաւոր էին իրենց ստացած արդիւնքի մեծ մասը տալ ազատներին իբրև տուրք։

Նրանք բացի իրանց սովորական զբաղմունքներից, իբրև հպատակներ, իրանց տէրերի համար ուրիշ շատ ծառայութիւններ էին կատարում։ Նրանք տէրերի կատարեալ ծորտերն էին։

Վաճառականներն ու արհեստաւորները քիչ աւելի բարձր դիրք էին վայելում և մեծ մասամբ ապրում էին քաղաքներում։ Թէև սրանք էլ գիւղացիների նման զուրկ էին զէնք կրելու իրաւունքից, բայց աւելի մեծ պատիւ ու յարգանք

ունէին։ Գիւղական ժողովրդից պահանջւում էր նոյնպիսի յարգանք ցոյց տալ վաճառականներին ու արհեստաւորներին, ինչպէսին ցոյց էր տրւում Ազատներին։ Սրանցից ժամանակ վաճառականներին ու արհեստաւորներին թոյլ չէր տրւում, որ հպարտանան և այնպիսի իրաւունքներ բանեցնեն գիւղական ժողովրդի վրայ, ինչպիսի իրաւունք բանեցնում էին Ազատները։ Վերջիններիս պարտաւոր էին «եղբայրաբար» վերաբերուել իրանցից աւելի սուղ ապրիճանի վրայ կանգնած ժողովրդին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Թագաւորը

Հայաստանը կառավարւում էր միահեծան բռնապետական իշխանութեամբ։ Թագաւորը ամբողջ Հայաստանում ինքնիշխան և ինքնակալ էր։

Թագաւորի ամեն մի հրամանը օրէնք էր, ոչ ոք չէր կարող այդ օրէնքը փոխել։ Ամենքն էլ պարտաւոր էին թագաւորին հնազանդել, թէկուզ նրա հրամանը մի ոճիր թելադրէր։ Թագաւորը երբեմն լինում էր նոյնպէս երկրի ամենագլխաւոր քրմապետը։

Թագաւորի անձը սուրբ էր համարւում. նախարարներն ու ժողովուրդը որչափ էլ չէր սիրէին իրանց թագաւորին, դարձեալ ոչ ոք չէր մտածի նրա կեանքին վերջ դնել։

Արքունիքը կառավարւում էր երեք կարգի եկամուտներով։ Առաջինը՝ թագաւորական կալւածքներից ստացւած եկամուտն էր, երկրորդը՝ նախարարներից ստացւած տուրքը, իսկ երրորդը՝ վաճառականներից վերցւած մաքսը, որ կոչւում էր հաս կամ մուտ։


Թագաւորական կալւածները չափազանց ընդարձակ էին։ Երբեմն ամբողջ նահանգները թագաւորին էին պատկանում։ Այսպէս թագաւորինն էր Այրարատեան ընդարձակ դաշտավայրը, ուր ոչ մի նախարար չկար։ Թագաւորն ունէր շատ կալւածներ էլ, որոնք գտնւում էին զանազան նախարարութիւնների սահմաններում։

Թագաւորները շատ շքեղ ու փարթամ կեանք էին վարում։ Նրանց բոլոր ամանեղէնները ոսկուց ու արծաթից էին, հագուստն ու զէնքերը զարդարւած էին թանկագին ակներով ու մարգարիտներով և կարւած ոսկեթել բանւածքով։ Նրանք երկար մազեր էին պահում և կրում էին թանկագին քարերով զարդարւած վարսակալ։ Թագաւորի թոյլտուութեամբ նախարարներն էլ կարող էին վարսակալ կրել։

Սովորական օրերին թագաւորները իրանց գլխին զգեստում էին խոյր, իսկ հանդիսաւոր օրերում թագ։

Թագաւորները հագնում էին նուրբ շալիկի վրայից մի երկար կապայ (ինչպէս որ քահանաները են հագնում ֆարաջայի տակից), որ կոչւում էր պատմուճան, իսկ վերևից գցում էին կարմիր գոյնի մի երկար ծածկոց, որ ասւում էր ծիրանի։ Ծիրանու եզերքը զարդարւած էր լինում սամուր մորթով։ Պատմուճանի վրա կապում էին ակներով ու ոսկով զարդարւած գօտի, որից կախում էին մի շատ շքեղ փոքրիկ սուր։

Թագաւորական կօշիկները կարմիր էին լինում. ուրիշ ոչ ոք իրաւունք չունէր նոյն գոյնի կօշիկներ հագնել։ Եթէ թագաւորը ցանկանում էր իր նախարարներից մէկին մի առանձին շնորհ անել, թոյլ էր տալիս նրան մէկ ոտքին միայն կարմիր կօշիկ հագնել։ Նրա թոյլտուութեամբ նախարարները կարող էին նոյնիսկ ոսկէ բաժակ կամ այլ անօթ գործ ածել։



Նկար 2. Մեծն Տիգրանի դրամը։

Թագաւորական վրանը կարմիր էր լինում։ Վրանի վերևում փայլում էր ոսկուց կամ արծաթից շինած արծիւը, որ հայոց թագաւորների գինանշանն էր։

Հայոց թագաւորները ոսկուց և արծաթից գրաստներ էին կտրել տալիս, որոնց մի կողմում իրանց պատկերն էր լինում, իսկ միւս կողմում թագաւորական գինանշանը:

Նախարարներ

Ինչպէս թագաւորը ամբողջ Հայաստանում, այնպէս էլ նախարարներից ամեն մէկն իր երկրի սահմաններում կատարելապէս ինքնիշխան էր:

Նախարարները իրանց ունեցած հարստութեան և վայելած դիրքի համաձայն՝ երկու կարգի էին բաժանւում, աւագներ ու կրտսերներ: Նրանք բոլորն էլ թագաւորի ծառաներն էին համարւում և պարտաւոր էին խաղաղ ժամանակ ներս մի որոշ տուրք վճարել, իսկ պատերազմի դէպքում՝ զօրքով օգնել:

Նախարարները զանազան աստիճանների էին բաժանւած և թագաւորի պալատում նրանցից ամեն մէկն իր յատուկ տեղը կամ բարձն ունէր: Աւելի բարձր աստիճանաւորները նստում էին սրահի վերին կողմում, իսկ ստորինները աւելի ցած:

Այդ բարձերի թիւը երբեմն հասնում էր 900-ի: Եթէ բարձերից մէկն իր տեղից ցոլոլովին վերցւած կամ աւելի ցած էր տեղափոխւած, այդ նշանակում էր, որ թագաւորը բարձի տիրոջը աչքից ցցել է:

ՎԱՐՁԱԿԱՆ ՈՒ ԳԱՂՏԱԿԱՆ ԳԱՇՏՕՆԵԱՆՆԵՐ

Նախարարներից շատերը թագաւորների մօտ վարչական կամ պալատական զանազան պաշտօններ էին վարում:

Այսպէս՝ չորս հոգի փոխարքայի պաշտօններ ունէին և կոչւում էին սահմանապահներ: Նրանք պարտաւոր էին երկրի սահմանների վրայ հսկել: Նախարարներից մէկը պաշտօն ունէր հսկելու երկրի ճանապարհների, կամուրջների և ջրանցքների շինութեան, ինչպէս նաև քաղաքների ու գիւղերի բարեկարգութեան վրայ: Նա կոչւում էր Աշխարհաշէն:

Մի այլ պաշտօնեայ կոչւում էր Սպարապետ, որ զօրքի գլխաւոր հրամանատարն էր և նրան պատերազմի էր առաջնորդում:

Զափազանց մեծ թիւ էին կազմում թագաւորի պալատական պաշտօնեաները: Դրանցից առաջին տեղը բռնում էր Թագադիր ասպետը, որի պաշտօնն էր թագաւորի գլուխը թագ դնել: Պալատական միւս բարձր պաշտօնեան Հայր-Մարդպետն էր, որ արքունական կալւածների ընդհանուր կառավարիչն ու թագաւորի զանձերի և կանանոցի հսկողն էր:

Սրան էին հպատակւում Մարդպետները, որոնք հսկում էին արքունական կալւածներին և հաւաքում թագաւորական տուրքերը:

Ցետոյ կար Մարքսազը, որ միշտ ուղեկցում էր թագաւորի ուղարկած դեսպանութիւններին:

Բացի այս առաջնակարգ պաշտօններից, կային և ուրիշ շատ երկրորդականները. օրինակ՝ մի նախարար պարտաւոր էր թագաւորի հագուստը պահել ու հագցնել, մի ուրիշը՝ արքունիքի կահկարասիքը կարգի բերել, մի երրորդը՝ թագաւորի առջևից արծիւ տանել և այլն:

Դատաւորներ եւ պատիժներ

Թագաւորները թէ իրանց արքունիքում, թէ քաղաքներում և թէ մեծ գիւղերում յատուկ դատաւորներ էին նշանակում, որոնց պարտաւորութիւնն էր անհամաձայնութիւնները ու վէճերը քննել ու վճիռներ կայացնել:

Հայաստանի զանազան կողմերում, թագաւորանիստ քաղաքների կամ անառիկ բերդերի մօտ կային բանտեր, որոնցից մի քանիսը կոչւում էին վիրապներ: Ցանցաւորներին առհասարակ շատ խիստ պատիժներ էին տալիս. նրանց տանջանքների էին ենթարկում ու գլխատում:

Պատիժներ գործադրողները կոչւում էին դահիճներ, իսկ նրանց գլխաւորը՝ դահճապետ:

Զ ո ր ք ը

Հայաստանում այժմեան նման մշտական զօրք չէին պահում։ Թագաւորը միայն մի փոքրիկ զօրաբանակ ունէր, որ նրա թիկնապահ զօրքն էր համարւում և ամեն տեղ հետեւում էր նրան։

Պատերազմի ժամանակ թէ թագաւորը և թէ ամեն մի



Նկար. 3. Ծանր հեծելազօրք։

նախարար իրանց հպատակ ժողովրդից էին զօրք հաւաքում և կռւի առաջնորդում։ Զօրքը ոտքիկ չէր սովորում. նրա ծախքերը հոգացւում էին մասամբ թագաւորական գանձարանից, իսկ մասամբ էլ պատերազմներում ձեռք բերած աւարից ու կողոպուտից։

Շատ անգամ օտարներից էլ էին վարձով զօրք հրաւիրում։

Հայկական զօրաբանակը բաժանւում էր երեք կարգի— ծանր ու թեթեւ հեծելազօրքի և հետիոտն զօրքի։

Ծանր հեծելազօրքի թէ ձիերը և թէ զինւորները երկաթէ զրահներով էին ծածկւած։ Զինւորները գլխներին դնում էին սաղաւարտ։ Նրանց զէնքերն էին տէգ, սուր ու վահան։

Թեթեւ հեծելազօրքը ծանր զրահ չէր հագնում։ Դրանց զէնքերն էին երկար նիզակ, սուր և վահան։ Իսկ հետիոտն զօրքը կռւում էր նետ ու աղեղով։

Թագաւորն ու նախարարները ձիու վրայ էին կռւում։

Հայերը սովորութիւն ունէին իրանց զէնքերը թունաւորելու, դրա համար էլ նրանց հարւածները մահացու էին լինում։ Հայ զինւորները, մանաւանդ աղեղնաւորները, յայտնի էին իրրև նշանաւոր կռւողներ։ Ժամանակակից պատմիչների ասելով, հայ աղեղնաւորների նետերը շատ հեռու էին թռչում և շատ քիչ էին վրիպում նպատակից։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Հայ ժողովրդի գլխաւոր զբաղմունքներն էին երկրագործութիւնն ու խաշնարածութիւնը։ Հայաստանի կլիման շատ բարեխառն լինելով, այնտեղ մշակւում էին ամեն տեսակ հացահատիկներ, պտղատու ծառեր ու խաղող։ Խաշնարածութեան մէջ, բացի եղջիւրաւոր անասուններից, շատ նշանաւոր էին ձիերն ու ջորիները։ Հնումը հայերը յայտնի էին իրրև լաւ ձիաբուծներ և Հայաստանի ձիերն ու ջորիները շատ գնահատւած էին հարևան բոլոր երկիրներում։

Բացի դրանցից՝ հայերը զբաղւում էին նաև որսորդութեամբ և ձկնորսութեամբ։

Հայաստանում ծաղկած արհեստներից յայտնի էր զինագործութիւնը։ Հայերի պատրաստած զէնքերը, մանաւանդ աղեղն ու նետը, չափազանց գնահատւած էին նոյնիսկ հռոմայեցիների կողմից։

Հայերը շատ հին ժամանակներից են սկսել վաճառականութեամբ պարապել։ Հայաստանը ծովերից հեռու գտնւելով, հայ վաճառականները իրենց առևտուրը կատարում էին

ցամաքային ճանապարհներով ու գետերի վրայով։ Նրանք մեծ կարաւաններով իրանց բերքերը տանում էին հեռաւոր երկիրներ և այնտեղերից էլ ուրիշ ապրանքներ էին բերում։

Հայաստանից արտահանած ապրանքներն էին՝ հացահատիկներ, ձէթ, գինի, աղ, պղինձ, զէնքեր, ձիեր, ջորիներ և այլն։ Իսկ օտար երկիրներից բերում էին՝ համեմներ, թանկագին կտորներ, ակնեղէններ, անագ և ուրիշ ապրանքներ։

Հայ վաճառականները միևնոյն ժամանակ միջնորդի դեր էին կատարում արևելեան հարուստ Հնդկաստանի և արևմտեան հարևան ազգերի միջև։

ՀԱՑՈՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընտանիք

Ինչպէս բոլոր հին ժամանակուայ ազգերի մէջ, այնպէս էլ հեթանոս Հայաստանում բազմակնութիւն էր ընդունուած։ Սակայն այդ իրաւունքից աւելի շատ օգտւում էին ազատները, որովհետև նրանք հարուստ էին և բազմաթիւ կանայք ու զաւակներ պահելու միջոցներ ունէին։ Կանանցից միայն մէկն էր գլխաւորը, միւսները կոչւում էին հարճեր։



Նկար. 4. Հայ իշխանուհի։

Այսպէս թագաւորի կամ նախարարի բազմաթիւ կանանցից միայն մէկն էր համարւում թագուհի կամ իշխանուհի։ Թագաւորական կամ նախարարական գահը ժառանգում

էին, սովորաբար, գլխաւոր կնոջից ծնուած անդրանիկ զաւակները։ Եւ հէնց դրա համար էլ թագաւորի կանանց ու նրանց զաւակների միջև շարունակ վէճեր ու կռիւներ էին տեղի ունենում թագաժառանգութեան պատճառով։

Այդ կռիւներից ու վէճերից խուսափելու համար, թագաւորները առհասարակ իրանց մօտ պահում ու մեծացնում էին թագաժառանգին միայն, իսկ մնացած բոլոր զաւակներին մանուկ հասակից արքունիքից հեռացնում էին։

Բերդեր եւ ամրոցներ

Թագաւորն ու նախարարները բացի քաղաքներում ունեցած իրանց հոյակապ պալատներից ու տներից, երկրի զանազան կողմերում շատ բերդեր ու ամրոցներ էլ ունէին, որոնք շրջապատուած էին զէնքերով և անառներով։ Այդ բերդերն ու ամրոցները, թէև ծառայում էին երկրի պաշտպանութեանը, բայց տարւայ որոշ ժամանակներում թագաւորները գնում ապրում էին այդ տեղերում։

Այդ բերդերում ու ամրոցներումն էին պահւում թագաւորական և նախարարական գանձերը։ Այնտեղ էին թագաւում նաև նրանց տոհմի աճիւնները։

Հարսանիք եւ թաղում

Մեծամեծների տներում կատարուած հարսանիքները շատ շքեղ էին լինում։ Սովորութիւն կար հարսի գլխին մարգարիտներ, իսկ փեսայի գլխին ոսկէ դրամներ շաղ տալ։ Հարսանիքը տեւում էր մի քանի օր։

Մեռածների համար ընդունուած էր շատ մեծ սուգ կատարել։ Թաղման հանդէսի ժամանակ դագաղի առջևից գնում էր երաժշտական խումբը, որ վշտեր էր հնչեցնում ու քնար ածում։ Յետևից գնում էին վարձովի լալկան կանայք, որոնք սև զգեստներ հագած, երգերով գովաբանում էին մեռնողին, իրանց երեսները ճանկռոտում, լալիս էին և ուրիշներին էլ լացացնում։

Մեռելի աչերը սովորութիւն ունէին սև շոր հագնել, երկար ժամանակ սուգ պահել։

Հագուստ

Ժողովրդի հագուստը մօտաւորապէս նոյն մասերից էր բաղկացած, ինչ թագաւորինը։ Նրանք շապիկի վրայից հագնում էին կարճ պարեգօտ—կապայ, որի փէշերը դրւում էին լայն վարտիկի մէջ։ Վարտիկը կապւում էր խոնջանով, որ միևնոյն ժամանակ գօտու դեր էր կատարում։ Ոտներին հագնում էին հողաթափներ կամ տրեխներ։

Ագնւականները պարեգօտի վրայից հագնում էին կարճ քիվնոց, իսկ խոնջանից կախում էին կարճ սուր։ Իբրև պարզարանք, նրանք ականջներից կախում էին ոսկէ կամ արծաթէ օղեր, թևերին էլ հագնում էին ապարանջաններ։ Նրանք շատ շքեղ կերպով պարզարում էին նաև իրանց ձիերը։

Ժողովրդի սորին խաւերը զուրկ էին ագնւականների վայելած բոլոր շքեղութիւններից։ Դրանք ապրում էին գեռնափոր աններում, իրանց անասուններն և հաւերի հետ*)։

*) Այդ մասին տե՛ս մանրամասն մեր «Նախ. մարդը և հայ. առասպելները» գրքում։

II

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՒՒՆԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻՑ ԱՌԱՋ

Հայ ազգի պատմութեան ամենափայլուն շրջանը Մեծն Տիգրանի թագաւորութեան տարիներն են համարւում։

Այդ այն ժամանակն էր, երբ հռոմայեցիք գրաւել էին Փոքր Ասիայի մի քանի երկիրները և աշխատում էին ամբողջ արևելքի տէրը գառնալ։

Հռոմայեցիք այն ժամանակւայ ամենազարգացած ու լուսաւորւած ազգն էին։ Նրանց օրքերը պինւած էին ամենալաւ զէնքերով։ Նրանք յայտնի էին իրանց քաջութեամբ, կարգապահութեամբ, յանդգնութեամբ ու տոկունութեամբ։ Նրանց զօրավարներն էլ չափազանց հմուտ էին պատերազմական արուեստի մէջ։

Հռոմայեցիք տէր էին գառել Միջերկրական ծովին ու նրա վրայ բազմաթիւ առևտրական ու պատերազմական նաւեր էին պահում։ Նրանք այդ պատերազմական նաւերով սարսափ էին ազդում իրանց տէրութեան սահմանակից երկիրների և ազգերի վրայ, որոնց հետ շատ էլ լաւ չէին վարւում։

Ուզելով հարստանալ, ճոխ ու վարթամ կեանք վարել, հռոմայեցիք իրանց հպատակ ազգերին սաս-

տիկ հարստահարում, կեղեքում և թշուառութեան էին մատնում։

Այն ժամանակ արևելքում ոչ մի հզօր տէրութիւն չկար, որ արգելք լինէր հռոմայեցիների ազդեցութեան տարածելուն և սահման դնէր նրանց անխիղճ կեղեքումներին։

Ամենամեծ տէրութիւնը Փոքր Ասիայում Պարթևների թագաւորութիւնն էր, որ գտնւում էր Հայաստանի արևելեան կողմում։ Պարթևները, սակայն, ներքին խռովութիւններից թուլացած, անկարող էին հռոմայեցոց հետ մրցել։

Հռոմէական սահմաններին շատ աւելի մօտ էր Պոնտոսի թագաւորութիւնը, որ այդ միջոցին նոր էր սկսել զարգանալ ու զօրեղանալ։



Նկար 5. Միհրդատ։

Այդ թագաւորութիւնը տարածւում էր Սև ծովի հարաւային ու արևելեան ափերում, իր սահմաններէի մէջ առնելով նաև Կողքիսը, Կովկասի մի մասն ու Փոքր Հայքը։

Այդ երկրի թագաւորն էր Միհրդատ Եւպատորը,

որ մի շատ խելօք, հպարտ ու պատերազմասէր մարդ էր։

Միհրդատը շատ տարիներ զօրծ ունենալով արևմտեան ազգերի հետ, ուսումնասիրել էր նրանց թէ լաւ և թէ վատ կողմերը։ Նա ծանօթ էր մի քանի լեզուների, ինչպէս և շատ հմուտ էր պատերազմական գործերում՝ թէ ցամաքի և թէ ծովի վրայ։ Նրա պատերազմական նաւերը լողում էին Սև ծովի վրայ։

Հպարտ ու յանդուգն Միհրդատն էր, որ դուրս էր եկել հզօր Հռոմի դէմ, կամենալով դառնալ Փոքր Ասիայի տէրն ու իշխողը։

Պոնտական թագաւորի ու հռոմայեցիների միջև սկսած հէնց այդ կռիւների ժամանակ Մեծն Տիգրանը Հայաստանի թագաւոր է դառնում։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԻԳՐԱՆԻՑ ԱՌԱՋ

Տիգրանից առաջ գոյութիւն ունեցող Հայաստանի երեք թագաւորութիւններն էլ բոլորովին անկախ չէին։ Փոքր Հայքն իր առանձին թագաւորը չունէր և միացրած էր հարևան Պոնտոսի թագաւորութեանը։ Մեծ Հայքը՝ պարթևական թագաւորի, իսկ Ծոփաց աշխարհը՝ Կապադովկիայի դերիշխանութեան տակ էին ու նրանց հարկատու։

Մեծն Տիգրանը մի խելօք, բայց և շատ հպարտ, փառասէր ու պատերազմասէր մարդ էր։

Իր հօրից Մեծ Հայքի գահը ժառանգելուն պէս (95 թ. Ք. ա.), նրա առաջին միտքն է լինում Ծոփաց աշխարհը միացնել իր թագաւորութեանը և այդպիսով ստեղծել մի զօրաւոր հայկական տէրութիւն։

Այդ ժամանակ Կապադովկիան, Միհրդատի մղած

2278-07

պատերազմների պատճառով, շատ թուլացած էր։ Նա անկարող էր պաշտպանութիւն ցոյց տալ իր հովանաւորութեան տակ գտնուող Ծովից աշխարհին։ Մեծն Տիգրանը շատ հեշտութեամբ նուաճում է նրան և իր երկրին միացնում (96 թէ 93 թ. ք. ծ. առ.)։

Տիգրանի եւ Միհրդատի դաշնակցութիւնը

Մեծն Տիգրանի յաջողութիւնն ու զօրեղանալը տեսնելով, Միհրդատը մտածում է դաշն կապել հայոց թագաւորի հետ ու միացած ոյժերով շարունակել հռոմայեցիների դէմ սկսած պատերազմը։

Այդ նպատակով Միհրդատը դեսպան է ուղարկում մեծն Տիգրանի մօտ. առաջարկելով միևնոյն ժամանակ իր կէտպատրա աղջկանը հայոց երիտասարդ թագաւորին կնութեան։

Տիգրանը խորհում է, որ եթէ Պոնտոսի զօրեղ թագաւորին աջակից ունենայ, կարող է աւելի ընդարձակել իր երկրի սահմանները և շատ աւելի զօրաւոր տէրութեան թագաւոր դառնալ։

Նա խիստ ցանկութիւն ունէր չախչախել բոլոր այն մանր տէրութիւնները (Եդեսիան, Կորդուաց աշխարհը, Մեծական Ատրպատականը և ուրիշները) որոնցով շրջապատուած էր Հայաստանը։

Միհրդատն ուրախութեամբ խոստանում էր Տիգրանին աջակցել իր այդ ցանկութիւնները իրագործելու, միայն թէ նա էլ իրան օգնէր հռոմայեցիների զօրութիւնը չախչախելու։

Տիգրանն ու Միհրդատը համաձայնութեան գալով պայմանաւորւում են, որ Հռոմի դէմ իրանց

մղելիք պատերազմներում նուաճած բոլոր երկիրները Միհրդատին պիտի պատկանեն, իսկ ձեռք բերուած աւարը, գերիները ու հարստութիւնները պիտի բաժին հասնեն Տիգրանին։

Այսպիսի պայմանով Մեծն Տիգրանը միայն իր գանձարանը հարստացնելու մասին չէր մտածում։ Նրա ցանկութիւնն էր արևմտեան երկիրների աւելի լուսաւոր ժողովուրդներին—յոյներին, հրէաներին, ասորիներին և ուրիշներին, գաղթեցնել Հայաստան, որպէսզի խառնի նրան բնակչութիւնը և զարկ տայ երկրի և ժողովուրդի առաջադիմութեանը։

Տիգրանի եւ Միհրդատի առաջին ընդհարումները հռոմայեցիների հետ

Պայմանագիրը կնքելուն պէս, դաշնակիցները յարձակում են Կապադովկիայի ու Պաֆլագոնիայի վրայ և տիրում այդ երկիրներին։ Երկու երկիրներն էլ այդ ժամանակ Հռոմի գերիշխանութեան տակ էին։ Դրանց գահաժառանգները սարսափած դիմում են հռոմայեցիներին և նրանցից պաշտպանութիւն խնդրում։

Հռոմի Ծերակոյտը*) հրամայում է Կիլիկիայի հիւպատոս Սիլլային՝ մաքրել երկու երկիրներն էլ «բարբարոս» (կիսավայրենի) թշնամիներից և գահաժառանգ Արիոբարզանին հաստատել Կապադովկիայի թագաւոր։

Սիլլան իր փոքրաթիւ զօրքով յարձակւում է

*) Հռոմում այդ ժամանակ թագաւորներ չկային. երկիրը կառավարում էր ժողովրդից ընտրած ներկայացուցիչների ժողովը, որ կոչւում էր Ծերակոյտ։

դաշնակից զօրքերի վրայ, մեծ չարդ է տալիս նրանց և Արիոբարզանին հաստատում իր հայրենական գահի վրայ (92 թէ 91 թ. Ք. ծ. ա.)։

Դրանից յետոյ Սիլլան շտապով վերադառնում է Հռոմ, ուր այդ ժամանակներին խիստ երկպառակութիւններ կային։

Միհրդատն ու Տիգրանը կրած պարտութիւնից չեն յուսահատւում։ Սիլլայի հեռանալուց յետոյ, նրանք շտապով պատրաստութիւններ են տեսնում պատերազմական նոր գործողութիւններ սկսելու համար։

Այս անգամ Տիգրանը, սակայն, հաւատարիմ չէ մնում իր աներոջ հետ կապած դաշինքին։ Պատերազմների ամբողջ ծանրութիւնը Միհրդատի վրայ է ընկնում, որովհետև Տիգրանին շատ աւելի զբաղեցնում էր իր սահմանակից փոքր երկիրները գրաւելու միտքը, քան հզօր Հռոմի դէմ պատերազմելը։

Մեծն Տիգրանի նւաճումները Պարթեւաց երկրում

Տիգրանն ուզում է ամենից առաջ Պարթևների գերիշխանութիւնից ազատել։ Նա օգուտ քաղելով պարթևական ներքին խռովութիւններից՝ յարձակւում է նրանց վրայ։

Ամեն ինչ ճանապարհին քարուքանդ անելով, Տիգրանը գնում հասնում է մինչև պարթևական թագաւորանիստ քաղաքները։ Պարթևները մեծ պատուհիրեն են կրում և ստիպւում հայերին վերադարձնել այն 70 գաւառները, որ նուաճել էին Տիգրանի գահ բարձրանալուց առաջ։

Բացի դրանից, նրանք պարտաւորւում են Տիգրանին զիջել Միջագետքի հիւսիսային երկու խիստ

արգաւանդ նահանգները, ինչպէս և հիւսիս-արևելեան այն բոլոր փոքրիկ իշխանութիւնները, որոնք մինչև այդ ժամանակ պարթևների պաշտպանութեան տակ էին։



Նկար 6. Մեծն Տիգրան։

Այս փայլուն յաղթութիւններից յետոյ, Մեծն Տիգրանն իր զօրքով մտնում է Միդիա (Մարաստան)

և գնում հասնում մինչև Եկբատանի (Համադան) դրուները ու այրում Թագաւորի պալատը։

Այսպիսով հայոց Թագաւորը հետզհետէ նւաճում է իր բոլոր հարևան երկիրները—Ադւանից աշխարհը, Արցախականը, Մարաստանը, Կորդւաց աշխարհը և Վրաստանը։

Այդ երկիրների բոլոր Թագաւորները ընդունում են հայոց Թագաւորի գերիշխանութիւնը և նրա հարկատուներն են դառնում։ Դրանք պարտաւորւում են Մեծն Տիգրանին կաղապ ժամանակ մի որոշ հարկ վճարել, իսկ պատերազմի դէպքում զօրք և բանւորներ տալ։

Այդ ժամանակից Մեծն Տիգրանը ձեռք է բերում «Թագաւորների Թագաւոր» տիտղոսը, որ մինչ այդ ժամանակ պարթևաց Թագաւորներն էին կրում։

Տիգրանի նւաճումները հռոմէական երկիրներում

Հայաստանի սահմանները հիւսիսի և արևելքի կողմերից կատարելապէս ապահովելուց յետոյ, «Արքայից Արքան» մտածում է Եփրատ գետի արևմտեան կողմի երկիրներն էլ նւաճել։

Եգեսքայի ու նրա հարևան երկիրների գրաւումով Տիգրանն արդէն տէր էր դառել այն մեծ ճանապարհին, որ տանում էր Ասորիք (Սիրիա)։

Նա բազմաթիւ զօրքով մտնում է այդ երկիրը և համարեա թէ առանց պատերազմի տիրում նրան (63 թ. Ք. ծ. ա.)

Ասորոց երկրին տիրանալուց յետոյ, Մեծն Տիգրանն արշաւում է Կիլիկիա, կործանում է նրա մի

քանի քաղաքները և նրանց բնակիչներին գերելով՝ տեղափոխում է Հայաստան։

Այդտեղից հայոց Թագաւորը, Միհրդատի դըրդմամբ՝ յարձակւում է Կապադովկիայի վրայ և գրաւում Մաժակ (Կեսարիա) մայրաքաղաքը։ Այդ, ինչպէս նաև տասնեմեակ յունական այլ քաղաքների բնակիչներին՝ ընդամենը 300,000 հոգի, Տիգրանը տեղափոխել է տալիս Հայաստան։ Նա մեծ մասամբ բնակեցնում է դրանց իր նոր մայրաքաղաքում—Տիգրանակերտում։

Այս բոլոր նւաճումները աւելի ու աւելի են գրգռում Տիգրանի փառասիրութիւնը։ Նա մտածում է իր աներոջ՝ Միհրդատի հետ ամբողջ Արևելքի տէրը դառնալ։ Նա գնում ու նւաճում է հարուստ Փիւնիկիան, իսկ այնտեղից էլ իր արշաւանքն ուղղում է Պաղեստինի վրայ։

Սակայն, դեռ բոլորովին չվերջացրած այդ երկրի նւաճումը, յանկարծ լուր է ստանում, որ հռոմէական զօրքը մտել է Հայաստան, ուստի շտապում է վերադառնալ իր երկիրը։

Տիգրանի առաջին պատերազմը հռոմայեցիների դէմ

Երբ Տիգրանն իր երկրի սահմաններն էր ընդարձակում, Միհրդատն էլ Հռոմայեցիների դէմ էր պատերազմում։ Վերջինս մի քանի փառաւոր յաղթութիւններ տանելուց յետոյ, թէև կրկին չարաչար յաղթել էր, բայց պլուխ էր բարձրացրել ու սպառնական դարձել հռոմայեցիների համար։ Վերջին անգամ հռո-

մայեցիք իրանց Լուկուլլոս զօրավարին էին ուղարկել անհանգիստ Միհրդատի դէմ։

Լուկուլլոսը թէ ցամաքի և թէ ծովի վրայ Միհրդատի բանակը կատարելապէս ջարդելով և ցիր ու ցան անելով՝ գրաւել էր Պոնտոսի բոլոր քաղաքները. Հռոմէական զօրքերից հալածւելով, Միհրդատը փախաւ իր փեսայի մօտ։ Հպարտ Տիգրանն այդ խայտառակ պարտութեան համար խիստ բարկացած լինելով, չէր ցանկացել մինչև անգամ Միհրդատի երեսը տեսնել, այլ հրամայել էր նրան՝ գնալ Հայաստանի մի հեռաւոր տեղում ապրել։

Այդ ժամանակ Լուկուլլոսը իր Ապպիոս զօրավարին ուղարկում է Տիգրանի մօտ և պահանջում յանձնել Միհրդատին։

Ամբողջ 25 տարի շարունակ խոնարհութիւն տեսած գոռոզ Տիգրանը սաստիկ զայրանում է հռոմայեցու այդ յանդուգն պահանջից և համարձակ խօսակցութիւնից։ Նա ոչ միայն մերժում է Միհրդատին յանձնել, այլ և պատրաստութիւն է յայտնում հռոմայեցիների դէմ պատերազմելու։

Բայց հէնց որ Լուկուլլոսի դեսպանը հեռանում է, հայոց թագաւորը մտատանջութեան մէջ է ընկնում։ Նա իր մօտ է հրաւիրում Միհրդատին, մեծ պատուով ընդունում է նրան և խորհուրդ անում, թէ ինչ կերպ պատերազմել հռոմայեցիների հետ։

Մեծն Տիգրանը 10,000 հեծելազօրք է յանձնում Միհրդատին, որ նա գնայ իր երկիրը յետ նուաճի։ Իսկ ինքն իր թագաւորութեան մէջ գտնւած բազմացեղ ժողովուրդներից մի անպին բանակ հաւաքելով՝ պատրաստւում է մի սոսկալի հարւած հասցնելու հռոմայեցիներին։

Այդ իմանալով, Լուկուլլոսը, առանց ժամանակ

կորցնելու, արշաւում է ուղղակի Տիգրանակերտի վրայ։

Մեծն Տիգրանի համար Լուկուլլոսի այդ արշաւանքը բոլորովին անսպասելի էր։ Երբ նրան լուր են բերում, թէ հռոմէական զօրքը Հայաստան է մտել, բարկութիւնից լրաբերին գլխատել է տալիս։

Յետոյ նա իր ամենասիրելի զօրապետ Միտրոբարզանին 3000 ձիաւոր և բազմաթիւ հետևակ զօրք է յանձնում ու հրամայում, որ գնայ Լուկուլլոսին կենդանի կամ մեռած իրան բերի։ Բայց Միտրօբարզանը յաղթւում և սպանւում է կռւի դաշտում, իսկ Լուկալլոսը գնում, պաշարում է Տիգրանակերտը։

Տիգրանը լուր է ուղարկում Միհրդատին, որ օգնութեան հասնի, սակայն նա ուշանում է։

Միհրդատը, երկար ժամանակ հռոմայեցիների հետ պատերազմած լինելով, փորձով գիտէր, որ նրանց հետ բացարձակ ճակատամարտի դուրս գալը վտանգաւոր է, այդ պատճառով էլ նա դիտմամբ ուշանում է Տիգրանին օգնութեան գալու, որպէսզի նա սիրտ առած ճակատամարտի դուրս չգայ Լուկուլլոսի դէմ։ Նա լուր է ուղարկում Տիգրանին, թէ պէտք է աշխատել հռոմէական բանակի կերակուրը կտրել ու նրան սովի մատնել. սակայն Տիգրանը չէ լսում փորձւած Միհրդատի խորհրդին։ Նա իր 280 հազար խառնիճաղանճ զօրքին վստահացած՝ դուրս է գալիս հռոմայեցիների դէմ (69 թ. Ք. ծ. ա. ամառը)։

Ամենից առաջ Տիգրանը մտածում է իր կանանոցն ու գանձերը փրկել։ 6000 ձիաւորներ ճեղքում են հռոմայեցիների բանակը, մտնում են պաշարւած Տիգրանակերտը և ազատում թագաւորի կանանցն ու գանձերի մի մասը։

Լուկուլլոսը վճռում է թոյլ չըտալ Տիգրանի մեծ բանակին մօտենալու քաղաքին։ Նա իր զօրքի մի մա-

ը թողնում է Տիգրանակերտի պաշարումը շարունակելու, իսկ միւս մասը հետ առած գնում է Տիգրանի առաջը կտրելու։

Մեծն Տիգրանը Լուկուլլոսի փոքրաթիւ բանակը նկատելով, արհամարհանքով բացականչում է. «այս օտարականները եթէ դեսպանութեամբ են իմ մօտ գալիս, չափազանց շատուր են, իսկ եթէ պատերազմելու՝ շատ փոքրաթիւ են»։

Լուկուլլոսի թէև փոքրաթիւ, բայց լաւ վարժւած բանակը մէկ օրւայ մէջ, սակայն, սոսկալի ջարդ է տալիս հայոց թագաւորի բանակին, որը թէև բազմաթիւ, բայց ծանրաշարժ և բացի այդ՝ կանոնաւոր պատերազմների էլ անվարժ էր։ Այդ անաւոր բանակի մի մասը ջարդւում, իսկ միւսն էլ շփոթւած փախուստի է դիմում։ Փախչում է նոյնպէս Տիգրանը, իսկ Լուկուլլոս վերադառնում է և պաշարում Տիգրանակերտը։

Տիգրանակերտի բնակիչներին, որոնց հայոց թագաւորը բռնութեամբ էր տեղափոխել, Լուկուլլոսը խոստանում է թոյլ տալ իրանց հայրենիքը վերադառնալ։ Նրանք էլ ուրախութեամբ քաղաքի դռները բաց են անում և անձնատուր լինում։

Լուկուլլոսի յաղթական զօրքը գրաւում է և կողոպտում քաղաքը, ինչպէս և թագաւորական գանձերը (69 թ. Ք. ա.)։

Տիգրանի երկրորդ պատերազմը

Տիգրանակերտի մօտ չարաչար յաղթւելուց յետոյ, հայոց թագաւորը գնում է իր միւս մայրաքաղաքը՝ Արտաշատ։ Նա սկսում է այնտեղ նոր բանակ կազմել։ Առաջին պատերազմից խրատւած, նա աշխատում է

այս անգամ իր զօրքն աւելի լաւ կրթել ու կանոնաւորել։

Լուկուլլոսն իր զօրքով հետևում է նրան։

Մեծն Տիգրանը առանց սպասելու, որ հռոմայեցիք գան և պաշարեն իր անառիկ մայրաքաղաքը, զօրք առած գնում է Լուկուլլոսի առաջը կտրելու։ Զորս օրւայ ճանապարհի վրայ թշնամի բանակները միմեանց են հանդիպում և սկսւում է երկրորդ արիւնահեղ ճակատամարտը։

Կռւի սկզբում յաղթութիւնը հայերի կողմն էր երևում։ Լուկուլլոսը կարծում է, թէ ինքն այլևս կորած է։ Բայց նա, առանց շփոթւելու, հրամայում է իր հեծելազօրքին գրոհ տալ հայերի վրայ։ Կռիւը տաքանում է և վերջում հայերը զարձեալ յաղթւում են ու փախուստի դիմում։ Տիգրանն էլ փախչում ու փակւում է Արտաշատում (68 թ. սեպտ. Ք. ծ. ա.)։

Այս երկրորդ պատերազմում շատ հայ ազնւականներ զերի են ընկնում հռոմեացիների ձեռքը։

Այնուհետև Լուկուլլոսը գնում պաշարում է Արտաշատը, բայց Հայաստանի վաղահաս ցրտերը սաստիկ նեղում են նրա զօրքերին, որոնք սկսում են տրտնջալ և Լուկուլլոսից պահանջել, որ յետ դառնան։

Լուկուլլոս ճարահատ յետ է նահանջում։ Նա անցնում է Տաւրոսի լեռները և մտնում Միջագետք ու պաշարում Մծբին քաղաքը, որի կառավարիչն էր Տիգրանի եղբայր Գոռը։

Այդ քաղաքը մի յոյն ճարտարապետի ձեռքով շատ լաւ ամրացւած էր, այնպէս որ հռոմայեցիք երկար են չարչարւում, մինչև կարողանում են գրաւել (68 թ. Ք. ծ. ա. աշնանը)։

Մինչ Լուկուլլոսը Մծբինումն էր գտնւում, Տիգրանն ու Միհրդատը, նոր ոյժեր հաւաքած, սկսում

են յարձակողական դիրք բռնել։ Նրանք երբեմն առոնձին-առանձին, երբեմն էլ միացած ոյժերով յարձակւում են Լուկուլլոսի զանազան երկիրներում թողած հռոմայեցի զօրամասերի վրայ։ Ամեն տեղ մեծ ջարդ են տալիս նրանց և նորից տիրում բոլոր այն երկիրներին, որոնց տիրել էին հռոմայեցիները (67 թ. զարնանը Ք. ծ. ա.)։

Այդ միջոցին Լուկուլլոսը կատարեալ անգործութեան էր մատնւած։ Նրա զօրքը ապստամբել էր և այլևս չէր հնազանդւում, ասելով, որ զինւորական ծառայութեան 20 տարին արդէն լրացած է և կամենում են իրանց տները վերադառնալ։

«Բարբարոս» թագաւորների անսպասելի յաջողութիւնները ու հռոմէական լեգէոնների ձախորդութիւնները մեծ շփոթութիւն էին գցել Հռոմի Ծերակոյտում։ Այնտեղ որոշում են յետ կանչել Լուկուլլոսին և նրա փոխարէն ուղարկել երիտասարդ Պոմպէոս զօրավարին։

Միհրդատի վերջնական պարտութիւնը եւ մահը

Պոմպէոսի Փոքր Ասիա եկած ժամանակ, Լուկուլլոսի գրաւած երկիրներից համարեա թէ ոչ մի թիզ հող այլևս չէր մնացել հռոմայեցիների ձեռքում։ Միհրդատն ու Տիգրանը այդ բոլորը յետ էին նւաճել և Պոմպէոսն սոսկալած էր ամեն բան սկսել նորից։ Իր բանակը կարգի բերելուն պէս, նա յարձակւում է Միհրդատի վրայ, ժամանակ չտալով, որ նա ու Տիգրանը միանան իրար հետ։

Միհրդատը նորից յաղթւում և հռոմէական զօրքերից հալածւած, երկրորդ անգամ փախչում է Տիգրանի մօտ։ Բայց այս անգամ Տիգրանը նրան ոչ

միայն չէ ընդունում, այլ և մի մեծ գումար է խոստանում այն մարդուն, ով Միհրդատին կբռնկանի և նրա գլուխը կը բերի։

Այդ ժամանակ Մեծն Տիգրանի որդին, նոյնպէս Տիգրան անունով, դաւադրութիւն էր սարքել հօր դէմ, Հայաստանի գահին օր առաջ տիրանալու նպատակով։ Մեծն Տիգրանը կասկածում էր, թէ Միհրդատն է իր որդուն դաւադրութեան դրդողը։

Ծերացած ու վիրաւոր Միհրդատը, Պոմպէոսից հալածւելով, իր գանձերի մի մասը հետն առած՝ փախչում է և գնում Սև Ծովի հիւսիս-արևմտեան կողմերը ու մի անառիկ բերդաքաղաքում պատսպարւում։ Այդտեղ նա սկսում է նոր զօրք հաւաքել, որ ցամաքի կողմից յարձակւի բուն հռոմէական երկրի վրայ և հէնց այնտեղ շարունակի պատերազմը։

Այդ ժամանակ Միհրդատի Փառնակ որդին ապստամբում է հօր դէմ, պաշարում է նրա բնակարանը և կամենում է սպանել նրան։

Միհրդատը տեսնելով, որ այլևս փրկութիւն չկայ, անձնասպանութեամբ վերջ է դնում իր փոթորկալից կեանքին (63 թ. Ք. ծ. ա.)։

Մեծն Տիգրանի վերջնական պարտութիւնը

Մինչ Պոմպէոս Միհրդատին հալածելով էր զբաղւած, հայոց թագաւորը սոսկալած էր իր դաւաճան որդու հետ գործ ունենալ։

Մեծն Տիգրանի կապադովկիայում եղած ժամանակ, նրա որդին մի քանի իշխանների հետ միացած՝ ապստամբել էր իր հօր դէմ։

Ապստամբութեան լուրն ստանալուն պէս, Մեծն

Տիգրանը վերադառնում է Հայաստան և մի լաւ ջարդ տալիս ապստամբներին։

Երիտասարդ Տիգրանը փախչում է իր աներոջ՝ պարթեւաց թագաւորի մօտ։ Նա պարթեւներից զօրք է վերցնում, մտնում Հայաստան և գնում պաշարում է Արտաշատ քաղաքը։ Մեծն Տիգրանը սաիպեւում է փախչել լեռները և յետոյ մեծ զօրք հաւաքելով՝ յարձակւում է իր որդու վրայ։ Ապստամբ



Նկ. 7 Պոմպէոս

որդին նորից մի լաւ ջարդ է կրում ու փախչում։

Այս անգամ նա ուզում է գնալ իր պապի՝ Միհրդատի մօտ՝ նրանից օգնութիւն խնդրելու. բայց ճանապարհին լսում է, որ Միհրդատը յաղթւել է հռոմայեցիներից, ուստի գնում է ուղղակի Պոմպէոսի մօտ։ Դաւաճան թագաժառանգը հռոմէական զօրապետին պատրաստակամութիւն է յայտնում, Հայաստա-

նի անմատչելի ճանապարհները ցոյց տալ, եթէ միայն հօր գահը իրան կը տրւի։

Պոմպէոսը երիտասարդ Տիգրանի առաջնորդութեամբ մտնում է Հայաստան և սկսում միմեանց եւսից նւաճել բոլոր բերդերն ու ամրոցները։

Այսպէս առաջ խաղալով, Պոմպէոսն իր զօրքով հասնում է Արտաշատ քաղաքը և պաշարում ծերունի Տիգրանին։

Հարազատ որդու դաւաճանութիւնից յուսահատւած, Մեծն Տիգրանը որոշում է անձնատուր լինել, ուստի անձամբ գնում է Պոմպէոսի մօտ ու նրա ոտների տակն է գնում իր արքայական թագը։

Ջաղցրաբարոյ Պոմպէոսը, ալեզարդ թագաւորի այդպիսի խոնարհութիւնից սաստիկ զգացւած, իսկոյն թագը վերցնում, նրա գլխին է դնում, և նստեցնելով իր կողքին՝ սկսում է մխիթարել նրան — «Դու ոչ միայն թագաւորութիւնդ չես կորցրել, — ասում է Պոմպէոսը Մեծն Տիգրանին, — այլ և այսուհետև հրոզոր Հռոմի բարեկամը պիտի համարւես»։

Տիգրանի դաւաճան որդին, որ այդ ժամանակ Պոմպէոսի մօտ էր, մինչև իսկ ոտքի չէ կանգնում ծերունի հօր առաջ։ Նա հրաժարւում է նոյնիսկ մասնակցել այն հացկերոյթին, որ Պոմպէոսը տալիս է ի պատիւ հայոց թագաւորի։

Պոմպէոսը սաստիկ զզւանք է զգում դաւաճան որդու այդպիսի վարմունքից։

Նա Հայաստանի թագաւորութիւնը նորից Մեծն Տիգրանին է յանձնում, յետ առնելով միայն այն երկիրները, որ Տիգրանը գրաւել էր իր թագաւորութեան օրով։ Այդպիսով հայոց թագաւորին միւում է Մեծ Հայքն ու Հայկական Միջագետքը։

Բացի դրանից, Մեծն Տիգրանը պարտաւորւում


է հռոմայեցիներին վճարել պատերազմական ծախքերը՝ մօտ 6000 տաղանտ (9 միլիօն րուբլի)։

Պոմպէոսը երիտասարդ Տիգրանին էլ տալիս է Ծոփաց աշխարհը՝ իբրև վարձատրութիւն իր մատուցած դաւաճան ծառայութիւնների։ Նա պայման է դնում, սակայն, որ այդ երկրում եղած գանձերը Մեծն Տիգրանին յանձնուեն, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ 6000 տաղանտի խոշոր գումարը հռոմայեցիներին վճարել։

Դաւաճան որդին խիստ դժգոհ մնալով իր սատացածից, մինչև իսկ խրոխտանում է Պոմպէոսի դէմ, որը դայրացած շղթայում է նրան ու պահում իր մօտ։

Երբ պարթևաց թագաւորը լսում է այդ, միջամըտում է իր փեսի համար ու մեծ փրկանք է խոստանում. սակայն հռոմայեցի զօրավարը նրան պատասխանում է, թէ՝ «որդու վրայ հայրը աւելի մեծ իրաւունքներ ունի՝ քան անները»։

Այս փառաւոր յաղթութիւններից յետոյ, Պոմպէոսը վերադառնում է Հռոմ, իր հետ տանելով շղթայակապ թագաւորազն Տիգրանին և նրա կնոջն ու աղջիկներին (64 թ. Ք. ծ. ա.)։



Նկ. 8. Արտաւազդի դրամը։

Դրանից յետոյ Մեծն Տիգրանն ապրում է դեռ էլի 8 տարի։ Նա մեռնում է 56 թուականին Քրիստոսի ծնունդից առաջ, թողնելով Հայաստանի գահը իր դրագէտ և բանաստեղծ Արտաւազդ որդուն։

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ

Մեծն Տիգրանը շարունակ պատերազմներ մղելու հետ, միաժամանակ շատ մեծ հոգ էր տանում Հայաստանի բարեկարգութեան մասին։

Հայաստանը թէև բնական շատ հարստութիւններ ունէր, բայց հայ ժողովուրդը դեռ շատ յետ էր մնացել հարևան ազգերից և Հայաստանում շատ քիչ էին զարգացած արհեստները, վաճառականութիւնն ու ճարտարապետութիւնը։

Հայաստանի ամենալաւ քաղաքներն ու նրանց մէջ եղած տաճարները, ինչպէս նաև թագաւորական հոյակապ պալատները շինուում էին օտարազգի ճարտարապետների ու վարպետների ձեռքով։ Այսպէս ամենատաճարիկ ու գեղեցիկ Արտաշատ մայրաքաղաքը շինել էր Արաքսի ափին, օտարազգի յայտնի զօրավար Հաննիբալի ծրագրով և յոյն ճարտարապետների ղեկավարութեամբ։

Մեծն Տիգրանը, հէնց այդ յետաճնաց դրութիւնից իր երկիրը դուրս բերելու նպատակով էլ, բազմաթիւ ժողովուրդներ էր գաղթեցնում Հայաստան։

Այդ գաղթականներին նա առատ հող էր նւիրում և շատ արտօնութիւններ տալիս, որպէսզի նրանց միջոցով Հայաստանը մշակւի, շէնանայ և լուսաւորւի։

Հայոց թագաւորը մեծ նշանակութիւն էր տալիս մանաւանդ յոյն, ասորի և հրէայ գաղթականներին, որոնք այն ժամանակւայ ամենալուսաւոր և զարգացած ազգերն էին։

Նա անապատներում թափառող վրանաբնակ շատ արաբներ էլ բնակեցնելով Հայկական Միջագետքում սոիպել էր նոտատկաց կեաք վարել։ Արաբները մեծ մասամբ վաճառականութեամբ էին պարապում։

Մեծն Տիգրանը մեծ արժէք տալով յունական կրթութեանը, յոյն ուսուցիչներ էր բերել տեւել իր զաւակներին կրթելու համար։ Նա նոյնը պահանջում էր անել և ազնւականներից։

Այդ կրթութեան շնորհով Տիգրանի Արտաւազդ որդին լաւ գրագէտ և բանաստեղծ էր դառել։ Պատմում են, որ նա յունարէն լեզուով թատերգութիւններ և ուրիշ շարադրութիւններ է գրել։

Հայոց թագաւորը մինչև իսկ յոյն դերասաններ էր հրաւիրել, որոնք արքունական պալատումներկայացումներ էին տալիս։

Տիգրանակերտ

Մեծն Տիգրանի փայլուն գործերից մէկը պիտի համարել Տիգրանակերտի շինութիւնը։ Այդ քաղաքն էլ յոյն ճարտարապետների և օտարազգի վարպետների ձեռքով էր շինւել։

Երբ Տիգրանը սկսում է Հայաստանի հարաւ-արևմտեան երկիրները նւաճել, ուզում է որ իր մայրաքաղաքը այդ երկիրներին աւելի մօտ և իր ընդարձակ թագաւորութեան կենտրոնում լինի։ Այդ նպատակով էլ նա Տիգրիս գետի վրայ մի նոր քաղաք է հիմնում, որ իր անունով Տիգրանակերտ է կոչւում։

Տիգրանակերտն իր ահռելի մեծութեամբ յիշեցնում էր Բաբելոնի և Ասորեստանի նախկին վիթխարի քաղաքները։ Նա շրջապատւած էր 50 կան-

գուն բարձրութեան աղիւսէ պարիսպներով, որոնք այնչափ հաստ էին, որ նրանց մէջ կարելի էր լինում ձիերի համար ախոռներ տեղաւորել։

Քաղաքը շատ գեղեցիկ էր ու հարուստ։ Նա զարդարւած էր ամեն տեսակ շքեղ շինութիւններով ու քանդակներով։ Քաղաքի մէջտեղում շինւած էր բերդը, իսկ պարիսպներից դուրս՝ թագաւորական պալատը։ Այս վերջինը շրջապատւած էր շքեղ պարտէզներով, արհեստական անտառներով և ընդարձակ աւազաններով։

Տիգրանը առաջնակարգ հայ ազնւականներին սոիպել էր իրանց ընտանիքով տեղափոխւել նոր մայրաքաղաքը, սպառնալով հակառակ դէպքում գրաւել նրանց բոլոր կալւածները։

Տիգրանակերտի բնակիչների մեծ մասը օտարազգի դաղթականներ էին կազմում, որոնք մեծ արտօնութիւններ էին վայելում։

Ընդամէնը 25 տարւայ ընթացքում Հայաստանի նոր մայրաքաղաքի բնակիչների թիւը հասել էր 300,000-ի։

Տիգրանակերտի բնակիչները, մանաւանդ ազնւական և հարուստ դասը, չափազանց փարթամ կեանք էին վարում։ Այդ բանում նրանք կարծես թէ մրցում էին իրար հետ։

Ուզելով միմեանց գերազանցել, բնակիչները աւելի ու աւելի էին զարդարում Տիգրանակերտը իրանց գեղեցիկ ու շքեղ ապարանքներով, պալատներով և այլ հոյակապ շէնքերով։

Այդ վիթխարի և փառաւոր քաղաքից այժմ ոչ մի հետք չէ մնացել։ Նա դեռ Մեծն Տիգրանի կենդանութեան ժամանակ կիսաւեր էր եղել հռոմայեցիների ձեռքով։

Մեծն Տիգրանի անձնական կեանքը

Տիգրանակերտում ամենից շքեղ ու ամենից փարթամ կեանք էր վարում հէնց ինքը, Արքայից-արքան։

Մեծն Տիգրանն իր վարք ու բարքով չափազանց նման էր իրանից առաջ եղած՝ ցուփ ու շռայլ կեանք վարող բռնակալ արևելեան թագաւորներին։ Նրա շռայլութեանն ու փառասիրութեանը չափ ու սահման չը կար։

Տիգրանն իր տարած յաղթութիւններով այն աստիճան էր զօռոզացել, որ սակսել էր գահընկէց արած թագաւորներին և իշխաններին իր մօտ պալատական ծառաների պաշտօն վարել։ Դրանցից չորս հոգի պարտաւոր էին միշտ «Արքայից Արքայի» մօտ ճիաւ՝ իբրև թիկնապահներ։

Երբ նա ձիով ճանապարհ էր գնում, այդ թագաւորազն թիկնապահները պէտք է ոտքով վազէին նրա առջևից. իսկ երբ Տիգրանը գահի վրայ էր նըստած լինում, նրանք ձեռները կրծքներին խաչաձև դրած՝ կանգնում էին նրա առջև։

Նա պահանջում էր ժողովրդից, որ իրան աստըծու տեղ ընդունեն և աստծուն վայել փառաբանութիւններ անեն։

Իր խիստ ու զօռոզ բնաւորութեամբ, Տիգրանը ոչ միայն հակաճառութիւն չէր սիրում, այլ և բարկանում էր, երբ նրան մի որ և է անախորժ լուր էին հաղորդում։ Շատ անգամ այդպիսի լուր հաղորդողներին նա գլխատել էր տալիս։

Այդպիսի բնաւորութեան պատճառով, հայոց թագաւորը համարեա թէ ոչ մի անկեղծ և մտերիմ բարեկամ չունէր։ Պալատականներն ու իշխանները նրան չէին սիրում, այլ աշխատում էին ամեն կերպ շողոքորթել, հաճելի լինելու համար։ Նրան չէին սիրում նոյնիսկ իր հարազատ զաւակները, որոնցից մէկը, ինչպէս տեսանք, դաւաճանեց և պատճառ եղաւ նրա վերջնական դժբաղտութեան։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԻԳՐԱՆԻՑ ՅԵՏՈՅ

Հայաստանը Մեծն Տիգրանից յետոյ, այլևս չէ կարողանում այնպիսի զօրութեան ու մեծութեան հասնել, ինչպիսին ունեցել էր նրա օրով։

Նա ճիշտ է մի թոյլ ու տկար տէրութիւն, երկու զօրաւոր հարևանների մէջև։ Այդ հզօր հարևաններն էին՝ մի կողմից հռոմէական կայսրութիւնը, իսկ մեւս կողմից՝ պարթևական տէրութիւնը։

Դրանցից ամեն մէկը ձգտում է իր տիրապետութեան տակ պահել Հայաստանը և իր ուզած թագաւորին հաստատել նրա գահի վրայ։ Հայաստանը մի կատարեալ կռւախնձոր է դառնում այդ երկու տէրութիւնների ձեռքում և մինչև հարկատու ճիշտ կամ մէկին և կամ մեւսին։

Հայ թագաւորները անկարող լինելով իրանց հզօր հարևանների գերիշխանութիւնից ազատել, ամեն հնար գործ են դնում, որ գոնէ օտար լուծը թեթևացնեն։ Այսպէս՝ երբ պարթևներն են սկսում չափից դուրս նեղել հայերին, նրանք դիմում են հռոմայեցիների օգնութեան և նրանց միջոցով աշխատում թեթևացնել իրանց վիճակը. իսկ երբ հռոմայեցիների լուծն է չափից դուրս ծանրանում, հայ թագաւորները պարթևների օգնութեանն են դիմում։

Սակայն պէտք է ասած, որ հայերը մինչև քրիս-

տոնէութիւն ընդունելը շատ աւելի բարեկամ էին պարթևներին, քան հռոմայեցիներին։

Շատ հին ժամանակից ի վեր հարևանները լինելով, հայերն իրանց սովորութիւններով, նիստ ու կացով համարեա թէ չէին տարբերւում պարթևներից։ Նրանք միևնոյն կրօնն էին դաւանում և շատ ազգակցական ու խնամիական կապերով կապւած էին միմեանց հետ։

Բացի դրանից՝ Մեծն Տիգրանի սերունդը վերջանալուց յետոյ, Հայաստանում միևնոյն պարթևական Արշակունեաց տոհմն էր թագաւորում։ Թէ պարթևաց և թէ Հայաստանի թագաւորները թէ և Արշակունիներ էին կոչւում, սակայն երրորդ դարի վերջերում (ք. ծ. յ.) մի քանի նշանաւոր դէպքեր են տեղի ունենում, որոնք շատ աւելի դժւարացնում են հայոց գործերը։

Պարսիկներ, որ երկար ժամանակ պարթևների հպատակներն էին, երրորդ դարում օգուտ քաղելով պարթևական արքունիքում տեղի ունեցած ներքին խռովութիւններից, ապստամբում են։ Նրանք գահընկէց են անում Արշակունիներին և պարթևական գահի վրայ հաստատում պարսիկ Սասանեան տոհմը։ Դրանից յետոյ հայ և հարևան թագաւորական տոհմերի ազգականութիւնը վերանում է և նրանց մէջ խիստ թշնամութիւն է առաջանում։

Մօտաւորապէս նոյն թւականներին քրիստոնէութիւնը պաշտօնական կրօն է դառնում թէ հռոմէական կայսրութեան մէջ և թէ Հայաստանում, որը նոյնպէս մեծ ազդեցութիւն է գործում հարևանների յարաբերութիւնների վրայ։

ՀԱՅԵՐԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԸ

Աստւածները

Հայերը հնումը կառավարչական կրօն էին դաւանում։ Նրանք ոչ թէ մէկ, այլ շատ աստւածներ էին ընդունում ու պաշտում։

Այդ աստւածներն էլ մի քանի աստիճանների էին բաժանւում. նրանց մէջ կային գլխաւորներն ու երկրորդականները։ Բացի դրանից՝ կային արական և իգական սեռի աստւածներ։

Հայերի գլխաւոր աստուածը կոչւում էր Արամազդ, որը երկնքի ու երկրի ստեղծողն էր համարւում։ Արամազդը ամենակարող էր. նա— էր մարդկանց պարգևում աշխարհի բոլոր բարիքները։

Միւս բոլոր աստւածները Արամազդի որդիքն էին համարւում։

Արական սեռի աստւածներից նշանաւոր էին նոյնպէս Միհրը որ արևի ու կրակի աստւածն էր, և Վահանը, որ քաջութեան և յաժի աստւածն էր։

Իգական սեռի աստւածներից նշանաւոր էին Անահիտը, որ կանացի բոլոր առաքինութիւնների աղբիւրն ու հայ ազգի փառքն էր կարծւում, Աստղիկը որ գեղեցկութեան աստւածուհին էր։

Անահիտը ամենից շատ սիրւած ու պաշտւած աստւածուհին էր Հայաստանում։ Նրա մասին այն կարծիքը կար, թէ նա ոսկի մարմնով է ծնւել։ Այդ պատճառով էլ նրա արձանները մեծ մասամբ ոսկուց էին շինում. նա կոչւում էր Ոսկեմայր։

Շատ մեծ յարգանք էր վայելում նաև վահագնը։ Նրա մասին աշուղները բազմաթիւ երգեր էին յօրինել, որոնց մէջ գովում ու փառաբանում էին վահանի ծնունդը ծովից ու արևից, ինչպէս և նրա կատարած բազմաթիւ առասպելական քաջագործութիւնները։



Նկար 5։ Անահիտ։

Բոլոր աստուածների անունով Հայաստանի զանազան տեղերում մեհեաններ—տաճարներ էին շինւած, որոնց մէջ դրւած էին նրանց արձանները։ Այդ տեղերում տարւայ որոշ օրերին ժողովուրդը ուխտագնացութեան էր գնում և քուրմերի միջոցով զոհ մատուցանում։

Ուխտատեղիներ

Ուխտագնացութեան կողմից շատ նշանաւոր էր Վանատուրի Դիք անունով տաճարը, որ նշանակում է Վանատուրի աստւածներ։ Այդ տաճարը գտնւում էր Բագրեւանդի (այժմ Ալաշկերտի) գաւառում, Բագաւան անունով գիւղում (Բագաւան նշանակում է աստւածների գիւղ)։ Այդ տաճարի Տօնը տեղի էր ունենում օգոստոս 10-ին, որ հայկական տոմարի նոր տարին էր։ Այդ տօնը կոչւում էր նաև Ծաղիկների տօն կամ Վարդավառ, որ կայ մինչև այսօր էլ։

Ներկայումս Վանատուրի Դիք անունով տաճարի տեղ՝ գտնւում է Սուրբ Յովհաննէս անունով մի եկեղեցի, որ շինել է տւել Ս. Գրիգոր Լուսաւորիչը։

Այժմեան հայկական վանքերի և ուխտատեղիների նման, կռապաշտական մեհեաններին ևս կից շինւած էին ընդարձակ բնակարաններ ուխտաւորներին ընդունելու համար։

Ուխտաւորները հին ժամանակներում, ինչպէս այսօր էլ Հայաստանի շատ տեղերում վաճառանոցների դեր էլ էին կատարում։ Մարդիկ զանազան կողմերից այդտեղ էին բերում իրան ունեցած մթերքները կամ ապրանքներ և առևտուր էին անում։

Ուխտատեղիները միևնոյն ժամանակ ընդհանուր զարճութեան ու զբօսանքի վայրեր էին։ Ուխտաւորները այդ տեղերում երգում, նւագում, պարում էին. ժողովրդական երգիչները և աշուղները մրցութիւններ էին սարքում։

III

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Հայերը կռապաշտական կրօնը թողել և քրիստոնէութիւն են ընդունել սրանից մօտ 1600 տարի առաջ՝ Արշակունի Տրդատ թագաւորի օրով։

Հայ պատմիչները հետևեալն են պատմում այդ նշանաւոր դէպքի մասին։

Երբ Պարսից Սասանեան տոհմը հաստատւում է պարթևական գահի վրայ, բնաջինջ է անում այդ երկրում թագաւորող Արշակունիների ցեղը։

Սասանեանները մտածում են Հայաստանում թագաւորող Արշակունիներին էլ ոչնչացնել, որպէսզի այնտեղ էլ թագաւորեցնեն իրանց մարդկանց։

Այդ նպատակին հասնելու համար, Սասանեան Արտաշիր թագաւորը կաշառում է Անակ անունով մի Պարթև իշխանի և նրա ձեռքով սպանել է տալիս հայոց Արշակունի Խոսրով թագաւորին, իսկ նրա ամբողջ ընտանիքն էլ կոտորել է տալիս։

Այդ կոտորածից ազատւում են միայն Խոսրովի մանուկ որդին՝ Տրդատը և Խոսրովիդուխտ աղջիկը։ Տրդատին Արտաւազդ Մանդակունի նախարարը Հռոմ է փախցնում, իսկ Խոսրովիդուխտին՝ Օտա Ամատունի

նախարարը թագաւորական դանձերի հետ, տանում, պահում է Անի ամրոցում։

Խոսրովի սպանող Անակին ու նրա ամբողջ ընտանիքին էլ հայ նախարարներն են կոտորում։ Այդ ընտանիքից կենդանի է մնում միայն Գրիգոր անունով մի երեխայ։ Նրան ազատում է իր դայեակը, որ փախցնում ու տանում է Կեսարիա։

Կեսարիայում այդ ժամանակ քրիստոնէութիւնը բաւական տարածւած էր։ Գրիգորն այնտեղ մեծանում և դաստիարակւում է քրիստոնէական ոգով։ Նա ամուսնանում և ունենում է երկու զաւակ, Վրթանէս և Արիստակէս անուններով, որոնք նոյնպէս քրիստոնէական կրթութիւն են ստանում, այն ինչ՝ Հռոմ փախցրած թագաժառանգ Տրդատը մեծանում ու կրթւում է կռապաշտական ոգով, միևնոյն ժամանակ վարժւելով զինուորական արուեստի մէջ։ Նա հռոմայեցոց մղած մի քանի պատերազմներին մասնակցում և մեծ անուն է հանում։

Հռոմէական կայսրը կամենալով Հայաստանը պարսից տիրապետութիւնից ազատել և իր ազդեցութեանը ենթարկել, հայոց երիտասարդ թագաժառանգին մեծ զօրք է տալիս և ուղարկում Հայաստան։

Երբ Տրդատը Հայաստանի սահմաններին է հասնում, Արտաշիրի հալածանքներից փոքր-Ասիա փախած հայ նախարարները գալիս ու հաւաքւում են իրանց թագաւորի շուրջը։

Օտա Ամատունին դիմաւորում է Տրդատին և յանձնում նրան թագաւորական դանձերն ու Խոսրովիդուխտ քրոջը։

Այդ միջոցին Տրդատի պալատական ծառայողների մէջն էր գտնւում նաև Անակի որդին՝ Գրիգորը։

Նա կեսարիա եղած ժամանակ արդէն բաժանւել

էր իր կնոջից, որն իր վրթանէս որդու հետ կուսանոց էր քաշուել, իսկ ինքը Տրդատի մօտ ծառայութեան էր մտել։ Լսած լինելով, որ իր հայրն է սպանել Տրդատի հօրը, նա կամեցել էր այդպիսով իր հօր մեղքը քաւել։

Տրդատը Հայաստանի հողի վրայ ոտք դնելով, գոհունակութեան աղօթք է կատարում Երիզա քաղաքում և գոհ մատուցանում Անահիտ դիցուհու արձանին։

Հէնց այդ ժամանակ Տրդատը իմանում է, որ Գրիգորը քրիստոնեայ է։ Միաժամանակ նրան իմաց են տալիս, որ նա իր հօրն սպանող Անակի որդին է։ Տրդատը սաստիկ զայրանում է և հրամայում Գրիգորին ամենախիստ պատիժների ենթարկել ու տանել, գցել Արտաշատի Խորվիրապ բանտը։

Հռոմէական զօրքի օգնութեամբ Տրդատը Հայաստանի թագաւոր դառնալուց յետոյ, ամենակատաղի հալածանք է սկսում քրիստոնեաների դէմ։

Քրիստոնէութիւնը Հայաստանում

Քրիստոնէութիւնը Տրդատից դեռ շատ առաջ էր մուտք գործել Հայաստան և բաւական մեծ թիւով հետեւողներ գտել հայ ժողովրդի մէջ։

Հայ պատմիչների ասելով, քրիստոնէութեան առաջին քարոզիչները Հայաստանում եղել են Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները։ Սրանք շատ հալածանքների են ենթարկուել հայ իշխանաւորների կողմից և նահատակուել իրանց հետեւողներից շատերի հետ միասին։

Հալածանքները, սակայն, չկարողացան քրիստոնէութիւնը արմատախիլ անել։ Ընդհակառակը քրիս-

տոնեաների թիւը գնալով աւելի ու աւելի շատանում էր Հայաստանում։ Ժողովրդի ատորին խաւերը, որ դարեր շարունակ տանջուել ու ճնշուել էին իշխանաւորներից, մեծ սիրով էին հետևում նոր կրօնի քարոզիչներին։

Այդ թշուառները արդէն հիասթափուել էին կռապաշտական աստուածներից։ Նրանք դարերից ի վեր շատ էին աղօթել այդ աստուածներին, որ իրանց ազատեն իշխանաւորների ծանր լուծից, բայց նրանց բոլոր աղօթքներն ու մատուցած զոհերը անհետևանք էին մնացել։ Ընդհակառակը՝ քանի գնում իշխանաւորների ոյժն աւելի մեծանում և հասարակ ժողովրդի լուծն էլ աւելի էր ծանրանում։

Տանջուող ժողովուրդը քրիստոնէական քարոզիչներից լսելով, թէ կայ մի ուրիշ՝ աւելի զօրաւոր Աստուած, որը պիտի հանդերձեալ կեանքում վարձատրէ զրկուածներին ու պատժէ զրկողներին, երես էր դարձնում պաշտած նախկին աստուածներից և քրիստոնէութեան մէջ փնտրում մխիթարութիւն ու փրկութիւն։

Թէև նոր կրօնը ընդունելով մարդիկ աւելի խիստ տառապանքների էին ենթարկուում, բայց համբերութեամբ տանում էին այդ տանջանքները։ Նրանք հաւատում էին, որ այդ բոլորը ժամանակաւոր են միայն, և որ իրանք պիտի վարձատրուեն մշտնջենական երջանկութեամբ։

Առաջին քրիստոնեաները Հայաստանում, թագաւորների ու նախարարների հալածանքներից ստիպուած՝ գաղտնի էին պահում իրանց նոր կրօնը։ Աղօթելու համար, նրանք հաւաքուում էին անտառներում, քարայրներում և ուրիշ ծածուկ տեղեր։

Քրիստոնեաների դէմ Տրդատի սկսած հալածանք-

նների ժամանակ, Հռոմից մի խումբ քրիստոնեայ կոյսեր են գալիս Հայաստան։ Նրանք Հռոմից փախչելով, յոյս ունէին Հայաստանում հանգիստ գտնել։ Խումբը՝ Գայիանէ, Հռիփսիմէ և Շողակաթ կոյսերի առաջնորդութեամբ՝ գալիս թագնւում է Վաղարշապատի հնձաններում։ Սակայն Տրդատը բոլորին էլ գտնել է տալիս և հրամայում է սպանել։

Այսպէս շատ ու շատ քրիստոնեաներ նահատակելուց և շատ անմեղ արիւն թափելուց յետոյ, Տրդատը յանկարծ խղճահարութեան մէջ է ընկնում և երկար ժամանակ տանջւելով խելագարւում է։

Տրդատի հիւանդութիւնը մեծ ցաւ է պատճառում նրա Խոսրովիդուխտ քրոջը, որ շարունակ իր սիրելի եղբօր բժշկութեան մասին էր մտածում։

Այդ ծանր մտածմունքների ազդեցութեան տակ, Խոսրովիդուխտը մի քանի անգամ երազ է տեսնում։ Երազում մի ծերունի ասում է նրան, որ Տրդատին կարող է բժշկել միմիայն Խորվիրապում բանտարկւած Գրիգորը։

Այդ երազներից սիրտ առած՝ Խոսրովիդուխտը հրամայում է Գրիգորին բանտից ազատել։ 14 տարւայ բանտարկութիւնից յետոյ, Գրիգորին հանում են Խորվիրապից և բերում Վաղարշապատ։

Պատմում են, որ Գրիգորը մի քանի անգամ աղօթում է հիւանդ Տրդատի գլխին և նա բժշկւում է։

Այդ անսպասելի բժշկութիւնից յետոյ Խոսրովիդուխտը, Տրդատը, իր Աշխէն կինը և բոլոր պալատականները Գրիգորի ձեռքով մկրտւում են ու քրիստոնէութիւն ընդունում։

Այդ ժամանակից բոլոր քրիստոնեաներին իրաւունք է տրւում նոր կրօնը ազատութեամբ դաւանելու և նա դառնում է Հայաստանի պաշտօնական կրօնը (301 թ. Ք. ծ. յ.)։

Ս. Գրիգորի եւ Տրդատի գործունէութիւնն ու մահը

Քրիստոնէութիւնը Հայաստանում պաշտօնական կրօն հռչակւելուց յետոյ, Գրիգորը բազմաթիւ ասորի և յոյն քահանաներ ու քարոզիչներ է բերել տալիս, հայերի մէջ նոր կրօնը տարածելու համար։ Ինքն էլ անձամբ մաև է գալիս Հայաստանի զանազան կողմերը, քանդել է տալիս կռապաշտական մեհեանները, ջարդում հին աստւածների արձանները և նրանց տեղ եկեղեցիներ շինում։

Առաջին եկեղեցին Հայաստանում շինել է այն տեղում, ուր Գրիգորի աղօթքով բժշկւել էր Տրդատ թագաւորը։ Այդ եկեղեցին, որ Գրիգորն անւանել է Ս. Էջմիածին, մինչև այսօր էլ կայ Վաղարշապատում։

Նահատակւած կոյսերի աճիւնները էլ հաւաքելով, Գրիգորն ու Տրդատը երեք գերեզմանների մէջ են ամփոփում ու նրանց վրայ մի-մի մատուռ կառուցանում։ Այդ մատուռները կոչւում են Հռիփսիմէ, Գայիանէ և Շողակաթ։

Դրանից յետոյ, Գրիգորը մեծ շուքով գնում է Կեսարիա և այնտեղ 13 յոյն եպիսկոպոսներից կաթողիկոս ձեռնադրւելով, վերադառնում է Հայաստան։

Այդպիսով Գրիգորը Հայաստանի առաջին հայրապետն է դառնում։

Այնուհետև հայոց Հայրապետն ու թագաւորը սկսում են իրանց երկիրը արտաքին թշնամիներից պահով դարձնելու մասին հոգ տանել։

Ներանք այլևս բոլորովին երես դարձնելով հեթանոս պարսիկներից, աշխատում են մօտիկ բարեկամութիւն հաստատել իրանց կրօնակից բիւզանդական կայսրութեան հետ։



Նկար 10. Ս. Էջմիածին

Տրդատի ժամանակակից հռոմայեցոց Կոստանդին

կայսրը, դեռ հայոց թագաւորից առաջ էր ընդունել քրիստոնէութիւնը և թոյլ տւել իր կայսրութեան մէջ նոր կրօնը ազատ դաւանել։ Միևնոյն ժամանակ Կոստանդինը իր մայրաքաղաքը Հռոմից փոխադրել էր Բոսֆորի ափին գտնուող Բիւզանդիոն քաղաքը, որ վերջը նրա անունով կոչւեց Կոստանդնուպօլիս։



Նկար 11 Տրդատը վրաց և ապաղաց թագաւորների հետ

Դրա օրով հռոմէական ընդարձակ կայսրութիւնը երկու մասի է բաժանւում, Արևմտեան մասը մնում է իր նախկին Հռոմ մայրաքաղաքով, իսկ արևելեանը կոչւում է Բիւզանդական կայսրութիւն։

Ահա հէնց այդ Կոստանդին կայսեր հետ է, որ հայոց կաթողիկոսն ու թագաւորը մտածում են սերտ բարեկամութիւն հաստատել։

Ներանք մեծ հանդիսաւորութեամբ գնում են Կոստանդնուպօլիս, ուր շատ փառաւոր և սիրալիր ընդունելութիւն են գտնում բիւզանդական կայսրի և յոյն հոգևորականութեան կողմից։ Այնտեղ ներանք Կոստան-

դինի հետ բարեկամական դաշն կապելով, վերադառնում են Հայաստան։

Ծերուքեան հասակում Գրիգորն իր Արիստակէս որդուն է յանձնում Հայաստանի կաթողիկոսութիւնը, իսկ ինքը քաշւում է մի այրի մէջ ճգնելու։ Նա վախճանւում է 332 թ.։ Քրիստոնէական եկեղեցին նրան սուրբերի դասն է դասել, և նա կոչւեց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ։

Պատմում են, որ ծերուքեան հասակում Տրդատն էլ է քաշւել այրի մէջ ճգնելու և նրան թունաւորել են հայ նախարարները։

Հայաստանը քրիստոնէութիւնից յետոյ

Հակառակ Լուսաւորչի ու Տրդատի ջանքերի, քրիստոնէութիւնը Հայաստանում ընդարձակ չափով չէր տարածւում։ Դարերով դաւանած կրօնից ու սովորութիւններից հրաժարւելը շատ էլ հեշտ բան չէ։ Այդ պատճառով էլ շատ տեղերում ժողովուրդը ապստամբում և կռւի էր մղում քրիստոնէութիւն տարածողների դէմ։

Հին կրօնից հրաժարւելը շատ դժւար էր մանաւանդ քուրմերի համար, որոնք զրկւում էին տաղին եկամուտներից և ունեցած բարձր դիրքերից։ Հէնց դրա համար էլ նրան գրգռում էին ժողովրդին, և զօրք հաւաքելով՝ երկար ժամանակ կռիւ էին մղում թագաւորի դէմ։ Քրիստոնեաները քուրմերին ու նրանց զօրքերին անւանում էին դևեր։

Նախարարներից շատերը նոյնպէս շուռով չեն ընտելանում նոր կրօնին։ Նրանք երկար ժամանակ չէին կարողանում հրաժարւել իրանց հին սովորութիւններից, ինչպէս օրինակ՝ բազմակնութիւնից։

Այդ պատճառով էլ Հայաստանի թագաւորների և նախարարների միջև անվերջ գժտութիւններ են ծագում։ Նոր ու հին կրօնի կողմնակիցները խիստ թշնամաբար են վերաբերւում միմեանց ու շարունակ կռիւներ մղում իրար դէմ։

Հայ նախարարներն այլևս իրանց թագաւորներին առաջւան պէս չեն հնազանդում։ Նրանք շատ անգամ ամրանում էին իրանց անառիկ բերդերում և կռւում թագաւորի դէմ։

Հեթանոսական կրօնի կողմնակից նախարարները թագաւորներից պահանջում էին, որ նրանք անպայման պարսիկ տէրութեան հետ բարեկամութիւն պահպանեն։ Քրիստոնեայ նախարարներն էլ, ընդհակառակը՝ բիւզանդական կայսրութեան կողմնակիցները էին։

Բիւզանդական կայսրութեան հետ բարեկամ լինելու ամենամեծ կողմնակիցները հայ կաթողիկոսներն էին։ Նրանք հետզհետէ ահագին հարստութիւն և իշխանութիւն ձեռք բերելով, սկսել էին շատ մեծ դեր խաղալ երկրի գործերի մէջ։ Կաթողիկոսները այլևս չէին բաւականանում սոսկ կրօնական պետ լինելով, այլ աշխատում էին իրանց ազդեցութեանն հնթարկել թէ թագաւորներին և թէ երկրի ամբողջ իշխանութեանը։

Այդպիսի պայմաններում շատ դժւար դրութեան մէջ էին ընկնում հայ թագաւորները։ Նրանք շատ անգամ չէին իմանում ինչպիսի դիրք բռնել, որպէսզի նախարարներից մի կամ միւս մասը, կաթողիկոսի հետ միացած, չը թշնամանային իրանց դէմ։

Այդ պատճառով էլ երկրի ներքին խռովութիւններից ազատ պահելու համար, թագաւորները ամէն

կերպ աշխատում էին պարսիկների և յոյների միջև եղած կռիւները չը խառնել։

Սակայն այդ նրանց չէր յաջողւում, որովհետև կռիւները գլխաւորաբար հէնց Հայաստանին սիրաշնալու պատճառով էին, ուստի հայ թագաւորները, իրանց երկրից բոլորովին չը զրկւելու համար, ստիպւած էին կուսողներից մէկի կամ միւսի կողմը բռնել։

Այդ անտանելի վիճակից դուրս գալու համար, Տրդատի յաջորդները մեծ ջանք են գործ դնում թագաւորի իշխանութիւնն այնպէս զօրեղացնելու, որ հնարաւորութիւն ունենան իրանց ուզած ձևով վարել երկրի գործերը։

Նրանք մի կողմից խիստ մաքառում են կաթողիկոսների, իսկ միւս կողմից անհնազանդ և ըմբոստ նախարարների դէմ։

Այդ ներքին կռիւները շատ խիստ կերպարանք են ստանում մանաւանդ Արշակ II թագաւորի և Մեծն Ներսէս կաթողիկոսի օրով։

ԱՐՇԱԿ II ԵՒ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Արշակի դիրքը յոյների և պարսիկների հանդէպ

Արշակ II-րդը Արշակունի Տիգրան թագաւորի որդին էր։

Պարսիկ Շապուհ թագաւորը Տիրանին աչքերի լոյսից զրկելով, բնակեցրել էր Կուաշ աւանում։ Յետոյ կամենալով հայերի սիրտը շահել, նա թագաւորեցրել էր Տիրանի Արշակ որդուն։

Արշակ, թէև շատ փառասէր, բայց կամքի տէր մարդ էր։ Տեսնելով, որ Հայաստանը ներքին պատերազմներից սաստիկ թուլացել է և խաղալիք դարձել հարևան մեծ տէրութիւնների ձեռքում, նա մտածում է մի հնարք գտնել իր երկիրը այդ կացութիւնից փրկելու։

Արշակը խորհում է բոլորովին չխառնել յոյն-պարսկական կռիւներին և միանգամայն անկախ դիրք պահպանել։

Երբ Բիւզանդիայի կայսրն իմանում է Արշակի թագաւոր դառնալը, դեսպան է ուղարկում և առաջարկում բարեկամութեան դաշն կապել։ Արշակը, հակառակ Մեծն Ներսէսի խորհուրդների՝ հպարտութեամբ մերժում է կայսրի առաջարկը և անպատւելով՝ յետ է դարձնում դեսպաններին։

Կայսրը այդ անպատւութիւնից սաստիկ զայրացած, իսկոյն զօրք է ուղարկում Հայաստան Արշակին պատժելու։ Միևնոյն ժամանակ սպանել է տալիս Արշակի Տրդատ եղբօրը, որն իր գինել որդու և այլ իշխանազունների հետ գտնւում էր իր մօտ իբրև պատանդ։

Յունական զօրքի գալն իմանալով, Արշակը մեծ վախի մէջ է ընկնում։ Զուզելով սակայն պարսիկների օգնութեանը դիմել, միևնոյն ժամանակ չը վատահանալով անհնազանդ նախարարներին, նա չի էլ մտածում դիմադրութիւն ցոյց տալ, այլ դիմում է կաթողիկոսի միջնորդութեանը՝ որը խիստ յարգւած էր Կոստանդնուպոլսի արքունիքում։

Մեծն Ներսէսը գնում է Կոստանդնուպոլիս և հաշտութիւն խնդրում կայսրից։ Այս վերջինը զիջելով հայոց Հայրապետի թախանձանքներին, իր զօրքը յետ է կանչում Հայաստանից, ինչպէս և իր մօտ եղած բոլոր հայ-պատանդներին արձակելով, նրանց հետ իր ազգական Ոլիմպիադա օրիորդին էլ Արշակին կնութեան է ուղարկում։

Հայոց և յունաց միջև ստեղծած այդ բարեկամութիւնն այս անգամ պարսից Շապուհ թագաւորին է ստստիկ կատաղեցնում, որը պատրաստութիւններ է տեսնում Հայաստանի վրայ արշաւելու։

Հայոց թագաւորը, այս անգամ էլ չուզելով յոյների օգնութեանը դիմել, ստիպւում է Շապուհից էլ հաշտութիւն խնդրել։ Այս վերջինը, սակայն, պայման է դնում, թէ կը հաշտւի, եթէ միայն հայոց թագաւորը խոստանայ իրան օգնել՝ Բիւզանդիայի դէմ պատերազմելիս։

Արշակը ստիպւած է լինում խոստանալ, մտածելով թէ դուցէ կը կարողանայ մի կերպ խուսափել ուած խոստումից ու միաժամանակ բարեկամ մնալ թէ յոյներին և թէ պարսիկներին։

Սակայն այդ բանը նրան չի յաջողւում։

Շատ ժամանակ չանցած Շապուհը արշաւում է յոյների վրայ և հայոց թագաւորից էլ պահանջում է իր խոստումը կատարել։

Արշակը հիւանդ ձևանալով, հրաժարւում է անձամբ պատերազմի գնալ, բայց և իր խոստումը բոլորովին դրժած չը լինելու համար, մի փոքրիկ գունդ զօրք է ուղարկում Շապուհին օգնութեան։

Արշակի այս երկդիմի վարմունքը չէ վրիպում ոչ յոյների և ոչ էլ պարսիկների աչքից։ Երկու կողմն էլ Արշակին ուխտադրուժ և խոստմնազանց համարելով՝ մատնրւում են մի լաւ պատժել նրան։

Արշակի դիրքը նախարարների եւ կաթողիկոսի հանդէպ

Հզօր հարևաններից ոչ մէկի և ոչ միւսի հետ հաստատ դաշնակցութիւն չը կապելու ամենագլխա-

ւոր պատճառն այն էր, որ Արշակ II դը վստահ չէր նախարարների ու կաթողիկոսի միահամուռ աջակցութեան վրայ։ Նախարարներից մի մասը, կաթողիկոսի հետ միասին, անպայման Բիւզանդիայի դաշնակցութիւնն էին ցանկանում, իսկ միւս մասը՝ պարսիկներին։

Այդ անյարմար դրութիւնից դուրս գալու համար, Արշակն իր թագաւորութեան հէնց առաջին օրից խիստ մաքառումն է սկսում նախարարների իշխանութեան դէմ, որպէսզի նրանց ոյժը խորտակելով կարողանայ ինքնագլուխ կառավարել երկիրը։ Միևնոյն ժամանակ նա զօրեղ թափով կռւում է նաև կաթողիկոսական իշխանութեան դէմ, որն այդ ժամանակ շատ մեծ զօրութեան էր հասել և ստստիկ խանգարում էր թագաւորի ինքնիշխան գործելուն։

Արշակի ժամանակակից Մեծն Ներսէս կաթողիկոսի օրով, որը Ս. Գրիգոր Լուսաւորչի ստնմից էր, հայրապետական իշխանութիւնը, նրա պալատն ու վարած կեանքի շքեղութիւնը ոչնչով չէին տարբերւում թագաւորականից։

Մեծն Ներսէսը ամբողջ 15 ընդարձակ գաւառների տէր լինելով, ինքն իրան մի առանձին մեծ իշխանութիւն էր նկատում և ցանկանում էր, որ թագաւորը ամեն բանի մէջ իրան ենթարկւի և իր խորհրդով կառավարի երկիրը։

Իբրև ջերմեռանդ ու բարեպաշտ քրիստոնեայ, Մեծն Ներսէսը բոլորովին չէր համակրում պարսիկներին և ցանկալի էր համարում, որ հայերը միշտ դաշնակից ու բարեկամ մնան իրանց կրօնակից յոյներին։

Իր սկսած մաքառման ժամանակ Արշակը համարեա թէ կողմնակիցներ չունէր, որովհետև նա հա-

մահաւասար կերպով մաքառում էր թէ պարսիկների և թէ յոյների կողմնակից նախարարների ու կաթողիկոսի դէմ։

Այդ մաքառումը սկզբում շատ խուլ, իսկ վերջում խիստ սուր կերպարանք է ստանում։

Արշակը Արշակունի թագաւորների սովորութեան համաձայն, մի նոր քաղաք է հիմնում Մասիսի ստորոտում, որ և իր անունով կոչւում է Արշակաւան։ Նա յայտարարում է, թէ բոլոր յանցաւոր ճանաչուած մարդիկ, եթէ գան Արշակաւանում բնակուեն, անպատիժ կը մնան։

Այսպիսով նա ուզում է թէ իր նոր շինած քաղաքը շուտով բազմամարդ դարձնել և թէ մի կերպ նախարարներին պատժած լինել։

Եւ իրաւի, կարճ ժամանակում Արշակաւանը լցւում է նախարարներից ու ազնուականներից դժգոհ մնացած ամեն տեսակ մարդկանցով։

Քանի Արշակաւանը բազմամարդ է դառնում, այնքան էլ նախարարների կատաղութիւնն աւելանում է Արշակի դէմ, որովհետև այն մարդիկ, որոնք ցանկանում էին նրանց ճնշումներից ազատուել, փախչում գնում էին Արշակաւան։

Այդ անպատուութիւնը չկարողանալով տանել, նախարարները մտածում են մի լաւ վրէժ լուծել թէ Արշակից և թէ Արշակաւան քաղաքի բնակիչներից։

Թագաւորի և նախարարների այդ խուլ մաքառման ժամանակ, Արշակին յայտնում են, թէ նախարարները դաւադրութիւն են սարքել և ուզում են զահընկէց անել իրան ու իր տեղ Գնելին թագաւորեցնել։

Գնելը բիւզանդական կայսրի արձակած պատանդներից էր։

Սա հայրենիք վերադառնալով, գնաց բնակուեց իր կուրացած պապի՝ Տիրանի մօտ, ուր և ամուսնացաւ Փառանձեմ անունով մի գեղեցկուհու հետ։

Դաւադրութեան լուրն իմանալով, Արշակը սաստիկ կատաղում է։ Նա խաբէութեամբ ու կեղծաւորութեամբ որսի է հրաւիրում իր եղբօրորդի Գնելին և սպանել է տալիս։

Ցոյց տալու համար, թէ Գնելը սպանուել է ոչ թէ դիտմամբ, այլ պատահմամբ, Արշակ մեծը սուգ է անում։ Սակայն երբ սովորական սուգի օրերը անցնում են, նա քրիստոնէական օրէնքի հակառակ, ամուսնանում է իր եղբօրորդու՝ Գնելի կնոջ Փառանձեմի հետ։

Արշակի ընդհարումները կաթողիկոսի եւ նախարարների հետ։

Թէ Գնելի սպանութիւնը և թէ Փառանձեմի հետ ամուսնանալը կատաղի կերպով զայրացնում է համարեա թէ բոլոր նախարարներին, մանաւանդ Մեծն Ներսէսին։

Վշտացած Հայրապետը խիստ յանդիմանում է և անիծում նրան։

Արշակն էլ իր կողմից հրաժարեցնում էր Ներսէսին հայրապետական գահից և հրամայում նրա փոխարէն նոր կաթողիկոս ձեռնադրել Զունակ անունով անձին։

Պատմում են, որ հայ եպիսկոպոսները չեն համաձայնել Զունակին կաթողիկոս ձեռնադրել, բայց Արշակն օտար եպիսկոպոսների միջոցով իր ցանկութիւնն իրագործել է տալիս։

Մեծն Ներսէս հեռանում է վաղարշապատից և քաշւում է մի վանք։

Մեծն Ներսէսին հասցրած այդ անպատուութիւնը հայ ժողովրդին էլ է սաստիկ զայրացնում Թագաւորի դէմ։ Ներսէսն իր կաթողիկոսութեան օրով շատ բարեգործական հաստատութիւններ հիմնած լինելով Հայաստանում, ժողովրդի սէրն ու յարգանքն էր վայելում։

Այսպէս՝ հնուսմբ Հայաստանում սովորութիւն էր բորոտ և այլ վարակիչ հիւանդութիւն ունեցող մարդկանց դուրս հանել քաղաքներից ու գիւղերից և բոլորովին անհնար Թողնել խեղճերին։ Իսկ Մեծն Ներսէսը յատուկ գիւղեր էր շինել տւել, ուր բնակեցնում էին այդ կարգի հիւանդներին և պահում տէրութեան հաշւով։

Նա հիմնել էր ուրիշ շատ հիւանդանոցներ, որբանոցներ և այլ օգտակար հաստատութիւններ։

Մեծն Ներսէսի կարգադրութեամբ է նոյնպէս, որ արգելւել է հայերին իրանց աղգականների հետ ամուսնանալ, մի բան, որ մինչև այդ ժամանակ ընդհանուր սովորութիւն էր։

Սիրւած ու յարգւած Հայրապետին կաթողիկոսութիւնից հեռացնելուց յետոյ, նախարարները միացած ոյժերով յարձակւում են Արշակաւանի վրայ, ուր գտնւում էր նաև Թագաւորը։

Ներանք Արշակաւանի բոլոր բնակիչներին կոտորում և քաղաքն էլ հիմնայատակ են անում։

Արշակն իր Փառանձեմ կնոջն ու զանձերը առնելով, փախչում գնում է անառիկ Անի ամրոցը և այնտեղ պատսպարւում։

Արշակի Ոլիմպիադա կինը այդ ժամանակ արդէն մեռած էր։ Փառանձեմը կամենալով դլխաւոր Թագուհին դառնալ, մի քահանայի ձեռքով Թունաւորել էր տւել Ոլիմպիադային։

Պատմում են, որ այդ քահանան Թունաւորելու ուրիշ միջոց չգտնելով, հաղորդութեան մէջ Թոյն է խառնում և այդ ձևով կատարում Փառանձեմի կամքը։

Զվատահանալով, Թէ պիտի կարողանան իրանց սեփական ոյժերով անառիկ Անին առնել, նախարարները պարսից Թագաւորի օգնութեան են դիմում և նրանցից մի գունդ զօրք առնելով, գնում պաշարում են Անին։

Անին առնւում է։ Անօգնական-մնացած Արշակը հազիւ կարողանում է ազատւել նախարարների վրէժխնդրութիւնից և փախչում է Վրաստան։

Մի ամբողջ տարի հայրենիքից հալածական մնալուց յետոյ, Արշակը վրաց զօրքով վերադառնում է Հայաստան՝ իր գահին տիրանալու։ Նախարարները իսկոյն Ներսէհ կամսարական նախարարի առաջնորդութեամբ նրա դէմ են դուրս գալիս. մի կատաղի պատերազմ է սկսւում հայոց Թագաւորի ու նախարարների մէջև։

Պատերազմի վախճանը դեռ ևս բոլորովին չէ պարզած հայերը լուր են ստանում, Թէ յունական զօրքը արշաւում է Հայաստան։

Առտաքին և ընդհանուր Թշնամու երևալուն պէս Թէ Թագաւորը և Թէ նախարարները խելքի են գալիս և մոռանալով իրանց ներքին կռիւները, որոշում են հաշւել միմեանց հետ։

Այդ նպատակով պատգամաւորներ են ուղարկում Մեծն Ներսէսի մօտ, խնդրելով, որ գայ և իրանց ու Թագաւորի միջև միջնորդ հանդիսանայ։

Վշտացած Հայրապետը սկզբում Թէև մերժում է նախարարների խնդիրքը, բայց վերջը

զիջում է և դալիս հաշտեցնում նրանց։ Ձեն հաշտուում միայն Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան նախարարները։ Նրանք թողնում, հեռանում են Հայաստանից ու գնում ծառայութեան են մըտնում պարսից Շապուհ թագաւորի մօտ և իրանց կըրօնն էլ ուրանում։

Արշակի եւ Փառանձեմի ողբերգական մահը։

Նախարարների և կաթողիկոսի հետ հաշուեյուց և իր գահի վրայ վերստին հաստատուելուց յետոյ, Արշակը նամակ է տալիս Մեծն Ներսէսին և խնդրում, որ գնայ Կոստանդնուպոլիս, կայսեր հետ էլ հաշտութիւն կայացնի։

Ներսէսը ճանապարհ է ընկնում, իր հետ տանելով նաև Արշակի Պապ որդուն և մի քանի իշխանազուններին։

Նա գնում է նախ յունաց այն զօրապետի մօտ, որն այդ միջոցին իր զօրքով Հայաստան էր մտել ու մեծ աւերմունքներ էր գործում։ Այդ զօրապետը ծերունի հայրապետի թախանձանքներին զիջելով, զօրքն առած վերադառնում է Կոստանդնուպոլիս, տանելով նաև հայոց կաթողիկոսին ու նրա հետ եղած իշխանութիւններին։

Սակայն յունաց կայսրը հայոց թագաւորի երկդիմի ընթացքից չափազանց զայրացած լինելով, Ներսէսին իր մօտ չի ընդունում և Արշակի նամակն էլ չէ կարդում։ Նա մինչև իսկ հրամայում է Ներսէսի բերած բոլոր պատանդներին սպանել և իրան՝ Ներսէսին էլ աքսոր ուղարկել։

Պատանդներից կենդանի է մնում միայն Արշակի Պապ որդին։

Հակառակ իր բարկութեան՝ կայսրը երկրորդ անգամ այլևս զօրք չէ ուղարկում Հայաստան, և այսպէս Արշակը միաւորմամանակ ազատուում է դրսի թշնամիների յարձակումից։

Այդ միջոցին նա սկսում է կամաց-կամաց վրէժ լուծել բոլոր հակառակորդ ու անհնազանդ նախարարներից։ Զանազան միջոցներով նա հետզհետէ սպանել է տալիս և ոչնչացնում նրանցից շատ-շատերին և նրանց բոլոր կալւածները գրաւում։

Արշակը նամանաւանդ շատ խիստ վրէժ է առնում Ներսեհ Կամսարականից, որի ամբողջ ցեղը սրի են անցկացնում։ Այդ ցեղից կենդանի է մնում միայն Ներսեսի Սպանդարատ եղբօրորդին, որին մայրը փախցնում տանում է յունաց երկիրը։

Թագաւորից հալածած նախարարներից ոմանք Պարսկաստան են փախչում և Շապուհի մօտ ծառայութեան մտնում։ Նրանք ամեն կերպ գրգռում են Շապուհին, ասելով, որ Արշակը ձգտում է բոլորովին ինքնիշխան լինել և այլևս հարկ չը տալ ո՛չ պարսիկներին և ո՛չ էլ յոյներին։

Շապուհն էլ օգուտ քաղելով Հայաստանի ներքին անվերջ խռովութիւններից, մտածում է մի անգամից վերջ դնել հայկական թագաւորութեանը և նւաճելով այդ երկիրը՝ Պարսից տէրութեանը միացնել։

Նա խարէութեամբ Արշակին իր մօտ է հրաւիրում, արքայավայել պատիւներ է տալիս և ապա շղթայում և Անյուշ բերդում բանտարկում է։

Հայոց թագաւորին բանտարկելուց յետոյ, Շապուհը Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնեանի առաջնորդութեամբ մեծ զօրք է ուղարկում Հայաստան, ու նրանք ամեն կողմ սոսկալի սարսափ տարածելով, սկսում են հետզհետէ տիրել երկրին։

Նախարարներից մի քանիսը իզուր փորձում են դիմադրութիւն ցոյց տալ պարսիներին, ոմանք էլ իրանց ընտանիքներով փախչում են յունաց սահմանները և այնտեղ ապաստանում։

Թագուհի Փառանձեմն էլ է փախչում։ Նա մի խումբ հաւատարիմ մարդկանց հետ, թագաւորական գանձերը առած, ապաստանում է անառիկ Արտագերս բերդը, որը բաւական երկար պաշարումից յետոյ, առնւում է, և հայոց թագուհին էլ գերի բռնւում։ Փառանձեմին Մեհրուժանը խայտառակ կերպով ապահնել է տալիս։

Արշակն Անյուշ բերդում լսելով Հայաստանում տեղի ունեցած անցքերն ու իր սիրած թագուհու ողբերգական մահը՝ յուսահատութիւնից անձնասպան է լինում (382 թ.)։

Մեծն Ներսէսն ու Պապ թագաւորը

Բիւզանդիայի կայսրը Հայաստանի դէպքերը լսելով և չուզելով, որ պարսիկները ալրանան այդ երկրին, Արշակ II-րդի Պապ որդուն հայոց թագաւոր է նշանակում ու բազմաթիւ զօրքով ուղարկում հայրենի գահը ժառանգելու։

Պապի հետ Հայաստան է վերադառնում և Մեծն Ներսէսը, որն այդ ժամանակ արդէն վերադարձել էր աքսորից և կաթողիկոսութեան էր գնում։

Ճանապարհին հետզհետէ գալիս, Պապին են միանում նաև այն բոլոր նախարարները, որոնք փախել ապաստանել էին յունաց երկրի զանազան կողմերը։

Պարսից ու յունաց զօրքերը իրար հանդիպում են Նպատ լեռան մօտ, Ջիրաւ դաշտի վրայ։ Պատերազմը շատ կատաղի է լինում, բայց վերջը յաղթութիւնը Պապին օգնող զօրքերի կողմն է լինում։

Պատմում են, որ այդ կռւի ժամանակ մի խիստ քամի է բարձրացել դէպի պարսից բանակը, որի շնորհով պարսիկների նետերը կէս ճանապարհին վայր էին թափւում և հայոց բանակին չէին հասնում։

Պատմում են նաև, որ ամբողջ պատերազմի ընթացքում Մեծն Ներսէսը թագաւորի հետ, Նպատ լեռան գագաթին կանգնած աղօթում էր։

Պարսիկները փախչում են։ Փախչում է նոյնպէս նրանց հրամանատար Մեհրուժանը, որը ձիու վիրաւորած լինելու պատճառով յետ է մնում։

Սմբատ Բագրատունին ընկնելով Մեհրուժանի յետևից, հասնում ու բռնում է նրան և ապա շիկացրած շամփուրը նրա գլխին դնելով ծաղրով ասում է։ «Մեհրուժան, դու ցանկանում էիր հայոց թագաւոր դառնալ, ես ահա, իբրև թագադիր ասպետ, պսակում եմ քեզ»։

Մեհրուժանի գործակից Վահան Մամիկոնեանը իր դաւաճան ընկերից աւելի լաւ վախճան չէր ունեցել։ Նրան էլ, դեռ աւելի առաջ, սպանել էր իր հարազատ որդին՝ Սամւէլը։

Այսպէս բիւզանդական զօրքի օգնութեամբ Հայաստանը պարսիկներից մաքրելով, Պապը հաստատւում է իր հայրենական գահի վրայ։

Դրանից յետոյ Բիւզանդական կայսրը կասկածելով, թէ Պապն էլ կարող է իր հօր նման անկախութեան ձգտել և կամ պարսիկների կողմը անցնել, իր զօրքի մի մասը թողնում է Հայաստանում՝ Պապի վրայ հսկելու նպատակով։ Այդ բանը հայոց երիտասարդ թագաւորին խիստ դայրոյթ է պատճառում, և նա օգուտ քաղելով կաթողիկոսի տեղի ու-

նեցող ներքին պատակառումներից, յարձակւում է յունական զօրքի վրայ ու դուրս քշում իր երկրի սահմաններից։

Պապի այդ վարմունքը նորից մեծ վիշտ է պատճառում Մեծն Ներսէսին, և նա դարձեալ սկսում է Թագաւորի գործերին խառնուել ու նրան յանդիմանութիւններ անել։

Թագաւորի և կաթողիկոսի յարաբերութիւնները հետզհետէ այն աստիճան են լարւում, որ Պապը վերջ ի վերջոյ գաղտնի կերպով թունաւորել է տալիս Հայրապետին։

Սակայն Պապ Թագաւորն էլ լաւ վերջ չէ ունենում։ Բիւզանդական կայսրը շուտով բազմաթիւ նոր զօրք է ուղարկում Հայաստան և հայոց Թագաւորն անզօր լինելով դիմադրելու, գերի է ընկնում ու տարւում Կոստանդնուպոլիս։ Այնտեղ կայսրը Պապին գլխատել է տալիս (388 թ.)։

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

Տառերի գիւտը

Հայաստանում երկար ժամանակ քրիստոնէութիւնն չտարածւելու գլխաւոր պատճառն այն էր, որ եկեղեցական արարողութիւնները ու ժամերգութիւնը կատարում էին ոչ թէ հայերէն, այլ օտար լեզուներով։

Հայերը դեռ սեփական տառեր չունէին, ուստի և անկարող էին սուրբ գիրքն ու ժամերգութիւնը հայերէն թարգմանել։ Բոլոր հայ վարդապետները, եպիսկոպոսները ու կաթողիկոսները իրանց ուսումը առնում էին ասորերէն կամ յունարէն լեզուներով։

Հայ ժողովուրդը այդ լեզուներին անծանօթ լինելով, ոչինչ չէր հասկանում քրիստոնէական եկեղեցու արարողութիւններից, ուստի և շատ էլ տաք չէր վերաբերւում թէ եկեղեցուն և թէ կրօնին։

Այդ բանը շատ մեծ ցաւ էր պատճառում հայ հոգևորականութեանը։ Նրանք երկար ժամանակ մտածում էին մի հնար գտնել, որպէսզի կարելի լինի այդ խոչնդոտը վերացնել։

Այդ հնարը, վերջապէս, գտնում է Մեսրոպ Մաշտոց առնով մի վարդապետ։

Մեսրոպն իր ժամանակի ամենաուսումնական վարդապետներից մէկն էր։ Նա շատ հմուտ էր թէ ասորոց, թէ յունաց և թէ պարսից լեզուներին։ Դեռ երիտասարդ հասակում նա հայոց արքունիքում դիւանադպրի պաշտօն էր վարել, իսկ յետոյ, այդ պաշտօնից հրաժարւելով կրօնաւոր էր դառել։ Իբրև քարոզիչ, նա երկար ժամանակ շրջել էր Հայաստանի զանազան կողմերը և փորձով տեսել, թէ հայերէն տառեր չունենալը որքիսի մեծ արգելք է քրիստոնէութեան տարածւելուն։

Մեսրոպի մէջ միտք է ծագում հայերէն լեզուի համար յատուկ տառեր յօրինել, որպէսզի կարելի լինի մայրենի լեզուով թարգմանել Աստուածաշունչն ու կրօնական այլ գրւածքները։ Բայց մի լեզուի համար նոր տառեր հնարելը շատ էլ հեշտ բան չէ. դրա համար անհրաժեշտ է երկար աշխատանք և գիտութիւն։

Մեսրոպն իր դիտաւորութեան մասին յայտնում է հայոց կաթողիկոսին և նրանից օգնութիւն խնդրում։

Այդ ժամանակ Հայաստանի կաթողիկոսն էր Մեծն Ներսէսի թոռը՝ Սահակը, որ մի շատ լուսամիտ և հայրենասէր մարդ էր։ Սա մեծ համակրանքով է վերաբերւում Մեսրոպի դիտաւորութեանը։ Իր կողմից

դիմում է Վռամշապուհ Թագաւորին և նրա հրամանով յայտնի նախարարներից ու հոգևորականներից վաղարշապատում մի մեծ ժողով է գումարում։

Այդ ժողովի որոշմամբ, Մեսրոպին օժանդակութիւն է տրւում, որպէսզի նա աշխատի իրագործել իր նպատակը։

Մեսրոպը գնում է Ասորիք (Սիրիա), իսկ յետոյ Յունաստան և այնտեղի մատենադարաններում երկու տարի շարունակ աշխատելուց յետոյ, վերադառնում է Հայաստան, հետը բերելով հայկական այն տառերը, որ մենք մինչև այսօր էլ գործ ենք ածում։

Հայկական տառերի գիւտը մի այնպիսի սքանչելի գործ էր, որ հայ ժողովուրդը նրան մի աստուածային պարգև է համարում։

Ո ս կ է դ ա ր

Մեսրոպ Մաշտոցը, հայկական տառերը դանելուց յետոյ, իր մօտ մի քանի հայ հոգևորականներ է հաւաքում ու նրանց հայերէն կարդալ-գրել է սովորեցնում։ Յետոյ՝ Մեսրոպն ու աշակերտները, Սահակ կաթողիկոսի աջակցութեամբ Աստուածաշունչը թարգմանում են հայերէն։ Հետզհետէ նրանք թարգմանում են նաև մի շարք եկեղեցական գրքեր և այնուհետև սկսում են ժամերգութիւնը կատարել հայերէն լեզուով։

Մայրենի լեզուով եկեղեցական արարողութիւնները կատարելը շատ մեծ գարկ է տալիս քրիստոնէութեան տարածելուն Հայաստանում։ Ժողովուրդը իր հարազատ լեզուվը լսելով եկեղեցական արարողութիւնները, այլևս չէ խրտչում եկեղեցուց, այլ ընդհակառակ, աւելի ու աւելի է կապւում նրա հետ։ Այդպիսով քրիստոնէութիւնը սկսում է խոր արմատներ բռնել ժողովրդի մէջ և նրա համար մի շատ սիրելի կրօն է դառնում։

Եկեղեցական գրքերը թարգմանելու հետ միաժամանակ, Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպը, Վռամշապուհ Թագաւորի աջակցութեամբ, Հայաստանի զանազան կողմերում, վանքերին ու եկեղեցիներին կից, բազմաթիւ դպրոցներ են բացում, որոնց մէջ ժողովրդի զանազան խաւերից հաւաքւած աշակերտներին կարդալ, գրել և ժամերգութիւն են սովորեցնում։

Այդ դպրոցներից առաջին տեղը բռնում էր Վաղարշապատի դպրոցը, որը մի տեսակ ուսուցչանոց էր և ուր ուսուցիչներ էին պատրաստւում միւս դպրոցների համար։

Սակայն կաթողիկոսն ու Մեսրոպը ընտրում են 40-ի չափ ընդունակ աշակերտներ և ուղարկում արտասահման. Ալեքսանդրիա, Աթէնք և Կոստանդնուպոլիս, իրանց ուսումը կատարելագործելու։

Դրանից առաջ էլ հայ երիտասարդները գնում էին արտասահման, ուսում առանալու, բայց այդ ժամանակ հայերէն գիր չլինելու պատճառով, նրանք իրանց մայրենի լեզուով ոչ մի գրական աշխատանք չէին կարող կատարել։

Ալեքսանդրիայի, Աթէնքի և Կոստանդնուպոլսի բարձրագոյն դպրոցներում հայ ուսանողները սովորում էին Աստուածաբանութիւն, ճարտասանութիւն, պատմութիւն ու փիլիսոփայութիւն։ Սահակի և Մեսրոպի ուղարկած և նրանցից յետոյ արտասահման գնացող հայ ուսանողները թէ ուսում էին առանում և թէ միևնոյն ժամանակ յունարէնից գրքեր էին թարգմանում։ Հայաստան վերադառնալով, նրանք ամեն կերպ աշխատում էին իրանց հայրենիքում էլ տարածել յունական ուսման և գիտութեան լոյսը։

ուսումնական հայ վարդապետները միմիայն թարգմանութիւններ կատարելով չէին բաւականանում, նրանք ինքնուրոյն շատ շարադրութիւններ էլ էին գրում, մեծ մասամբ կրօնական և պատմական բովանդակութեամբ։

Տառերի գիւտով և յունական կրթութեան ազդեցութեամբ, հայերը հետզհետէ դուրս են գալիս իրանց նախկին բարբարոսական դրութիւնից և մտնում լուսաւորութեան ու քաղաքակրթութեան շաւղի մէջ։ Դրա համար էլ 5-րդ դարը մեր պատմութեան մէջ կոչւում է *Ոսկէ դար*։

Սահակ կաթողիկոսին ու Մեսրոպ Մաշտոցին հայկական եկեղեցին սուրբերի դասն է դասել, և նրանք կոչւում են սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ։

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պարսիկների ձգտումները

Մեսրոպեան տառերի գիւտի միջոցին, Հայաստանի թագաւորական իշխանութիւնը չափազանց խախուտ վիճակի մէջ էր գտնւում։

Բիւզանդական կայսրները ու պարսից թագաւորները, իրանց անվերջ պատերազմներով ու յաճախակի արշաւանքներով, բոլորովին ուժասպառ էին արել Հայաստանը։

Այդ բանին պակաս չէին նպաստում և՛ նախարարների ներքին կռիւները ու ըմբոստացումները, որ երբէք չէին դադարում։

Հայ թագաւորները, իրանց յենակէտը կորցրած, ջրի մէջ ընկած տաշեղի նման, շարունակ երերում էին երբեմն պարսիկների, երբեմն յոյների կողմը։

Այդ դրութիւնը վերջանում է նրանով, որ հայկական տառերի գիւտից 26 տարի յետոյ, Հայաստանը բաժանւում է Պարսկաստանի և Բիւզանդիայի միջև ու այդպիսով վերջ տրւում Արշակունեաց թագաւորութեանն ու Հայաստանի անկախութեանը (432 թ.)։

Այնուհետև Հայաստանի մեծ մասը պարսից տէրութեան մ նահանգն է դառնում և կառավարւում է պարսից թագաւորների նշանակած յատուկ պաշտօնեաների ձեռքով, որոնք կոչւում էին *մարզպաններ*։

Մարզպանները լինում էին յաճախ պարսիկներ, երբեմն էլ հայ նախարարներից նրանք, որոնք աւելի հաւատարիմ էին պարսիկներին։

Այդպիսի նախարարների թիւը, սակայն, գնալով աւելի ու աւելի պակասում էր Հայաստանում։ Հայկական տառերի գիւտից յետոյ, որքան աւելի էր տարածւում յունական կրթութիւնը և քրիստոնէութիւնն էլ խոր արմատներ ձգում, այնքան էլ հայերը աւելի էին հեռանում պարսիկների ազդեցութիւնից։

Պարսիկների հովանաւորութիւնն ու բարեկամութիւնը գերադասող էին այն հայերը միայն, որոնք սահմանակից էին նրանց և կամ երկար ժամանակ նրանց հետ խառն էին ապրել։ Այդ հայերը չափազանց շատ ընտելացած լինելով պարսկական սովորութիւններին ու նիստ ու կացին, չէին կարողանում շուտով երես դարձնել իրանց դարաւոր հարևաններից։

Պարսիկները շատ լաւ էին նկատում, թէ ինչպէս հայերի համակրութիւնը աւելի ու աւելի է թեքւում յոյների կողմը։ Այդ բանին միանգամից վերջ դնելու և Հայաստանը ընդմիշտ Պարսկաստանի ազդեցութեան տակ պահելու համար, պարսից Յազկերտ II-րդ

թագաւորը մտածում է հայերին կրօնափոխ անել և պարսկական կրօնն ընդունել տալ։

Պարսիկները այն ժամանակ Զրադաշտի կրօնն էին դաւանում։ Նրանց գերագոյն Աստուածը համարւում էր արեգակը։ Եւ որովհետև կրակին էլ արեգակի նման իր շուրջը լոյս և ջերմութիւն էր տարածում, ուստի կրակն էլ էին պաշտում։

Պարսիկները սկզբում փորձում են մեղմ միջոցներով առաջ տանել իրանց նպատակը։ Նրանք իրանց համակրող հայ նախարարներին մեծ պատիւների են արժանացնում և բարձր պաշտօնները տալիս. մինչդեռ յոյների կողմնակիցներին աշխատում են հեռու պահել ամեն տեսակ պաշտօններից։ Բացի դրանից, նրանք հետզհետէ աւելացնում են հայ ժողովրդից առնուող հարկերը և սկսում հարկ հաւաքել նոյնպէս եկեղեցականներից, որ մինչև այդ ժամանակ մի չտեսնուած բան էր։

Այդպիսի միջոցներով պարսիկները աշխատում էին նախ թափել այնչափ ճնշել հայերին, որ նրանք իրանց թշուառութեան պատճառը քրիստոնէութեան մէջ տեսնելով, հետզհետէ կրօնափոխ լինէին։

Յազկերտի զրոյցը եւ հայերի պատասխանը

Յազկերտն ու իր գլխաւոր խորհրդական Միհրներսէհը, տեսնելով, որ ձեռք առնուած մեղմ միջոցները շատ էլ չեն ազդում հայերի վրայ, որոշում են աւելի կարուկ միջոցների դիմել։

Նրանք իրանց մոգպետի ձեռքով մի ընդարձակ թուղթ են գրում հայոց Յովսէփ կաթողիկոսին ու նախարարներին և առաջարկում կրակապաշտութիւն ընդունել։

Այդ գրութեան մէջ նրանք խիստ կերպով յանդիմանում էին քրիստոնէութիւնը և աշխատում ապացուցել, թէ պարսկական կրօնը շատ մեծ առաւելութիւններ ունի։

Այդ գրութիւնը ստանալով, Յովսէփ կաթողիկոսը խիստ ժողով է հրաւիրում հայ նախարարներից ու եկեղեցականներից։ Ժողովը իր կողմից նոյնպէս մի ընդարձակ պատասխան է գրում։ Նրա մէջ մեծ մի ցոյց տալով քրիստոնէութեան ճշմարտութիւնը, հայերը յայտնում են, թէ իրանք ոչ մի կերպ չեն փոխի իրանց կրօնը և պատրաստ են մեռնել քրիստոնէութեան համար։

Հայերի յանդուգն պատասխանը սաստիկ զայրացնում է պարսից թագաւորին։ Նա հրաման է ուղարկում, որ հայոց նախարարները խիստ իր մօտ գնան։ Սրանք չը համարձակւելով դէմ կենալ թագաւորի կամքին՝ գնում են։ Գնալուց առաջ նախարարները խօսք են տալիս կաթողիկոսին, որ հաստատ պիտի մնան իրենց հաւատի վրայ։

Յազկերտի մօտ գնացող նախարարներից ամենադլխաւորներն էին Սիւնեաց Վասակ իշխանը, որ այդ ժամանակ Հայաստանի մարզպանն էր, սպարապետ Վարդան Մամիկոնեանը և ուրիշները։

Վասակն ու Վարդանը

Վասակը մի խելօք, լուսամիտ և փառասէր մարդ էր։ Դեռ երիտասարդ հասակում, նա Մեսրոպ Մաշտոցին ամեն կերպ օգնել էր, որ Սիւնեաց երկրում պղծութիւնը բանայ ու կրթութիւն տարածի։ Միևնոյն ժամանակ Վասակը շատ ընդունակ վարչական մարդ լինելով՝ ժողովրդից խիստ սիրած էր։

Սիւնեաց երկիրը Պարսկաստանին սահմանակից լինելով, Վասակը շատ աւելի մեծ համակրութիւն էր տածում դէպի պարսիկները, քան դէպի յոյները։

Նա այնպիսի կարծիքի էր, թէ հայերին աւելի ձեռնտու է պարսիկների գերիշխանութեան տակ մնալ, քան յոյների։ Վասակը յոյս ունէր, թէ պարսիկների հաւանութեամբ կարելի կը լինի նոյնիսկ վերականգնել Հայաստանի թագաւորութիւնը։

Նա մինչև անգամ երազում էր, թէ հէնց ինքը կը դառնայ Հայաստանի թագաւորը, քանի որ Միհրըներսեհի շատ մօտիկ բարեկամը լինելով, նա մեծ պատիւների էր արժանացել պարսից արքունիքի կողմից և այժմ էլ արդէն Հայաստանի մարզպանն էր։

Մամիկոնեան Վարդանն իր համոզումներով ու հայեացքներով Վասակի ճիշտ հակառակն էր։ Իրրև շատ ջերմեռանդ քրիստոնեայ, նա պարսիկներին չէր սիրում ու իր ամբողջ համակրանքը Բիւզանդիայի կողմն էր։ Բացի դրանից՝ նա հաւատի ու կրօնի խնդիրը բոլոր քաղաքական նկատումներից բարձր էր դասում։

Իրրև շատ քաջ և պատերազմական գործերին հմուտ մարդ, Վարդանը հայոց զօրքերի սպարապետ էր կարգւած։

Հէնց իրանց հայեացքների տարբերութեան պատճառով՝ Վարդանն ու Վասակը խիստ հակառակորդներ էին միմեանց։

Նախարարների կրօնափոխութիւնն ու վերադարձը

Հայ նախարարներին պարսից արքունիքում ոչ միայն սովորական պատուով չեն ընդունում, այլ և Յազկերտը սպառնում է, որ եթէ իր կամքը չը կատարեն, ամենախիստ տանջանքների կենթարկւեն և Հայաստանն էլ քարուքանդ անել կը տայ։

Նախարարները երկար տատանուելներից յետոյ, որոշում են, իրանց անձն ու հայրենիքը անխուսափելի պատուհասից փրկելու համար, երեսանց կրօնափոխ լինել։

Այդ իմանալով, պարսիկները սաստիկ ուրախանում են և առատ պարգևներ են տալիս նրանց։

Նախարարները Յազկերտին խոստանում են իրանց հայրենիքը վերադառնալով, հայ ժողովրդին էլ կրօնափոխ անել տալ։ Պարսից թագաւորը նրան մեծ թւով զօրք ու մոգեր տալով, վերադարձնում է Հայաստան։ Մոգերը պէտք է պարսկական կրօնը սովորեցնէին հայ ժողովրդին և եկեղեցիները քանդելով, նրանց տեղ կրակապաշտական մեհեաններ շինէին։ Հասկանալով, սակայն, թէ մի գուցէ նախարարները դրժեն իրանց խոստումը, Յազկերտը Վասակի երկու որդիներին իր մօտ պատանդ է պահում։

Նախարարների կրօնափոխ լինելու լուրը Հայաստան էր հասել դեռ նրանց վերադարձից առաջ։ Ամբողջ ժողովուրդն ու հոգևորականները սաստիկ յուզւել էին։ Երկիրը մի ալեկոծւած ծովի էր նմանում, երբ նախարարները մոգերի հետ Հայաստան են մըտնում։

Հէնց առաջին հայկական գիւղում, ուր նրանք ոտք են դնում, կատաղի դիմադրութեան են հանդիպում։ Ժողովուրդը, Ղևոնդ անունով մի ալեզարդ քահանայի առաջնորդութեամբ, վայտերով ու բահ ու բրիչով յարձակւում է պարսիկների վրայ (450 թ.)։

Նախարարները ժողովրդի զայրոյթից թէ վախեցած և թէ ոգևորւած, շուտով անցնում են ապստամբների կողմը և Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ դուրս քշում պարսիկներին Հայաստանից։

Պարսիկները այդ միջոցին ուրիշ պատերազմով զբաղւած լինելով, անկարող են լինում հայերից խլկոյն վրէժ առնել։ Հայերն էլ օգտւելով այդ հանգամանքից, առանց ժամանակ կորցնելու, պատգամաւոր-

ներ են ուղարկում բիւզանդական կայսրին, խնդրելով, որ շուտով օգնութեան հասնի։

Կայսրը թէև խոստանում է զօրք ուղարկել, բայց ինքն էլ ուրիշ պատերազմների բռնուած՝ ոչինչ չէ կարողանում անել։

Միևնոյն ժամանակ հայերը դիմում են նաև Հայաստանի բիւզանդական մասում գտնուող հայ իշխաններին և նրանց էլ օգնութեան են կանչում, սակայն սրանք էլ չեն գալիս։

Վասակի ընթացքը

Հայերին դուրսից օգնութիւն չը գալու պատճառը մասամբ էլ Վասակն էր։ Նա էլ իր կողմից էր նամակները գրել բիւզանդական կայսրին և այն կողմում ապրող հայ իշխաններին, հաւատացնելով թէ պարսիկները բոլորովին չեն էլ մտածում հայերին կրօնափոխ անել, այլ թէ հայերն են կամենում պարսիկներից ապստամբել։

Միևնոյն ժամանակ, իբրև երկրի մարզպան, Վասակը սկսում է խիստ հալածանքի ենթարկել բոլոր հոգևորականներին և այն նախարարներին, որոնք աշխատում էին ժողովրդին պարսիկների դէմ գրգռել։

Նա ամեն կերպ աշխատում է մանաւանդ Վարդան Մամիկոնեանին վնասել, որն այդ ամբողջ շարժման ղեկավարն և ոգի ներշնչողն էր։

Այսպէս՝ օգուտ քաղելով այն բանից, որ Վարդանը մի փոքրաթիւ զօրքով Աղւանից երկրի սահմաններումն էր գտնուում, Վասակը լուր է ուղարկում պարսիկներին, որ շտապեն նրա վրայ յարձակուելու։

Պարսիկները յարձակուում են, բայց մեծ պարտութիւն կրելով, յետ են քաշւում։

Վարդանն էլ շտապում է Հայաստան, Վասակի հալածանքների առաջն առնելու։

Իրանց կրած ամօթալի պարտութիւնից յետոյ, պարսիկները աւելի են կատաղում։ Նրանք մի ամբողջ ձմեռ պատրաստութիւններ են տեսնում հայերին մի լաւ պատժելու։

Աւարայրի ճակատամարտը

Հայերը լսելով պարսիկների մեծ պատրաստութիւնը, իրանք էլ են պատրաստւում պատերազմի։ Նրանք ոչ մի տեղից օգնութիւն չը ստանալով, որոշում են իրանց սեփական ոյժերով դէմ դնել պարսից ահաւոր բանակին։

Զատկի օրերը նոր էին անցել, երբ հայերն իմանում են, թէ պարսից զօրքն արդէն Հայաստանի սահմանն է մտել ու ասպատակում է երկիրը։ Սպարապետ Վարդանը իսկոյն հրաւէր է ուղարկում նախարարներին, որ շտապեն իրանց զօրքերով հաւաքուել Արտաշատ քաղաքը։ Շուտով հաւաքւում են 66,000 հոգի։

Վարդանն Արտաշատում զօրահանդէս է կատարում, և զօրքի բոլոր պակասութիւնները լրացնելուց յետոյ, շտապում է պարսիկներին ընդառաջ գնալ։ Պարսից զօրքը արդէն հասել էր Արտազ գաւառը։ Հայկական զօրքն բանակ է դնում նրանց հանդէպ՝ Աւարայր դաշտում, Տղմուտ գետի ափին։

Հայոց բանակումն էին գտնւում Ցուլտէի կաթողիկոսը, Ղևոնդ քահանան և ուրիշ շատ եկեղեցականներ։ Պատերազմից առաջ Ղևոնդ երէցն ու վարդապետը կրակոտ և ոգևորիչ ճառեր են արտասանում, բացատրելով զօրքին այդ պատերազմի նշանակու-

թիւնը։ Լուսադէմին պատարագ է մատուցանուում. ամենքն էլ հաղորդուում են և խոստանում մինչև վերջին շունչը կռւել իրանց հաւատի համար։

Պարսիկները այդ պատերազմում փղեր էլ էին բերել։ Նրանք դուրս են բերում դրանց ու կանգնեցնում դաշտի երկայնութեամբ, ամեն մի փղի աջ ու ձախ կողմը 3000 զինուոր դնելով։

Վարդանը իր զօրքը չորս մասի է բաժանում և ամեն մի մասը մի նախարարի հրամանատարութեան յանձնում։ Չորրորդ մասն էլ Վարդանն իր հրամանատարութեան տակ է առնում և կանգնում պարսից բանակի աջ թևի դիմաց։

Պատերազմը սկսում է նետաձգութեամբ, զետի երկու կողմից։ Հայերը Վարդանի խրախուսանքով անցնում են զետը և յարձակում պարսից բանակի աջ թևը։ Պարսիկների մէջ շփոթութիւն է ընկնում, սակայն շուտով վրայ է հասնում նրանց պահեստի զօրքը և պատերազմը նորոգուում է։

Վարդանն իր ընկերներով շրջապատուում է պարսիկներից և, քաջաբար երկար կռւելուց յետոյ, բոլորն էլ ընկնում են պատերազմի դաշտում։

Դրանով էլ վերջանում է պատերազմը, որ տեւել էր ամբողջ օրը (451 թ. յունիսի 2.)։

Այս պատերազմում հայերի կողմից ընկածների ամբողջ թիւը 1036 հոգի էր։ Դրանց մէջ, բացի Վարդան Մամիկոնեանից, կային և ուրիշ շատ նշանաւոր նախարարներ։

Այդ պատերազմի և նրա մէջ ընկած հերոսների յիշատակը մինչև այսօր էլ ոգևուում է բարեկենդանի վերջին հինգշաբթի օրը։

Աւարայրի ճակատամարտում յաղթելուց յետոյ, հայերը զինաթափ չեն լինում։ Նրանք քաշւում են իրանց անառիկ բերդերն ու ամրոցները և այնտեղից յարձակումներ գործելով, ահագին վնասներ են հասցնում պարսիկներին։

Այս պատերազմից յետոյ, պարսից արքունիքում համոզւում են, որ անհնարին է հայերին բռնութեամբ կրօնափոխ անել։ Յազկերտը յետ է կանչում իր զօրքը Հայաստանից և Վասակի տեղ նոր մարզպան նշանակում։ Նա կարգադրում է, որ հայերին թոյլ տան ազատ կերպով դաւանել իրանց կրօնը։ Միևնոյն ժամանակ նա վերացնում է այն բոլոր ծանր հարկերը, որ սովորականից դուրս դրել էին հայ ժողովրդի վրայ։

Յետոյ Յազկերտն իր մօտ է բերել տալիս Յովսէփ կաթողիկոսին, Ղևոնդ երէցին, Սիւնեաց Վասակին և ուրիշ շատ նախարարների ու եկեղեցականների, որոնց դէմ դատ է սկսւում պարսից արքունիքում։

Դատավարութեան ժամանակ շատ ամբաստանութիւններ ու չարաչոսութիւններ են լինում նաև Վասակի դէմ։ Զայրացած Յազկերտը զրկում է նրան բոլոր պատիւներից և բանտարկում։ Նոյնպէս բանտարկում և խիստ տանջանքների են ենթարկում Յովսէփ կաթողիկոսին, Ղևոնդ քահանային և մեծ բոլոր հայ եկեղեցականներին ու նախարարներին։ Դրանցից շատերը, որոնց թւում կաթողիկոսն ու Ղևոնդ քահանան, չդկարողանալով տանջանքներին դիմանալ, մեռնում են բանտում, իսկ ճշացածներն էլ, տասներկու տարուայ բանտարկութիւնից յետոյ միայն, ազատ են արձակւում և հայրենիք վերադառնում

(463 թ.)։ Վասակն էլ երկար հիւանդութիւնից յետոյ բանակի մէջ մեռնում է։

Երկրորդ կրօնական պատերազմը

Առաջին կրօնական պատերազմից յետոյ, պարսիկները ընդմիշտ չեն հրաժարւում հայերին կրօնափոխ անելու մտքից։ Շատ ժամանակ չանցած, նրանք նորից մտածում են մեղմ միջոցներով առաջ տանել իրանց նպատակը։ Մի կողմից նրանք թոյլ են տալիս հայերին ազատ կերպով դաւանել իրանց կրօնը, բայց միւս կողմից բոլոր արժանաւոր, ազնիւ ու քաջերեզաշտ մարդկանց հեռացնում են ամեն կարգի պաշտօններից, զրկում են պատիւներից և անարգանքների ենթարկում։ Բարձր պաշտօնների ու պատիւների արժանանում են այն հայերը միայն, որոնք համակերպւում ու գործիք են դառնում պարսից արքունիքին։

Այդ եղանակով պարսիկները այս անգամ բաւականին յաջողութիւն են ունենում, մօտ 30 տարւայ ընթացքում, շատ հայեր՝ թէ նախարարներից և թէ ժողովրդից՝ թողնում են քրիստոնէութիւնը և պարսից կրօնն ընդունում։ Հայերը սակայն քիչ յետոյ նորից են ղուրս բարձրացնում պարսիկների դէմ և սկսում մի շարք պատերազմներ, որ տևում են մի քանի տարի։

Այս երկրորդ կրօնական պատերազմների ժամանակ, հայկական զօրքի գլխաւոր հրամանատարն ու նրանց ոգի ներշնչողն էր Վահան Մամիկոնեանը, որը Վարդան Մամիկոնեանի եղբօրորդին էր։

Վահանն էլ Վարդանի պէս շատ քաջ և անվախ մարդ էր։ Նա շատ ծառայութիւններ էր մատուցել

պարսիկներին և նրանց սիրելին դառել։ Արքունիքի կատարեալ վստահութիւնը գրաւելու համար, նա մինչև իսկ գնացել էր պարսից մայրաքաղաքը՝ Տիզբոն, և այնտեղ հաւատափոխ էր եղել, բայց շուտով զղջացել էր և առիթ փնտրում իր յանցանքը քաւելու։

Եւ այդ առիթը շատ շուտով է ներկայանում։ Վրաստանում, որը նոյնպէս պարսիկների տերիշխանութեան տակ էր, ապստամբութիւն է ծագում։ Հանգամանքից օգտւելով, հայ նախարարներն էլ խորհուրդ են կազմում և, քաջ Վահանին իրանց սպարապետ ընտրելով, ապստամբում են (481 թ.) ու պատերազմ յայտարարում պարսիկներին։

Այս պատերազմների մէջ Վահանն իր փոքրաթիւ զօրքով շատ քաջագործութիւններ է կատարում և անագին ճնշաներ հասցնում թշնամուն։ Պարսիկները վերջապէս ստիպւում են հաշտութիւն կնքել Վահանի հետ։ Վահանը հետևեալ երեք պայմաններն է առաջարկում. 1. Քրիստոնէութիւնը պէտք է օրինաւոր և ազատ կրօն ճանաչւի Հայաստանում և ոչ մի հայի չըպիտի սահպան կրօնափոխ լինել։ 2. Արժանաւոր ու անարժան մարդկանց մէջ տարբերութիւն պիտի դրւի. անարժան ու անպիտան մարդկանց չըպիտի պաշտօններ ու պատիւներ տրւեն, իսկ արժանաւորները հալածւեն։ 3. Թագաւորը չըպէտք է հաւատ ընծայի ամեն կարգի չարամիտ մարդկանց ամբաստանութիւններին, այլ ամեն ամբաստանութիւն պէտք է ինքն անձամբ քննի և այնպէս դատաստան անի։

Պարսիկներն ուրախութեամբ ընդունում են այս բոլորը. պայմանները։ Նրանք այլևս հրաժարւում են հայերին կրօնափոխ անելու մտքից և բաւականանում են նրանցից վերցած սովորական հարկով (484 թ.)։

Այնուհետև Վահան Մամիկոնեանը մի քանի խո-

շոր ծառայութիւնները է մատուցանում պարսից արքունիքին, որոնց համար Թագաւորի սիրելին է դառնում և նշանակւում Հայաստանի մարզպան։

Կրօնական պատերազմներից յետոյ, Հայաստանը պարսից իշխանութեան տակ է մնում դեռ էլի մօտ մէկ ու կէս դար։

Բայց ահա եօթերորդ դարում, հեղեղի նման, իրանց քնիկ հայրենիքից դուրս են թափւում արաբները և արշաւում օտար երկիրներ գրաւելու։ Նրանք նւաճում են ամբողջ Պարսկաստանն ու նրա տիրապետութեան տակ եղած բոլոր երկիրները, որոնց թւում նաև Հայաստանը։

ԱՐԱԲՆԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ

Արաբները մահմեդականութիւնից առաջ

Մինչև եօթերորդ դարի սկիզբները արաբները ապրում էին Արաբիայում։ Նրանք զատ-զատ ցեղերի բաժանւած, բոլորովին նահապետական կեանք էին վարում։ Ամեն մի ցեղ ունէր իր ցեղապետը, որը ցեղին թէ պատերազմների էր առաջնորդում, թէ նրա դատաւորն էր և թէ կրօնապետը։

Այդ ցեղերից մի քանիսը դեռ շատ հին ժամանակներից նստակեաց կեանք էին վարում և ունէին շատ հարուստ ու ղեղեցիկ քաղաքներ, իսկ շատ ցեղեր էլ թափառական կեանք էին վարում։

Նստակեաց կեանք վարողները նշանաւոր էին իրանց վաճառականութեամբ, իսկ թափառաշրջիկները պարապում էին մեծ մասամբ աւազակութեամբ։

Իրանց ենկրի դիրքի շնորհով, արաբները վաճառականութեան միջնորդ էին հանդիսանում հարուստ Հնդկաստանի, Փոքր Ասիայի և Եգիպտոսի միջև։ Նրանց ուղտերի կարաւանները էին տեղափոխում այդ երկիրների բոլոր ապրանքները, որոնք յաճախ ճանապարհին կողոպտւում էին նոյն արաբների աւազակային խմբերի կողմից։

Արաբների այդ անջատ ցեղերը ոչ մի ընդհանուր կապ չունէին միմեանց մէջ։ Նրանցից ամեն մէկն իր առանձին բարբառովն էր խօսում և իր յատուկ կրօնը դաւանում, թէև բոլոր արաբներն էլ բնապաշտ էին, այսինքն՝ նրանք աստւածներ էին համարում արեգակը, լուսինը, աստղերը և բնութեան մէջ եղած զանազան երեւոյթները, բայց և այնպէս ամեն մի ցեղ իր առանձին կրօնական հասկացողութիւնները, սովորութիւններն ու իր յատուկ աստւածներն ունէր։



Նկար 12. Արաբ

Միակ բանը, որ այդ ցեղերին միմեանց հետ կապում էր, Մեքքէի մօտ գտնւած ուխտատեղին էր, ուր Արաբիայի բոլոր կողմերից, տարին միանգամ, բազմաթիւ արաբներ ուխտի էին գնում և հանդիսաւոր զոհ մատուցա-

նում: Այդ ուխտատեղում մի սև քարի կտոր կար, որի մասին արաբները ասում էին, թէ երկնքից է վայր ընկնել, ուստի նրա սուրբ լինելը ամենքն էլ ընդունում էին: Այդ քարը մինչև օրս էլ կայ Մեքքէում, ուր ուխտ են գնում մահմեդականները աշխարհի բոլոր ծայրերից:

Այդպէս իրարու հետ ոչ մի ընդհանուր կապ չունենալով, արաբական ցեղերը միմեանց խիստ թշնամաբար էին վերաբերում և շարունակ ու անվերջ պատերազմներ էին մղում:

Այդ արիւնահեղ պատերազմները տարւայ մէջ միայն մէկ ամիս էին դադար առնում: Դա այն ամիսն էր (Րամազան), երբ արաբները պէտք է ուխտ գնային Մեքքէ: Այդ ամսի ընթացքում ոչ միայն պատերազմներ չէին լինում, այլ և աւազակութիւնները անգամ դադարում էին, որպէսզի ուխտաւորները անհանգիստ չըլինէին:

Մուհամմեդ

Եօթերորդ դարի սկզբում, Մեքքէ քաղաքից Մուհամմեդ անունով մի արաբ, տեսնելով իր ցեղակիցների աւազակաբարոյ բնաւորութիւնը, շարունակ միմեանց կոտորելը, արբեցող ու անառակ կեանքը, մտածում է մի հնար գտնել նրանց ուղղելու և լաւ կեանքի վարժեցնելու:

Մուհամմեդը խելօք և զգայուն մարդ էր: Իբրև ուղտապան և վաճառական, նա շատ երկիրներ էր ման եկել և այն համոզման հասել, թէ արաբները կարող են ուղիղ ճանապարհի գալ, եթէ մէկ և ընդհանուր կրօն ունենան:

Այդպիսի համոզման գալով, Մուհամմեդը սկսում է մօտիկից ուսումնասիրել քրիստոնէական, մովսէսական և այլ կրօնները: Անգրագէտ լինելով, նա բերանացի է տեղեկութիւններ հաւաքում այդ կրօնների մասին այն բոլոր երկիրներում, ուր ինքն իբրև ուղտապան այցելում էր:

Իր ցեղակիցների համար մի նոր կրօն յօրինելուց մասին Մուհամմեդը այնչափ շատ խորն է մտածում, որ սկսում է կասկածել, թէ գուցէ ինքն էլ Մովսէսի ու Յիսուսի նման, Աստծու ուղարկած մի մարգարէ է:

Այդ կասկածը հետզհետէ հիւանդոտ Մուհամմեդի մէջ կատարեալ հաւատ է դառնում, որից յետոյ նա հրապարակ է գալիս և սկսում ժողովրդին իր նոր կրօնը համոզել:

Սկզբում արաբները նրան ծաղրում և խելագար են անւանում, բայց յետոյ նրա հետևողների թիւը հետզհետէ բազմանում է և Մուհամմեդին ճանաչում են Աստծու Մարգարէ:

Մուհամմեդի քարոզած կրօնը կոչւում է Մահմեդականութիւն կամ Իսլամ:

Իսլամը եւ նրա տարածելը

Իսլամը քարոզում է միաստուածութեան գաղափարը: Նա թէ Մովսէսին և թէ Յիսուսին Աստծու մարգարէներ է ընդունում, բայց դրանցից աւելի բարձր մարգարէ համարում է Մուհամմեդին:

Բացի կրօնական դաւանանքից, Իսլամը սովորեցնում է և շատ ուրիշ կանոններ և օրէնքներ, որոնց համաձայն Մուհամմեդի հետևողները պիտի կարգաւորեն իրանց առօրեայ ընտանեկան ու հասարակական կեանքը:

Իսլամի բոլոր ուսմունքները, որ Մուհամմեդի քարոզներն են համարւում, հաւաքել ու տպագրել են մի գրքի մէջ, որ կոչւում է Ղուրան:

Մուհամմեդը տեսնելով, որ իր քարոզած կրօնը արագութեամբ չի տարածւում, պատւիրում է իր հետևողներին, սրի ոյժով տարածել Իսլամը: Դրա շնորհով, Մուհամմեդի մահից շատ ժամանակ չանցած, Իսլամը արաբական ցեղերի միակ կրօնն է դառնում, Ղուրանի լեզուն, բոլոր ցեղերի միակ ազգային լեզուն, իսկ Մուհամմեդի յաջորդներն էլ նրանց թէ կրօնական և թէ քաղաքական պետն են դառնում: Այս վերջիններս կոչւում էին Խալիֆներ:

Այդպէս Իսլամի և մի ընդհանուր լեզուի միջոցով արաբական անջատ ցեղերը միանում և մի ընդհանուր տէրութիւն են կազմում: Յետոյ նրանք խալիֆների առաջնորդութեամբ, պատրաստ են գալի իրանց անապատ երկրի սահմաններից և գնում աւելի բարգաւաճ երկիրներ գրաւելու և օտար ազգերի մէջ Իսլամը սրի ոյժով տարածելու:

Արաբները կարճ ժամանակի ընթացքում նուաճում են Փոքր Ասիայի այն բոլոր երկիրները, որ մինչև այդ ժամանակ պարսից և բիւզանդական կայսրութեան տիրապետութեան տակ էին գտնուում։

636 թուականին նրանք մտնում են Պարսկաստան։ Մի քանի կատաղի կռիւներից յետոյ, պարսիկները յաղթուում, անձնատուր են լինում և ընդունում Իսլամը։

Պարսից Սասանեան ցեղի վերջին Յազկերտ երրորդ թագաւորը փախչում գնում է Ասիայի խորքերը։ Այդպիսով էլ վերջ է գտնում պարսից վաղեմի հզօր թագաւորութիւնը և Պարսկաստանը արաբական ընդարձակ և հզօր Խալիֆաթի մի նահանգն է դառնում։

Արաբները Պարսկաստանի սահմաններից էլ աւելի հեռու են գնում, թէ դէպի արևելք և թէ դէպի արևմուտք և մի շատ ընդարձակ տէրութիւն հիմնում։ Արաբական տէրութիւնը կոչւում էր Խալիֆաթ։

Իրանց նուաճումները չափազանց ընդարձակելով, արաբական խալիֆները իրանց մայրաքաղաքը Մեքքէից տեղափոխում են նախ Դամասկոս և ապա Բաղդադ քաղաքները։ Այդպիսով նրանք աւելի մօտենում են իրանց նուաճած երկիրներին և աւելի հեշտ կերպով նրանց կառավարում։

Տիրապետած երկիրներից ձեռք բերած ահագին հարստութիւնների շնորհով, այդ երկու քաղաքներն էլ կարճ ժամանակի մէջ, վաճառականութեան ու լուսաւորութեան մի-մի ծաղկած կենդրոններ են դառնում։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

640 թուականին արաբները մտնում են Հայաստան։ Հայերն էլ են փորձում դիմադրութիւն ցոյց տալ, բայց մեծ պարտութիւն են կրում։ Արաբները շատ անգթութիւններ կատարելով, 35 հազար մարդ գերի են առնում ու տիրում Հայաստանին։

Նրանք էլ պարսիկների նման անկարող են լինում հայերի մէջ իրանց կրօնը տարածել։ Արաբները բաւականանում են նրանով միայն, որ հայերը հնազանդ մնան Խալիֆի իշխանութեանը և կանոնաւորապէս հարկ վճարեն։

Այդ ժամանակից էլ Հայաստանը սկսում է կառավարուել խալիֆների նշանակած յատուկ պաշտօնեաների միջոցով, որոնք կոչւում էին Ոստիկան կամ Ամիրա։

Հայաստանը Արաբական տիրապետութեան տակ ընկնելուց յետոյ, դարձեալ կուախնձոր է ծուում երկու հզօր տէրութիւնների միջև։

Ինչպէս որ առաջ յոյներն ու պարսիկները էին շարունակ միմեանց դէմ պատերազմում Հայաստանին տիրապետելու համար, այժմ էլ նոյն յոյներն ու արաբները են կռիւներ մղում այդ նպատակով։ Հայերը, կամենալով իրանց վրայ ծանրացող լուծը թեթևացնել, այս անգամ էլ մերթ յոյների և մերթ արաբների օգնութեանն են դիմում։

Հայաստանը մօտ 200 տարի սոսկալի արհաւիրքների ասպարէզ է դառնում։

Արաբական սոսկալի արշաւանքներից, Հայաստանի տարեգրութեան մէջ ամենանշանաւորն է Կաշմոստիկանի առաջարկութեամբ տեղի ունեցածը (703 թէ 704 թ.)։

Այդ կատաղի արաբը, ուզելով հայերին մի լաւ դաս տալ, որպէսզի նրանք այլ եւս յոյների կողմը չանցնեն, հայ իշխաններին խաբէութեամբ կանչում է Նախիջևան և այնտեղ եկեղեցու մէջ բոլորին էլ այրում է։ Ցետոյ ասպատակներ է ուղարկում Հայաստանի զանազան կողմերը և ամեն տեղ կոտորած ու հրդեհ տարածում։

Այդ թուականը մեր պատմութեան մէջ յայտնի է Հրդեհի տարի անունով։

Հայկական նոր իշխանութիւնների երեւան գալը

Արաբական տէրութիւնը չափազանց ընդարձակուելով, IX-րդ դարում սկսում է հետզհետէ թուլանալ և դէպի անկում գնալ։ Խալիֆների նւաճած ընդարձակ երկիրներն ու բազմազան ազգերը սկսում են միմեանց յետևից բաժան-բաժան լինել և դառ տէրութիւններ կազմել։

Արաբների թուլութիւնից ուզում են օգտուել նաև հայերը։ Հայ իշխանները, Սևադա անունով պարսիկ իշխանի հետ խօսք մէկ անելով, ապստամբում են արաբների դէմ։ Սակայն ապստամբութիւնը չէ աջողուում. արաբները յաղթող են հանդիսանում և նոր թշւառութիւններ առաջացնում Հայաստանում։

Հայ իշխանները տեսնելով, որ անկարող են ապստամբութեամբ ազատուել արաբներից, փոխում են իրանց ընթացքը։ Նրանք այս անգամ աշխատում են հնազանդութեամբ և թանկագին պարգևներով սիրելի դառնալ խալիֆներին. ու հէնց նրանց հաւանութեամբ զօրեղացնել իրանց իշխանութիւնը։

Եւ այդ բանը նրանց յաջողւում է։ IX և X-րդ դարում Հայաստանի զանազան մասերում մի քանի հայկական անկախ իշխանութիւններ ու նոյն իսկ թագաւորութիւններ են առեղծւում, որոնք երկար ժամանակ խալիֆների հովանաւորութիւնն էին վայելում։

IV

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

Արաբական տիրապետութեան օրով առեղծւած հայկական իշխանութիւններից ամենազօրաւորը Բագրատունեաց թագաւորութիւնն էր։

Բագրատունի նախարարների տոհմը շատ հին ծագում ունէր։ Նրանք Արշակունեաց թագաւորութեան օրով էլ շատ բարձր դիրք էին վայելում և որդոց որդի թագադիր սպասեի պաշտօն ունէին։

Բագրատունիք բոլոր հայ նախարարներից ամենահարուստն էին թէ իրանց կալւածներով և թէ դրամով։ Արաբական տիրապետութեան ժամանակ նրանց կալւածները այնչափ ընդարձակւել էին, որ համարձակ կարող էին մի ընդարձակ տէրութիւն կազմել։ Նրանք կարողանում էին իրանց հպատակ ժողովրդից մօտ 40,000 զօրք հաւաքել։

Արաբների դէմ ապստամբութեան անյաջող փորձերի ժամանակ, Բագրատունի Սմբատ իշխանը, որ սպարապետի պաշտօն ունէր, արաբների կողմն էր անցել և շատ մատնութիւններ կատարել։ Սակայն արաբները Սմբատին էլ չհնայելով, ուրիշ շատ հայ իշխանների հետ բռնել ու Բաղդատ էին տարել։

Ալիֆը նրանց բոլորին էլ բանտարկել էր, խոստանալով ազատ թողնել այն դեպքում միայն, երբ մահմեդականութիւն կընդունեն։ Ազգին դաւաճանող Սմբատը սակայն չէր դաւաճանել իր կրօնին և մեռել էր բանտում, տանջանքների տակ։ Մահից յետոյ նա կոչւել է Սմբատ Խոստովանող։

Աշոտ I Բագրատունի թագաւոր

Սմբատ Խոստովանողի Աշոտ որդին չէ յուսահատւում իր հօր եղեռնական մահից։ Նա շարունակում է մեծ հաւատարմութիւն ցոյց տալ Ալիֆին և առատ պարգևներով նրա սիրելին է դառնում։

Աշոտի միջամտութեամբ Բաղդատի բանտում կենդանի մնացած հայ իշխաններն ազատ են արձակւում ու հայրենիք վերադառնում։ Այդպիսով Աշոտը հայ իշխաններին ու ազնւականներին էլ սիրելի է դառնում։

Աշոտը ժողովրդի ու երկրի բարեկարգութեան մասին մեծ հոգատարութիւն է ցոյց տալիս։ Արաբական արշաւանքներից քարուքանդ եղած գիւղերն ու քաղաքները նորոգելով, նա ամեն կերպ աջակցում է ժողովրդի քայքայւած վիճակը բարելաւելու։

Իր քաղցր վարմունքով ու հաւատարմութիւնով Աշոտը հետզհետէ այն աստիճան սիրելի է դառնում Բաղդատի Ալիֆին, որ սա «Իշխանաց Իշխանի» պատուաւոր տիտղոսն է ուղարկում նրան (859 թ.)։

Աշոտն իր դիրքը է աւելի ամրացնելու նպատակով, խնամիական կապեր է հաստատում երկու գլխաւոր հայ նախարարների հետ և իր երկու աղջիկներից մէկը տալիս է Կնունեաց Սիւնեաց իշխանին, իսկ միւսը՝ Արծրունեաց իշխանին։

Աշոտի «Իշխանաց Իշխան» դառնալուց շատ ժամանակ չանցած, պարսիկները ապստամբում են արաբների դէմ։ Որպէսզի հայերին թոյլ չըտան Ալիֆին օգնելու, նրանք բազմաթիւ զօրքով մտնում են Հայաստան։ Հայկական զօրքերը Երասխի ափին մի սոսկալի ջարդ են տալիս պարսիկներին և փախցնում։

Այս փառաւոր առիթից օգտւելով, հայ իշխանները ու կաթողիկոսը, Դւինի Ոսկիվանի միջոցով, խնդրում են Ալիֆին, որ Աշոտին թագաւորեցնէ Հայաստանի վրայ։

Ալիֆը մտածելով, որ եթէ հայերի ցանկութիւնը չկատարի, նրանք կարող են միանալ ապստամբ պարսիկների հետ, համաձայնւում է։ Նա չէ մերժում հայերի խնդիրը մանաւանդ նրա համար, որ նրանք խոստանում էին շարունակել հաւատարիմ և հարկատու մնալ Բաղդատին։

Շատ ժամանակ չանցած, Ալիֆը թագաւորական թուր և զգեստներ է ուղարկում Աշոտին, իսկ Գէորգ կաթողիկոսն էլ խունկ բազմութեան ներկայութեամբ նրան թագաւոր է օծում (885 թ.)։

Երբ Բիւզանդիայում իմանում են Աշոտի թագաւոր դառնալը, կայսրը շատ է իւ կողմից էլ թագ և արքայավայել ընծաներ ուղարկել հայոց նոր թագաւորին։ Դրանով յոյները մտածում են նոյնպէս հայերի սիրտը շահած լինել, որպէսզի նրանք մշտապէս արաբների կողմնակից չըմնան։

Թագաւոր դառնալուց յետոյ, Աշոտն իրան մայրաքաղաք է ընտրում Ախուրեան գետի ափին գտնւող Բագարան քաղաքը և վերականգնում Արշակունեաց թագաւորութեան ժամանակ եղած բոլոր պալատական ու վարչական կարգերը։ Նա անձամբ շրջում է իր երկրի զանազան կողմերը և ամեն տեղ

կատարեալ խաղաղութիւն հաստատելուց յետոյ, գրնում է Կոստանդնուպոլիս, յունաց կայսրին տեսութեան։

Կայսեր հետ քաղաքական և առևտրական դաշն կապելով, Աշոտը վերադառնում է Հայաստան, սակայն ճանապարհին հիւանդանում ու մեռնում է Շիրակ գաւառում (890 թ.)։

Հայաստանը Աշոտ I-ի յաջորդների օրով

Աշոտի մահից յետոյ Հայաստանը երկար ժամանակ նորից կորցնում է ներքին խաղաղութիւնը։ Գահակալութեան համար առաջ եկած կռիւները, նախարարների ըմբոստացումները և արտաքին թշնամիների յարձակումները, քայքայում և ուժասպառ են անում հայ ժողովրդին։

Արշակունեաց թագաւորութեան օրով, Հայաստանում գահակալութիւնը ժառանգական էր, այսինքն՝ հօր մահից յետոյ թագաւորում էր որդին։ Այդպէս էին և բոլոր հարևան երկիրները։ Արաբական խալիֆայութիւնը սակայն այդ ձևով չէր։ Այնտեղ մեռնող Խալիֆի գահը ժառանգում էր ոչ թէ որդին, այլ տոհմի աւագ անդամը։

Բագրատունիները էլ ժառանգականութեան այդ նոր ձևն են ընդունում, և այդ պատճառով ահագին պառակտումներ են սկսում Բագրատունեաց թագաւորական տոհմի մէջ։

Այդ բոլոր պառակտումներից օգուտ են քաղում ոչ միայն Հայաստանի արտաքին թշնամիները, այլ նաև հայ նախարարները։ Նրանք ըմբոստանալով իրանց թագաւորի դէմ, ձգտում են առանձին և անկախ թագաւորութիւններ հաստատել։

Այսպէս Արծրունիք, Աշոտի յաջորդների դէմ ապստամբելով, վասպուրականում մի անկախ թագաւորութիւն են հիմնում (608 թ.)։ Աւելի ուշ նոյնպէս անկախ հայ փոքրիկ թագաւորութիւններ են հիմնւում Վանանդ գաւառում (968 թ.), Սիւնեաց աշխարհում (970 թ.) և Լօռում (988 թ.)։

Արաբները ոչ միայն չեն արգելում հայ նախարարներին այդպիսի առանձին տէրութիւններ հաստատելու, այլ և ամեն կերպ նպաստում են դրանց։ Այդպիսով նրանք խանգարում էին Բագրատունեաց թագաւորութեան զօրեղանալը և հայոց ոյժերը բաժան-բաժան անելով, անզօր դարձնում լուրջ դիմադրութիւն ցոյց տալու համար։

Բագրատունիների զօրեղանալը ցանկալի չէր արաբներին նաև նրա համար, որ այս հայ թագաւորները էլ արշակունիների նման, միշտ հակւած էին դէպի յոյները, ուստի կարող էին Բիւզանդիայի հետ դաշնակցելով, մեծ պատուհաս լինել Խալիֆաթի գլխին։

Դրա համար էլ արաբները ամեն անգամ, հէնց որ նկատում էին Բագրատունի թագաւորների մերձեցումը յոյների հետ, իսկոյն ասպատակում էին Հայաստանը և ահագին աւերումներ առաջացնում։

Աշոտ III Ողորմած

Աշոտի յաջորդներն երկար ջանքերից յետոյ, երբ վերջապէս համոզւում են, որ անկարող են հայ նախարարների ըմբոստութիւնները զսպել ու մի զօրեղ հայկական տէրութիւն ստեղծել, հրաժարւում են այդ մտքից։ Նրանք բաւականանում են իրանց տոհմական

երկիրներով և ամբողջապէս նրանց ծաղկեցնելու և բարեկարգելու գործին։

Եղբայրասպան պատերազմներից քայքայուած հայ ժողովուրդը այդ ժամանակից շունչ է առնում և սկսում խաղաղ աշխատանքներով զբաղուել։

Այդ խաղաղ աշխատանքի շնորհով, Բագրատունեաց տէրութիւնը խիստ բարգաւաճում է, երկրագործութիւնը ծաղկում և առևտուրն ու վաճառականութիւնը զարգանում են։

Այդ շրջանի թագաւորներից մեծ ուշադրութեան արժանի է մանաւանդ Աշոտ III-րդ թագաւորը, որն իր հեզ բնաւորութեան և կատարած բազմաթիւ բարեգործութիւնների պատճառով, մեր պատմութեան մէջ յայտնի է Աշոտ Ողորմած անունով։

Աշոտ III-րդի հայրը՝ Աբաս թագաւորը, որ նոյնպէս շատ խաղաղասէր ու շինարար մարդ էր, մեռնելուց յետոյ երկու որդի էր թողել—Աշոտ և Մուշեղ անուններով։

Աբասին յաջորդել էր մեծ որդին Աշոտը, բայց Մուշեղը ապստամբում է իր եղբօր դէմ, ուզելով ժառանգել հօր գահը։ Երբ Մուշեղին այդ բանը չէ յաջողւում, նա իր կուսակիցների օգնութեամբ մի առանձին թագաւորութիւն է հիմնում Վանանդ գաւառում, մայրաքաղաք ընտրելով Կարսը (968 թ.)։

Ազգակործան կռիւները երկար չը դադրելու համար՝ Աշոտը ճանաչում է իր եղբօր հիմնած նոր թագաւորութիւնը և լաւ յարաբերութիւններ հաստատում նրա հետ։

Աշոտն իրան մայրաքաղաք է ընտրում Անի քաղաքը և իր ամբողջ ուշադրութիւնը դարձնում է իր փոքրիկ տէրութիւնը շէնացնելու ու պայծառացնելու վրայ։

Նա իր հօր՝ Աբաս թագաւորի օրինակին հետեւելով, շատ կործանուած քաղաքներ ու գիւղեր վերաշինորոգել է տալիս, բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ է կառուցանում և բարեգործական հաստատու-



Նկար 13. Ղօշավանք

թիւններ հիմնում, ինչպէս օրինակ՝ որբանոցներ, աղքատանոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ։ Ու այդ բոլոր բարեգործական հաստատութիւնները Աշոտն

ապահովեցնում է յատուկ նշանակված եկամուտներով։

Պատմում են, որ Աշոտ Ողորմածը երբեք տեղան չէր նստում, առանց մի քանի աղքատ ու խեղճ հիւրերի։

Շինարարական և բարեգործական գործերով զբաղվելիս, Աշոտ Ողորմածը միևնոյն ժամանակ մեծ հոգ է տանում իր երկրի պաշտպանութեան մասին։ Այսպէս՝ իր տերութեան մէջ եղած բերդերի ու ամրոցների թիւը նա աւելացնում է և մի պատկառելի մշտական բանակ կազմում՝ հետևակ ու ձիաւոր զօրքերից։

Աշոտ Ողորմածի թագաւորութեան օրով, Համատուն անունով արաբ զօրապետը ապստամբում է Խալիֆի դէմ և, Միջագետքն ու Ատրպատականը տակն ու վրայ անելուց յետոյ, յարձակւում է Հայաստանի վրայ։

Աշոտն իր զօրքով մի լաւ ջարդ է տալիս Համատունին։ Սա բռնւում է և Աշոտի հրամանով գլխատւում։

Այս դէպքը Խալիֆին մեծ դժոհունակութիւն է պատճառում։ Նա Աշոտին շատ թանկագին ընծաներ է ուղարկում և Շահի-Արմէն ասպետի հետ թոյլատրում նրան՝ գլխին արաբական ձևով շալմա փաթթել։

Աշոտ ողորմածը մեռնում է 29 տարի թագաւորելուց յետոյ (977 թ.)։

Անի քաղաքի շինութիւնը

Բագրատունեաց խաղաղասէր ու շինարար թագաւորների ամենափայլուն գործերից մէկն էլ եղել է Անի քաղաքի շինութիւնը։

Այդ քաղաքը այժմ բոլորովին աւերակ ու անմարդաբնակ է, բայց նրա աւերակների փառաւոր մնացորդները հիացմունք են պատճառում բոլոր այցելուներին։ Այդ մնացորդներից դժւար չէ հասկանալ, թէ որքիսի մեծ, հարուստ, գեղեցիկ ու անառիկ քաղաք է եղել Անին և թէ ինչպիսի շքեղ ու փարթամ կեանք են վարել այնտեղ մի ժամանակ Բագրատունեաց թագաւորներն ու հայ իշխանները։

Ութերորդ դարում Անին մի փոքրիկ աւան է եղել, Շիրակ գաւառում, Ախուրեան գետի ափին։

Բագրատունեաց թագաւորութեան հիմնադրի պապը, գնելով այդ գաւառը համարականներից, ընտանիքով գնում



Նկար 14 Բագրատունիների Բարձրադոյն Սուրբ Գարանը

բնակւում է Անիում։ Դրանից յետոյ Անին հետզհետէ շէնանում և ընդարձակւում է։

Առաջին անգամ Անին մայրաքաղաք է դառնում Աշոտ Ողորմածի օրով, որից յետոյ նա սկսում է արագութեամբ մեծանալ, բազմամարդ դառնալ և զարդարւել շատ փառաւոր շէնքերով, գեղեցիկ պալատներով և մանաւանդ հոյակապ տաճարներով։

Բագրատունիների այդ փառահեղ մայրաքաղաքը շատ

անառիկ դիրք է ունեցել։ Արևելեան և հարաւային կողմերից նա պաշտպանւում էր Ախուրեան գետով, որ հոսում է մի շատ խոր ձորի միջով։ Արևմտեան կողմից ընկած է Ծաղկաձորը, որը նոյնպէս շատ անմատչելի էր դարձնում քաղաքը։ Բնական պաշտպանութիւնից Անին զուրկ էր միմիայն հիւսիսային կողմից, իսկ այդ կողմն էլ Բագրատունիները շինել էին ուել կրկնակի հսկայական պարիսպներ։

Պարիսպների մեծ մասը մինչև օրս էլ դեռ կանգուն են մնացել, իսկ քաղաքում եղած բազմաթիւ հոյակապ շի-



Նկար 15. Անիի պարիսպները

նութիւններից մնացել են միայն մի քանի կիսաւեր եկեղեցիներ։

Ենթադրութիւն կայ, թէ այդ եկեղեցիների մեծ մասը շինել է Աշոտ Ողորմածի երկու որդիների՝ Սմբատ II-ի և Գագիկ I-ի օրով, որոնք միմեանց յաջորդելով թագաւորել են, Աշոտից յետոյ, ամբողջ 43 տարի—Սմբատը 13, իսկ Գագիկը 30։

Յայտնի գիտնական պրոֆեսոր Ն. Մարրի վերջին տարիներում Անիում կատարած պեղումների շնորհով, հողի տակից հանել է Գագիկ I-ի շինել տուած Լուսաւորիչ եկեղեցու մնացորդները, որոնցից կարելի է լինում հասկանալ թէ որքիսի փառաւոր շինութիւն է եղել այդ եկեղեցին։ Նոյն եկեղեցում գտնել է նաև Գագիկի արձանը իր ամբողջ մեծութեամբ։

Գագիկի շինել տուած եկեղեցին գտնելուց յետոյ, պրոֆ.

Մարրը ձեռնարկել է Բագրատունիների արքունական պալատի տեղը պեղել, որ գտնւում էր Ծաղկաձորի վրայ, քաղաքի արևմտեան մասում։ Պեղումները դեռ վերջացած չեն, բայց քացուած յատակագծից պարզ տեսնւում է, թէ որքիսի շքեղ ու մեծ շինութիւն է եղել այդ պալատը։



Նկար 16. Գագիկ I-ի արձանը


Շատ նշանաւոր ու գեղեցիկ շինութիւն է եղել նաև Անիի մաւեոնադարանը։

Անիի ամենանշանաւոր շէնքերի, ինչպէս և հրաշալի մայր եկեղեցու շինողը համարւում է Տրդատ ճարտարապետը, որ շատ հռչակաւոր էր իր ժամանակին։

Շինութիւնների մեծ մասը իրանց վրայ կրում են արաբական և բիւզանդական ոճի խառնուրդ։

Պեղումներից գտնւած բոլոր արժէքաւոր իրերը պահւում են Անիում, արաբական տիրապետութեան ժամանակ շինւած մզկիթում, որ այժմ մուզէումի է վերածւած։

Այդ ժամանակաշրջանում քանդակագործութիւնն էլ մեծ զարկ է ստացել հայերի մէջ և արտայայտել է մեծ մասամբ տապանաքարեր ու խաչքարեր քանդակելու



Նկար 7. Անիի մատենադարանի ճակատն ու պատերը։

մէջ, որոնց ճեացորդները մինչև այսօր էլ հիացմունք են պատճառում շատ գեղարւեստագէտների։

ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆԸ

Արծրունեաց թագաւորութեան վախճանը

Բագրատունեաց տէրութեան անդորր ու խաղաղ վիճակը վերջ է ստանում Աշոտ Ողորմածի որդու՝ Գագիկ I մահով (1020 թ.)։

Գագիկը երկու որդի ունէր — Յովհաննէս-Սմբատ և Աշոտ։ Հօր մահից յետոյ, որանց մէջ նորից երկարատև վէճեր ու կռիւներ են ծագում գահակալութեան համար։



Նկ. 18. քանդակագործ խաչքար։

Այդ կռիւները այն աստիճան սուր կերպարանք են ստանում, որ հայ նախարարները դիմում են Պետ-

րոս Գետադարձ կաթողիկոսի և վրաց Գէորգի թագաւորի միջնորդութեանը, որպէսզի հաշտեցնեն երկու եղբայրներին։

Միջնորդները որոշում են, որ Յովհաննէս-Սմբատը թագաւորէ Անիի և նրա շրջանակների, իսկ Աշոտը Վրաստանի ու Պարսկաստանի սահմանակից երկիրների վրայ։

Վէճը սակայն դրանով չէ վերջանում, և Աշոտը մի քանի անգամ փորձում է գահից զրկել եղբօրն ու ինքը միանակ թագաւորել։

Ճիշդ այդ եղբայրադաւ կռիւների ժամանակ, Հայաստանի գլխին պայթում է մի նոր փոթորիկ։ Տեղի է ունենում մի ահեղ արշաւանք, նման VII-րդ դարում տեղի ունեցած արաբական արշաւանքի։

Դա Սելջուկ թուրքերի արշաւանքն էր։

Սելջուկները մի կիսավայրենի ցեղ էին, որ շատ հին ժամանակից ի վեր ապրում էին Ասիայի խորքերում։ VI-րդ դարի սկզբներում, նրանք նեղելով իրանցից աւելի զօրեղ ցեղերի կողմից, մօրեխի նման դուրս են թափւում իրանց բնիկ երկրից և գնում նոր հայրենիք որոնելու։

Հասան անունով մի թուրքի առաջնորդութեամբ, սելջուկները անցնում են Տիգրիս գետը և տակն ու վրայ անում Միջագետքը։

Խալիֆաթը այդ ժամանակ ներքին խռովութիւններից այնքան թուլացած էր, որ անկարող էր այդ կատաղի բարբարոսներին լուրջ դիմադրութիւն ցոյց տալ։

Հասանին յաջորդում է Տուղրիլ-բէգը։ Սրա առաջնորդութեամբ սելջուկները յարձակւում են Հայաստանի վրայ և ամեն ինչ իրանց ճանապարհին քանդում, այրում և աւերում են։

Անիից առաջ նրանք յարձակւում են Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան վրայ։ Զուր է աշխատում Սենեքերիմ թագաւորը դիմադրութիւն ցոյց տալ բարբարոսներին։ Նրանք յաղթում են հայերին և սոսկալի աւերմունքներ գործելով, անցնում, ժոնում են Յովհաննէս-Սմբատի երկիրը։

Այստեղ էլ հայերը մեծ ջանք են գործ դնում ուժեղ դիմադրութեամբ փրկել իրանց երկիրը աւերմունքից, բայց դարձեալ չի յաջողւում։

Սելջուկները, սակայն, չեն մնում Հայաստանում։ Նրանք ահագին ջնաններ հասցնելուց յետոյ, յետ են քաշւում դէպի Պարսկաստան և, արաբներից նւաճելով այդ ամբողջ երկիրը, վերականգնում են Պարսից թագաւորութիւնը։ Տուղրիլը նոր թագաւորութեան սուլթան է հռչակւում։

Սելջուկների այս առաջին արշաւանքից սարսափած և նախատեսելով, որ այդ բարբարոսները դրանից յետոյ մի փորձանք են դառնալու Հայաստանի համար, Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը որոշում է օր առաջ իր գլխի ճարը տեսնել։ Նա դիմում է յունաց կայսրին. առաջարկում է վերցնել Վասպուրականը և նրա փոխարէն տալ իրան Սեբաստիա քաղաքը՝ իր շրջականերով։

Կայսրն ընդունում է այդ առաջարկը, և Սենեքերիմ իր ընտանիքով, բոլոր իշխաններով ու զօրքով տեղափոխւում է Սեբաստիա (1021 թ.)։

Անիի վաճառումը

Հազիւ էին հայերը սելջուկների սարսափներից յետոյ շունչ առել, երբ իմանում են, որ յունաց կայս-

ըը մեծ զօրքով մօտենում է Բագրատունեաց թագաւորութեան սահմաններին։

Յովհաննէս-Սմբատ թագաւորը բոլորովին չի էլ մտածում դիմադրութիւն ցոյց տալ։ Ընդհակառակը նա և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, սելջուկների գալիք արշաւանքներից սարսափած, և գիտենալով, որ անկարող պիտի լինեն պաշտպանուել, լաւ են համարում իրանց երկիրը յունաց քրիստոնեայ պետութեանը տալ, քան թողնել, որ մահմեդական բարբարոսները տիրեն նրան։

Յովհաննէս-Սմբատը ցանկանում է, սակայն, որ իր տէրութիւնը յոյներին յանձնելի միայն իր մահից յետոյ։ Ոչ մի զաւակ չունենալով և իր եղբօր հետ էլ միշտ թշնամական յարաբերութեան մէջ լինելով, նա ժառանգների մասին հոգալու ոչ մի պատճառ չունէր։

Թագաւորն ու կաթողիկոսը միմեանց հետ այդպէս խորհրդակցելով, կայսրին մի թուղթ են գրում, որով հայոց թագաւորը խոստանում է մահից յետոյ Անին իր շրջակայքով նրան տալ (1023 թ.)

Կայսրն ուրախացած յետ է քաշւում, Հայաստանի սահմանը դեռ չըմտած։

Շատ ժամանակ չանցած կայսրը մեռնում է։ Նրա յաջորդն էլ երկար չի ապրում։ Վերջինս մահուան անկողնու մէջ կանչել է տալիս Կիրակոս անունով մի հայ քահանայի, որ հայոց կաթողիկոսական գործերին ծանօթ մարդ էր ու նրան յանձնում Յովհաննէս-Սմբատի թուղթը։ Կայսրը պատւիրում է նրան, թէ «Տար այս թուղթը, տուր քո թագաւորին և ասա նրան իմ կողմից, որ ես էլ, ինչպէս ամեն մի մահկանացու, յաւիտենականութեան շեմքի վրայ եմ կանգնած ու չեմ ուզում ուրիշի սեփականութիւնը

գրաւել, թող ուրեմն յետ վերցնի իր թագաւորութիւնը և իր ժառանգին տայ» (1029 թ.)։

Այդ հայ քահանան, սակայն, չէ կատարում մեռնող կայսրի կամքը։ Թուղթն իր մօտ է պահում և հինգ տարուց յետոյ, տանում ու Թանգ գնով ծախում է կայսեր յաջորդ՝ Միքայել V-րդին (1034 թ.)։

Նախարարական երկու կուսակցութիւնները

Երբ Յովհաննէս-Սմբատ թագաւորը մեռնում է, Միքայել V կայսրը դեսպաններ է ուղարկում և Անին իր շրջակայքով հայերից պահանջում։

Այդ ժամանակ Բագրատունեաց թագաւորական գահը թափուր էր մնացել և տէրութեան գործերը վարում էին նախարարները։ Դրանցից գլխաւորներն էին Վեստ Սարգիս Սիւնին և Վահրամ Պահլաւունին։

Վեստ Սարգիսը տէրութեան խնամակալ էր կարգւած և թագաւորական բոլոր գանձերը նրա ձեռքումն էին գանւում, իսկ Պահլաւունին՝ զօրքի սպարապետն էր։

Ինչպէս առաջին կրօնական պատերազմի ժամանակ Վասակ Սիւնին և Վարդան Մամիկոնեանը՝ այնպէս էլ այժմ Վեստ Սարգիսն ու Վահրամ Պահլաւունին էին երկու հակառակ ուղղութեան մարդիկ։

Վեստ Սարգիսը վստահութիւն չունէր, թէ չափազանց թուլացած Հայաստանը պիտի կարողանայ երկար պահպանել իր անկախութիւնը։ Նա էլ Յովհաննէս-Սմբատ թագաւորի և կաթողիկոսի նման այն կարծիքին էր, թէ աւելի լաւ է Հայաստանը քրիստոնեայ յոյներին յանձնել, քան թողնել, որ սելջուկները նրան տէր դառնան։

Պահլաւունին, ընդհակառակը, խիստ դէմ էր այդ կածիքին և չէր ցանկանում, որ երկիրը յօժարութեամբ օտար տէրութեան յանձնէի։

Բացի դրանից՝ Պահլաւունին և իր կողմնակիցները չէին կամենում, որ տէրութեան խնամակալութիւնը Վեստ Սարգսի ձեռքում երկար մնայ, որը կարող էր մի օր էլ թագաւոր դառնալ։ Նրանք ուզում էին բագրատունեաց բոլոր երկիրների իշխանութիւնը յանձնել Յովհաննէս-Սմբատի եղբօր որդուն՝ Գագիկին, որը 14 տարեկան պատանի էր և մեկ օրինաւոր ժառանգը։

Վահրամի կուսակցութիւնը աւելի զօրեղ լինելով, հայերը մերժում են յունաց կայսրի պահանջը՝ Անին յանձնել։

Հայերի բացասական պատասխանից զայրացած Միքայէլ կայսրը որոշում է զէնքի ուժով գրաւել Անին։ Նա մի քանի անգամ բազմաթիւ զօրք է ուղարկում Հայաստան, բայց հայերի զօրեղ դիմադրութեան շնորհով, նրանք չարդւում ու յետ են քաշւում։

Այդ յաղթութիւններից յետոյ, վահրամեանները պատանի Գագիկին բերում են Անի և թագաւոր օծել տալիս, Գագիկ II անունով (1042 թ.)։

Վրէժխնդրութիւնից վախեցած՝ Վեստ Սարգիսը փախչում, ամրանում է Սուրմառի բերդաքաղաքում, իր հետ տանելով և թագաւորական գանձերը։ Երիտասարդ թագաւորը զօրքով յարձակւում է նրա վրայ, գանձերը յետ խլում և նրան էլ բռնում ու բանտարկում Անիում։ Սակայն Վեստ Սարգիսին յաջողւում է շուտով ներքուստ ատանալ թագաւորից և նրա սիրելին դառնալով՝ մեծ պատիւների արժանանալ։

Անիի յանձնումը յոյներին

Յոյները Անիին տիրանալու մտքից չեն հրաժարւում։ Միքայէլ V-րդի յաջորդը՝ Կոստանդին Մոնոմախ կայսրը, նորից բանակցութիւններ է սկսում հայերի հետ և պահանջում Անին։ Մերժումն ստանալով, կայսրը նորից մի քանի անգամ բազմաթիւ զօրք է ուղարկում, սակայն հայերը, իրանց երկրի ազատութեան գաղափարով ոգևորւած, այնպիսի կատաղութեամբ են կռւում, որ ամեն անգամ էլ յոյները մեծ ջարդ կրելով յետ են քաշւում։

Մոնոմախ կայսրը, տեսնելով, որ զէնքի ոյժով անհնարին է անառիկ Անին գրաւելը, խորամանկութեան է դիմում։ Նա Գագիկին բարեկամական թուղթ է գրում և հրաւիրում Կոստանդնուպոլիս, որպէսզի խաղաղութեան և բարեկամութեան դաշն կապեն։

Երիտասարդ թագաւորը չէ ուզում գնալ, բայց Վեստ-Սարգիսն ու Գեառոս Գետադարձ կաթողիկոսը նրան ամեն կերպ համոզում են ընդունել կայսեր հրաւէրը, խոստանալով, որ իրանք հաւատարմութեամբ կը պահպանեն նրա գահը։

Կոստանդնուպոլսում հայոց թագաւորին արքայավայել կերպով ընդունելուց յետոյ, կայսրը նորից պահանջում է, որ Անին իրան յանձնի։ Բայց երբ կրկին մերժումն է ստանում, նա ձերբակալել է տալիս Գագիկին և աքսորում Մարմարա ծովի կղզիներից մէկը։

Երբ այդ դժբախտ լուրն իմանում են նախարարները, խիստ իրարանցումի մէջ են ընկնում։ Նրանցից ոմանք ուզում էին, որ Անին տրւի վրաց թագաւորին, իսկ ոմանք էլ առաջարկում էին տալ մի ուրիշ քրիստոնեայ թագաւորի։

Մինչ նախարարները այդ վէճի մէջ էին, Պետրոս կաթողիկոսը, յուսաց կայսրից մի լաւ վարձատրութիւն առանալով, Անիի բանալիները ուղարկում է Կոստանդնուպոլիս։

Գագիկը լսելով կաթողիկոսի և Վեստ-Սարգսեանների խոստմնազանցութիւնը, յուսահատւում է և հրաժարւում իր թագաւորութիւնից։ Կայսրը Անիի փոխարէն նրան տալիս է Կապադովկիայի Բիզու քաղաքը, ուր Գագիկն ամուսնանում է Սեբաստիայի Դաւիթ թագաւորի աղջկայ հետ։

Անիի բանալիները առանալով, կայսրը իսկոյն զօրք է ուղարկում Հայաստան իր նոր ժառանգութիւնը վերցնելու։ Հայերն այս անգամն էլ անձնատուր չեն լինում. վահրամեանները զօրքի և ժողովրդի մեծ մասի հետ միացած, որոշում են մինչև վերջին շունչը պաշտպանել իրանց անառիկ մայրաքաղաքը։

Անին պաշարւում է։ Հայերն իրանց վերջին ճիգն էլ թափելով յարձակւում են յոյների վրայ և թէև մի լաւ ջարդ են տալիս, բայց վերջ ի վերջոյ յաղթւում են և յանձնում Անին։

ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հայաստանին տիրելուց յետոյ, յոյները մեծ անգթութիւններ են գործում։ Կասկածելով, թէ մի դուցէ հայերը նորից համախմբուեն և ապստամբուեն իրանց դէմ, նրանք ցիր ու ցան են անում հայոց զօրքը, ամեն տեսակ հալածանքների են ենթարկում նախարարներին, և նշանաւոր քաղաքներում ու բերդերում պահապան զօրքեր են դնում։

Յոյները մինչև իսկ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին էլ բռնում են և Կոստանդնուպոլիս ուղարկում։

Երկար չէ տևում սակայն յոյների տիրապետութիւնը Հայաստանում։ Սելջուկները նորից սկսում են իրանց վայրենի ասպատակութիւնները և, յոյներին ամեն տեղից դուրս քշելով, մի կատարեալ սպանդանոց են դարձնում հայոց աշխարհը։

Սելջուկների ասպատակութիւնները Հայաստանում տևում են երեք տարի։ Այդ բարբարոսները ամեն տեղ սոսկալի կոտորած անելով, թալանում, քանդում և կրակի են մատնում։ Բազմաթիւ հարուստ ու բազմամարդ քաղաքներ կատարեալապէս հիմնայատակ են լինում և հողի հետ հաւասարւում։

Այդ վայրագութիւնների հանդէպ՝ յոյները երկար ժամանակ անտարբեր էին, սակայն երբ տեսնում են, որ սելջուկները շատ են մօտենում իրանց մայր երկրի սահմաններին, 60,000 զօրք են ուղարկում նրանց դէմ։

Յոյներին միանում են վրաց թագաւորն ու մի քանի հայ իշխաններ իրանց զօրքերով, բայց զրանք բոլորն էլ մեծ պարտութիւն են կրում և վրաց թագաւորն էլ գերի բռնւում։

Դրանից յետոյ Տուղրիլ սուլթանն ինքն անձամբ է գալիս Հայաստան և աւելի մեծ կատաղութեամբ ասպատակում այն բոլոր տեղերը, որ դեռ ազատ էին մնացել։ Շատ քաղաքներ ու գիւղեր աւերելուց և անհամար կոտորածներ անելուց յետոյ, սուլթանը վերադառնում է Պարսկաստան, տանելով իր հետ բազմաթիւ հայ գերիներ։

Տուղրիլի մահից յետոյ, նրա եղբայրը Ալփասլանն է գալիս Հայաստան։ Նա իր ամբողջ զօրութեամբ գնում է ուղղակի Անիի վրայ, որ դեռ անվնաս էր մնացել։

Երկար պաշարումից յետոյ, վերջապէս անառիկ

Անին առնւում է։ Կատաղած սելջուկները այստեղ էլ շատ սոսկալի անգթութիւններ են գործում։ Փառաւոր քաղաքի հոյակապ շէնքերը կրակի ճարակ են դառնում, իրանց փլատակների տակ անթիւ դիակներ ծածկելով (1064 թ.)։

Ամբողջ Մեծ Հայքն այս կերպ սելջուկներից ոտնատակ ու քարուքանդ լինելով, անվնաս է մնում միայն Կարսի փոքրիկ հայկական թագաւորութիւնը։

Այդտեղ Գագիկ թագաւորն էլ հասկանալով, որ երկար չը պիտի կարողանայ հանգստութիւն վայելել, իր երկիրը յանձնում է բիւզանդական կայսրին, և նրա փոխարէն ստանալով Փոքր Հայքում Ծմնդաւ բերդը, տեղափոխւում է այնտեղ (1065 թ.)։

Այս եղանակով էլ վերջ են տանում հայկական բոլոր անկախ թագաւորութիւնները։

Հայաստանին տէր դառնալուց յետոյ, սելջուկներ մտնում են Փոքր Ասիայի յունական երկիրները, տիրում նրանց մեծ մասին և հաստատւում Իկոնիայում, որ Կոստանդնուպօլսից մի քանի օրւայ ճանապարհ էր։

V

ՌՈՒԲԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սելջուկների արշաւանքները խիստ աղետաբեր են լինում Հայաստանի համար։ Բացի անխնայ կոտորածից ու աւերմունքից, այդ արշաւանքները մի անասելի գաղթականութիւն են առաջացնում։ Կէնդանի մնացած հայերից շատերը թողնում են իրանց բնիկ հայրենիքն ու գաղթում օտար երկիրները։

Հայերը շատ հին ժամանակներում, հալածւելով պարսիկներից, յոյներից և արաբներից, նոյնպէս ստիպւած են եղել գաղթել օտար երկիրները։

Այդ գաղթականները մեծ մասամբ հաստատւում էին Փոքր Ասիայի բիւզանդական երկիրներում, ուր նրանք շատ ազատով էին զգում իրանց։

Բացի այդ, գաղթականները իրանց բնակութեան համար ընտրում էին ծովեզերեայ տեղեր, որպէսզի հնարաւորութիւն ունենան ընդարձակ առևտրական գործով պարապել։

Այդպիսի տեղեր էին Կոստանդնուպօլիսը, Փոքր Ասիայի արևմտեան ծովեզերեայ քաղաքները և մանաւանդ Կիլիկիան՝ իր վաճառաշահ նաւահանգիստներով։

Կիլիկիան իր մեղմ ու բարեխառն կլիմայի շնորհով երկրագործութեան համար էլ մեծ յարմարութիւններ ունէր։ Դեռ Մեծն Տիգրանի ժամանակ այդ երկիրը շատ ծաղկած վիճակի մէջ էր գտնւում։

XI-րդ դարի վերջերում հայ գաղթականների թիւը այնչափ էր մեծացել Կիլիկիայում, որ իրանց բազմութեամբ կարող էին մրցել տեղացի յոյն և օտար բնակիչների հետ։

Կիլիկիայում հաստատուելով, հայերը նրա զանազան կողմերում բազմաթիւ վանքեր էին կառուցել, որոնց մէջ կրօնաւորները կրթութիւն և ուսում էին տալիս հայ երեխաներին։

Գաղթական հայ իշխաններն էլ, ժամանակի ընթացքում, Տաւրոսի լեռնաշղթայի վրայ մի քանի ամուր տեղեր գրաւելով, ամրոցներ ու բերդեր էին շինել և փոքրիկ իշխանութիւններ հաստատել։

Բիւզանդական կայսրները ոչ միայն դէմ չէին հայկական այդ փոքրիկ իշխանութիւններին, այլ և մինչև իսկ հովանաւորում էին նրանց, որովհետև դրանք մի տեսակ պատուարի դեր էին կատարում կայսրութեան համար, մահմեդական ցեղերի յարձակումների ժամանակ։

ՌՈՒԲԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Տաւրոսի լեռնաշղթայի վրայ հիմնուած հայկական փոքր իշխանութիւններից, XI-րդ դարի վերջերում նշանաւոր է դառնում Ռուբինեան իշխանութիւնը։

Այդ իշխանութեան հիմնադիրը Ռուբէնը, որ Բագրատունի Գագիկ II թագաւորի ազգականներից էր, իր համար բնակութեան տեղ է ընտրում Տաւրոսի բարձունքները՝ Բարձր բերդի շրջակայքում։

Այդ տեղը թէ շատ անառիկ դիրք ունէր և թէ խիտ բազմամարդ էր հայ բնակիչներով։

Ռուբէնը օգտուելով այդ երկու հանգամանքից, շատ կարճ ժամանակից դուրս է քշում յոյն իշխաններին և իր երկիրն անկախ յայտարարում (1080 թ.)։

Շուտով մօտակայ հայ իշխանները ստիպուում են Ռուբէնի իշխանութիւնը ճանաչել։ Նրանց օգնութեամբ նորահաստատ հայկական անկախ իշխանութիւնը հետզհետէ աճում ու զօրեղանում է։

Ռուբէնին յաջորդում է նրա որդին՝ Կոնստանդինը (1095 թ.), որը յոյներից մի քանի ամուր բերդեր գրաւելով՝ հօր թողած ժառանգութիւնը աւելի է ընդարձակում։

Կոնստանդինի օրով եւրոպական ազգերը մի ահագին արշաւանք են կազմակերպում դէպի Երուսաղէմ, Քրիստոսի գերեզմանն ու սուրբ վայրերը մահմեդականների տիրապետութիւնից ազատելու նպատակով։ Եւրոպացիների այդ արշաւանքը կոչուում է Խաչակիրների արշաւանք։

Կոստանդինը յարաբերութեան մէջ է մտնում Խաչակիրների հետ. առաջ պաշար է ուղարկում նրանց և առաջնորդի դեր կատարում անծանօթ երկրում։

Խաչակիրները, մի քանի պատերազմներից յետոյ, մահմեդականներին քշում են սուրբ վայրերից և, երկրին տիրանալով, մի քանի առանձին-առանձին իշխանութիւններ են հաստատում։

Այդ կողմերում հաստատուած եւրոպացի զանազան ազգի իշխանները, ընդհանուր առմամբ կոչուում էին Լատին իշխաններ։

Կոստանդինին իր մատուցած ծառայութիւնների համար, Խաչակիր իշխանները մարկիզի տիտղոս են տալիս, որով էլ աւելի է բարձրանում նրա դիրքը։

Կոստանդինի յաջորդները, շարունակելով իրանց հօր և պապի յանդուգն գործունէութիւնը, հարիւր տարուայ ընթացքում ամբողջ Կիլիկիայի լիակատար տէրն են դառնում և ստիպում յունաց կայսրին՝ բոլորովին հրաժարուել այդ երկրից։

Այդպէս հետզհետէ զօրեղանալով, Ռուբինեան

իշխաններն այն աստիճան մեծ ոյժի տէր են դառնում, որ սկսում են համարձակ պատերազմներ մղել թէ յունական՝ արդէն թուլացած կայսրների, և թէ մահմեդական՝ զօրաւոր սուլթանների դէմ։




Նկ. 19. Ռուբինեան ձիաւոր զօրք

Հայկական այդ իշխանութիւնը մեծ զօրութեան է հասնում, մանաւանդ Լևոն II-րդ Ռուբինեան իշխանի օրով, որը կիլիկիայի առաջին հայ թագաւորն է դառնում։

ԼԵՒՈՆ ՄԵԾԱԳՈՐԾ

Լևոնը նոր էր երկրի իշխանութիւնն ստանձնել (1185 թ.), երբ միմեանց յետևից կիլիկիայի վրայ են արշաւում Իկոնիայի, Հալէպի և Դամասկոսի սուլթանները։






Նկար 20. Լևոն Մեծագործ

Լևոնն այդ բոլոր յարձակումները մեծ քաջութեամբ յետ է մղում։

Նոյն ժամանակներում Եգիպտոսի սուլթանն (Սալահեդդին) օգուտ քաղելով խաչակիր իշխանների ներքին պատակոծումներից, յարձակւում է Պաղեստինի վրայ, դուրս է քշում լատիններին և նորից նւաճում Երուսաղէմն ու սուրբ երկիրը (1187 թ.)։

Եւրոպացիք, Գերմանիայի Ֆրիդրիխ Բարբարոսա թագաւորի առաջնորդութեամբ, Յաչակիրների մի նոր արշաւանք են կազմակերպում և նորից գնում ս. երկիրը մահմեդականներից մաքրելու։ Կիլիկիայի սահմաններին մօտենալով, Ֆրիդրիխը Լևոնին դեսպաններ է ուղարկում և նրանից օգնութիւն խընդրում, խոստանալով՝ փոխարէնը Լևոնին թագաւորական թագ ուղարկել։ Լևոնն ուրախութեամբ ընդունում է Ֆրիդրիխի առաջարկը և առատ պաշար է



Նկար 21. Սիս

հասցնում Յաչակիրներին։ Ինչ յետոյ ինքն էլ իր զքահամբով գնում է Ֆրիդրիխին տեսութեան։ Սակայն Լևոնին չի յաջողւում Գերմանիայի թագաւորին տեսնել, որովհետև այդ միջոցին թագաւորը, գետում լողանալիս, խեղդւել էր։

Այդ անակնկալ մահը թէև մի քանի տարով ուշացնում է, բայց բոլորովին չի խանգարում Լևոնի

թագադրութիւնը։ Ֆրիդրիխի յաջորդը, Հռոմի պապի հետ համաձայնութեան գալով, շուտով արքայական թագ և առիւծանշան դրօշ է ուղարկում Լևոնին, իսկ հայոց կաթողիկոսն էլ մեծ հանդէսով նրան օծում է Կիլիկիայի թագաւոր (1198 թ.)։

Շուտով Բիւզանդիայի կայսրն էլ Լևոնին թագ է ուղարկում և այդպիսով վաւերացնում հայկական նոր թագաւորութիւնը։

Թագաւոր դառնալուց յետոյ, Լևոնն իրան մայրաքաղաք է ընտրում Սիսը և սկսում իր երկրի վարչական գործերով զբաղւել։ Լատին իշխանների օրինակին հետևելով, նա թէ իր արքունիքում, թէ զօրքի և թէ այլ կառավարչական գործերի մէջ, նոր պաշտօններ, եւրոպական սովորութիւններ և նիստ ու կաց է մտցնում։

Լևոնն ամեն կերպ աշխատում է, որ իր երկիրն էլ եւրոպական թագաւորութիւնների ձևով լինի։

Նա իր մօտ է հրաւիրում շատ եւրոպացիներ— Ֆրանսիացի, իտալացի, գերմանացի ու անգլիացի— և նրանց պալատական ու զինւորական բարձր պաշտօններ է յանձնում։

Կիլիկիայի Լևոն առաջին հայ թագաւորը, իբրև բարեպաշտ քրիստոնեայ, բազմաթիւ վանքեր է շինել տալիս ու դրանց կից բացած դպրոցների համար եւրոպացի ուսուցիչներ է հրաւիրում, որպէսզի հայերի մէջ էլ ուսում ու գիտութիւն տարածւի։

Լևոնը մեծ հոգատարութիւն է ցոյց տալիս նաև դէպի խեղճերը, թշւառներն ու օտարականները, և այդ նպատակով էլ հիմնում է շատ հիւանդանոցներ, արբանոցներ ու հիւրանոցներ։

Այս բոլորի հետ միասին, Լևոնը մանաւոր ու-

շադրութիւն է դարձնում երկրագործութեան, արհեստների և առևտրի զարգացման վրայ։

Նրա օրով Կիլիկիայում խիստ զարգանում է մանաւանդ վաճառականութիւնը։ Հայոց թագաւորը մօտիկ յարաբերութիւններ է հաստատում առևտրով աւելի զարգացած ազգերի հետ և, նրանց զանազան արտօնութիւններ տալով, ամեն կերպ նպաստում է իր երկրի առևտրի ընդարձակութեան։

Այսպէս եւրոպական տէրութիւնների հետ կապ ւելով, Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը հետզհետէ աւելի զօրանում ու հարստանում է։



Նկար 22. Լևոնի դրամը

Իր 34 տարւայ թագաւորութեան ընթացքում, Լևոնը մեծ հռչակ է ստանում նաև մի շարք յաջողակ պատերազմներով։ Նա առիթներ է ունենում կռուիլ մզելու, ինչպէս Սաորիքի (Սիրաի) լատին իշխանների, այնպէս էլ Իկոնիայի և այլ մահմեդական սուլթանների դէմ, որոնց բոլորին էլ յաղթելով կիլիկիան ազատ է պահում օտար յարձակումներից։

Իր քաղաքագործութիւնների և երկրի լուսաւորութեան ու բարգաւաճման համար կատարած գործերի պատճառով, Ռուբինեան Լևոն I թագաւորը, մեր պատմութեան մէջ յայտնի է Լեւոն Մեծագործ անունով։

Նա մեռել է 1219 թ.։

Կիլիկիայի թագաւորութիւնը Լեւոն Մեծագործի յաջորդների օրով

Պարսից, արաբացոց և յունաց զօրաւոր ու բռնակալ դրացիութիւնից ազատւելով, հայերը Կիլիկիայում ոչ պակաս զօրաւոր ու բռնակալ եգիպտական մամլուկների հարևան են դառնում։

Մամլուկները առաջ Եգիպտոսի արաբական խալիֆների թիկնապահ զօրքն էին, որ կազմւած էին բացառապէս սորուկներից։ Ճնոյ, օգտւելով խալիֆաթի թուլութիւնից, նրանք ապստամբել և երկրի իշխանութիւնը իրանց ձեռքն էին դցել։

Կիլիկիայի հայ թագաւորները, մօտ երկու դար, խիստ ընդհարումներ են ունենում մամլուկ սուլթանների հետ։

Եւրոպացի քրիստոնեայ ազգերը, որոնց վրայ Ռուբինեան թագաւորները այնքան մեծ յոյսեր էին դրել, շատ քիչ են օգնում հայերին մամլուկների դէմ կռւելու։

Քրիստոնէութիւն ընդունած ազգերի մէջ, դեռ V-դ դարում կրօնական մեծ վէճեր էին սկսւել։ Այդ վէճերի հետևանքն այն էր եղել, որ քրիստոնեաները բաժանւել էին երեք գլխաւոր դաւանութիւնների — յունադաւանները (յոյները), կաթոլիկները կամ լատիններ (եւրոպական ազգերը) և լուսաւորչականներ (հայերը)։

Դաւանական այդ բաժանումից յետոյ, յոյները շատ էին աշխատել հայերին իրանց դաւանանքին դարձնելու, սակայն նրանց բոլոր ջանքերը, պարսիկների և արաբների նման, ի դուր էին անցել։ Հայերը միշտ հաւատարիմ էին մնացել իրանց պապենական եկեղեցու դաւանանքներին։

Կիլիկիայում էլ նոյն ուղղութեամբ լատինները

էին աշխատում, և հենց այդ ժամանակից է, որ հայերի մեջ մուտք է գործում կաթոլիկությունը։ Թեև շատ հայ իշխաններ, թագաւորներ ու նոյնիսկ բարձրաստիճան հոգևորականներ կաթոլիկութիւն են ընդունում, բայց այդ դաւանանքը հայ ժողովրդի մեջ նոյնպէս ծաւալ չէ ստանում։



Նկար 23. Լևոն V Լուսինեան

Կրօնական աւելութեամբ համակուած եւրոպացիք կիլիկիայի հայերին չեն օգնում մինչև իսկ այն ժամանակ, երբ Ռուբինեան հայկական տոհմը վերջացել և թագաւորական գահը եւրոպացի Լուսինեան տոհմին էր անցել

Մօտ երկու դար մահմեդական թշնամիների դէմ մաքառելուց յետոյ, կիլիկեան թագաւորութիւնը վերջապէս ուժասպառ ընկնում է Եգիպտոսի մամլուկ սուլթանների իշխանութեան տակ (1375 թ.)։

Կիլիկիայի հայոց վերջին Լուսինեան Լևոն V-րդ թագաւորը գերի է տարւում Եգիպտոս, ուր 7 տարի բանտարկութեան մէջ մնալուց յետոյ, ազատւում և գնում է Եւրոպա։ Նրա բոլոր ջանքերը՝ եւրոպական զօրեղ թագաւորների աջակցութեամբ իր կորցրած թագը ձեռք բերելու, բոլորովին իզուր են անցնում։



Նկար 24. Լևոն V Լուսինեանի դամբարանը

Նա յուսահատ մեռնում է Փարիզում (1303 թ.) և թաղւում Սէն-Դընիի թագաւորական գերեզմանատանը։

VI

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՑԵՏՈՑ

ՎՐԱՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ Հայաստանին ու Փոքր Ասիայի մի մասին տիրելուց յետոյ, սելջուկները մի ընդարձակ տէրութիւն են կազմում։

Այդ մեծ տէրութիւնը, սակայն, շատ կարճ կեանք է ունենում։ Ալփասլանի որդու մահից յետոյ, սելջուկների իշխանութիւնը հետզհետէ թուլանում է։ Արաբ, պարսիկ, հայ և ուրիշ զանազան ազգի իշխաններ նորից ղլուխ են բարձրացնում ու զատ-զատ իշխանութիւններ և մեծ ու փոքր թագաւորութիւններ են հիմնում։

Սելջուկները իրանց իշխանութիւնները պահպանում են միմիայն Կիլիկիայի սահմանակից Իկոնիայում, որ սուլթաններըը միշտ ընդհարումներ էին ունենում Ռուբինեան թագաւորների հետ։

Սելջուկեան իշխանութեան անկումով, Հայաստանը դարձեալ մեծ մասամբ օտարների տիրապետութեան տակ է ընկնում։ Նրա արևելեան մասը միացած էր Պարսկաստանին, ուր թագաւորական իշխանութիւնը վերսին պարսիկների ձեռքն էր անցել։ Արևմտեան մասին տէր էին դառել մասամբ Իկոնիայի սուլթանները և մասամբ էլ յոյները։ Հիւսիսից դէպի հարաւ Հայաստանը բաժանուած էր միքանի մահմեդական և հայ՝ մեծ ու փոքր՝ իշխանութիւնների միջև։ Հայերից յայտնի էին Սիւնեաց, Աղուանից, Վասպուրականի, Տարօնի ու Սասունի փոքր թագաւորութիւնները ու իշխանութիւնները, որ սակայն, միմեանցից հեռու ընկած և մանաւանդ մահմեդականներով շրջապատուած, անկարող էին միանալ և մի զօրաւոր դիրք ստեղծել։

Այդ դրութիւնը շարունակւում է մինչև XII-րդ դարը, երբ Հայաստանի հիւսիսային կողմում զօրեղանում է վրաց թագաւորութիւնը։

Վրացիք Գիւորգի թագաւորի օրով, երկար պատերազմներ են մղում Դւինի, Անիի և Կարսի մահմեդական իշխանութիւնների դէմ։ Նրանք Հայաստանի այդ մասը մահմեդականներից մաքրում են ու տիրում։

Դրանից յետոյ վրացիք իրանց ղէնքը դարձնում են պարսից իշխանութեան դէմ։ Միքանի տարի պատերազմելուց յետոյ, նրանք գրաւում են նաև Հայաստանի արևելեան մասը։

Վրաց ազդեցութիւնը Հայաստանի վրայ զօրեղանում է մանաւանդ Գիւորգիի դստեր՝ Թամար թագուհու ժամանակ։ Այդ թագուհին, շատ լուսամիտ անձն լինելով, մեծ հոգ է տանում իր բոլոր հպատակների լուսաւորութեան ու բարեկեցութեան մասին։

Թամար թագուհու օրով Վրաստանում կառավարչական բարձր պաշտօններ էին վարում երկու հայազգի իշխաններ — Զաքարիա սպասալար և Իւանէ Աթաբէկ։ Դրանք մեծ աջակցութիւն են ցոյց տալիս

Թամար թագուհուն՝ Հայաստանը մահմեդականներից մաքրելու և երկիրը կառավարելու գործում։

ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Ջինգիզ խան

Հայերի հանգիստ ու խաղաղ կեանքը վրաց իշխանութեան ներքոյ տևում է ընդամենը՝ մօտ 50 տարի։

XIII-րդ դարի սկզբներում, Հայաստանը դարձեալ նոր և շատ աւելի սոսկալի արիւնհեղութիւնների ասպարէզ է դառնում։

Ամեն ինչ աւերող ու կործանող հեղեղի նման, իրար յետևից Հայաստան են թափւում մի քանի միմեանցից աւելի բարբարոս և կիսավայրենի ասիական ցեղեր։ Այդ թափառական ցեղերը յայտնի էին Թաթար, Թիւրք, Թիւրքմէն և այլ անուններով։

Դրանցից Թաթարները թէ ամենից զօրաւորն էին և թէ աւելի հեռուից էին գալիս։

Նրանց բնիկ հայրենիքը Սիբիրիայի և Չինաստանի միջև ընկած լեռնադաշտն էր։ Թաթարները բազմաթիւ մանր ցեղերի բաժանուած, նահապետական կեանք էին վարում և կառավարւում էին իրանց ցեղապետներով։ Իրանց ցեղապետներին Թաթարները կոչում են Խան։

XIII-րդ դարի սկզբներում Մոնղոլ Թաթարների ցեղապետ Ջինգիզ խանը, որ մի շատ քաջ, փառասէր ու պատերազմասէր մարդ էր, բոլոր անջատ Թաթարական ցեղերին միացնում և իր իշխանութեան տակ է առնում։

Ջինգիզ խանը տեսնելով, որ Թաթարները սոսկալի բազմացել և այլևս անկարող են իրանց աղքատ հայրենիքում բարեկեցիկ կեանք վարել, բազմաթիւ ցեղակիցների գլուխն անցած, գնում է նոր, հարուստ ու ընդարձակ երկիրներ գրաւելու։

Կարճ ժամանակի մէջ Ջինգիզ խանը, ամեն տեղ սոսկալի կոտորած ու հրդեհ տարածելով, նւաճում է համարեա ամբողջ Ասիան։ Ասիայի բոլոր մեծ ու փոքր թագաւորներն ու իշխանները գահնկեց է անում և իրան հպատակեցնում։

Շատ ցեղեր, ինչպէս օրինակ՝ Թիւրք, Թիւրքմէն և ուրիշներ, Ջինգիզ խանի սարսափներից զարհուրած, թողնում փախչում են իրանց միջին ասիական հայրենիքից։ Սրանք բոլորն էլ Թաթարներից ոչ պակաս սարսափներ տարածելով, Հայաստանի վրայով անցնում և տարածւում են Փոքր Ասիայի ու Միջագետքի զանազան կողմերը։

Ջինգիզ խանը նւաճում է նոյնպէս ընդարձակ Պարսկաստանը և դրանից յետոյ, երբ պատրաստւում էր արշաւել Եւրոպա, մեռնում է։

Թաթարները Հայաստանում

Ջինգիզ խանի մահով Թաթարական սոսկալի հեղեղը կանգ չէ առնում։

Նրա յաջորդ խանը հրաման է արձակում իր խառնիճաղանճ բանակին՝ շարունակել Ջինգիզ խանի կիսատ թողած աշխարհակալութիւնը։

Թաթարները Ջարմաղան անունով կառաւղի զօրապետի առաջնորդութեամբ մտնում են Հայաստան (1236 թ.) և անասելի արհաւիրքներ տարածում ամեն կողմ։

Հետևեալ ձևով է նկարագրում ժամանակակից

հայ պատմագիրը թաթարների այդ արշաւանքը.—

«Սարսափելի տեսարան էր ներկայացնում այդ մեծաղլուխ, անմօրուս, նեղ աչքով, տափակաքիթ, կարճ ոտներով ու զիլ ձայնով բարբարոսների բազմութիւնը։ Տղամարդիկ ձիերի վրայ նստած սրարշաւ գնում էին առջևից և սրով ճանապարհ բաց անում իրանց յետևից սայլերով եկող կանանց և երեխաների համար։ Այդ բարբարոսները մորեխի նման ծածկեցին ամբողջ երկիրը, անխնայ կոտորելով ամեն հասակի ու սեռի մարդկանց։ Կաթնակեր մանուկներին նրանք քարերին էին խփում, մատաղահաս աղջիկներին յափշտակում էին, իսկ հասակաւորներին սրի անցկացնում։ Ոչ մայրերի արտասուքներին էին ողորմում և ոչ ծերերի ապիտակ մազերին խղճում։ Հայոց աշխարհը դիակներով ծածկուեց և ոչ ոք չը կար որ նրանց թաղէր, որովհետև կենդանի մնացողները փախչում, թաղնւում էին բարբարոսներից»։

Այսպէս ամեն տեղ կոտորած ու կրակ սփռելով, թաթարները նւաճում են մէկը միւսի յետևից Հայաստանի բոլոր քաղաքներն ու բերդերը։ Զարմաղանը այն քաղաքների բնակիչներին էր միայն խնայում, որոնք յօժարութեամբ հպատակութիւն էին ցոյց տալիս, խոստանալով տարեկան որոշ հարկ վճարել և թաթարների թշնամիների դէմ պատերազմի գնալ։

Անիի հայ և օտար բնակիչները փորձում են դիմադրութիւն ցոյց տալ։ Զայրացած Զարմաղանը պաշարում է Անին, վերցնում է նրան և սոսկալի անգթութիւններ կատարում։ Անիի բոլոր տներն ու եկեղեցիները կողոպտւում են, իսկ բնակիչներին՝ թաթարները միմեանց մէջ բաժանելով՝ կամ կոտորում և կամ գերի են տանում։

Կարսեցիք, Անիում կատարած սարսափներից խրատուած, շտապում են քաղաքի բանալիները Զարմաղանին ուղարկել և հպատակութիւն ցոյց տալ։ Ընդունելով դրան, արիւնարբու թաթարները կարսեցիների հետ նոյն ձևով են վարւում, ինչպէս և անեցիների հետ (1239 թ.)։

Զարմաղանի մահից յետոյ, նրա յաջորդ Բաչու զօրավարի առաջնորդութեամբ թաթարները շարունակում են իրանց արշաւանքը։ Նրանք մտնում են Կարնոյ դաւառը, որ այդ ժամանակ Իկոնիայի սուլթանի տիրապետութեան տակ էր գտնւում։ Սուլթանը փորձում է դիմադրութիւն ցոյց տալ նրանց, բայց չարաչար յաղթւում ու փախչում է։ Թաթարները անցնում են Ծոփաց աշխարհը, ասպատակում և աւերում են ամբողջ Վասպուրականն ու Տուրուբերանը և մտնում Միջագետք, ուր հարուստ ու բազմամարդ քաղաքները թալանի և կոտորածի են մատնում (1242 թ.)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԹԱԹԱՐՆԵՐԻ ՕՐՈՎ

Համարեա թէ բովանդակ Ասիան քար ու քանդ անելուց և իրանց իշխանութեան տակն առնելուց յետոյ, թաթարական խանները սկսում են իրանց լայնածաւալ տէրութեան վարչական գործերով զբաղւել։ Ներանք ամբողջ երկիրը բազմաթիւ մասերի են բաժանում և ամեն մի մասում մի յատուկ պաշտօնեայ կարգում։ Այդ պաշտօնեաների պարտաւորութիւնն էր իրանց յանձնւած երկիրը կառավարել, ժողովրդից հարկ հաւաքել և խանին ուղարկել։

Հայաստանի վրայ կառավարիչ է նշանակւում խանի եղբայրը՝ Հուլաղու անունով։ Սա Հայաստանի

բոլոր բնակիչներին ցուցադրել է տալիս և տասը տարեկանից վեր բոլոր մարդկանց, բացի կանանցից ու հոգևորականներից հարկի տակ է դնում (1254թ.)։

Թաթարական իշխանության ժամանակ, Հայաստանում եղած հարկահանության մասին հետևեալ կերպով են պատմում ժամանակակից պատմիչները.—

«Ով հարկերի ծանրությունից փախչում էր, բռնում և սպանում էր։ Իսկ ով անկարող էր լինում նշանակած հարկը վճարել, պարտքի տեղ նրա որդոցն էին տանում։ Հարկը առնում էր փողով և մանուանդ բերքերով. ամեն մի բնակիչ պարտաւոր էր տալ մէկ սպիտակ դրամ, 100 լիտր ցորեն, 50 լիտր գինի, 2 լիտր բրինձ, 3 հատ տոպրակ, 2 պարան, մի նետ, մի պայտ։ Բացի դրանից՝ անասուններ ունեցողը պարտաւոր էր 20 սպիտակ դրամ վճարել և 20 անասունից մէկը խանին տալ։ Երկրի ծովակները, լճերը և բոլոր հանքերը իշխողների սեփականությունն էին կազմում. նրանցից օգտուել ցանկացողները պարտաւոր էին նոյնպէս մի որոշ տուրք վճարել»։

Թաթարական այդ ընդարձակ ու լայնատարած տէրությունն իր միահեծան իշխանությունը պահպանում է ընդամենը՝ մօտ 100 տարի միայն։

Այդ ժամանակի ընթացքում կիսավայրենի թաթարները, իրանցից աւելի զարգացած պարսիկներից և արաբներից ազդուելով՝ մահմեդականությունն են ընդունում։ XIII-դարի կիսում էլ նրանց ընդարձակ տէրությունը, արաբականի նման, սկսում է քայքայել և բազմաթիւ ինքնագլուխ խանությունների բաժանուել (1340 թ.)։

Հայաստանի Արևմտեան կողմում իշխանությունը թիւրքմէն ցեղի Ձեռքն է անցնում, արևելեան կող-

մում պարսիկների տիրապետությունն է վերահաստատուում, իսկ հարաւում քիւրդ բէկերն են զօրեղանում։

Հայաստանի ներսում էլ մի քանի մեծ ու փոքրը իշխանություններ են կազմուում, որոնցից ոմանք Բաղդատում նստող Հուլաղուի յաջորդներին հարկատու, իսկ ոմանք էլ բոլորովին անկախ են ձևում։

ԻԿՈՆԻԱՅԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՅԿԱՅԻԵԼԸ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՒՄԸ

Թաթարական տէրության անկումից մօտ կէս դար առաջ, քայքայել ու մաս-մաս էր եղել նաև Իկոնիայի սելջուկեան տէրությունը։



Նկար 25. Օսման

Այնտեղ XIII-րդ դարի սկիզբներում, սկսում է զօրեղանալ մի այլ ասիական ցեղ՝ թուրքերը, որոնք իրանց պետութեան հիմնադիր Օսմանի անունով կոչւում են Օսմանցիներ։

Մինչև թաթարների արշաւանքը թիւրքերը ապրում էին Միջին Ասիայում (Թիւրքեստանում)։ Ջինգիզ խանի արշաւանքի ժամանակ նրանց ցեղապետ Սուլէյմանն իր ընտանիքով ու բազմաթիւ մարդկանցով փախչում է և գալիս հաստատւում Բարձր-Հայքում։

Նրա մահից յետոյ, իր երէցօղուլ որդին գնում բնակւում է Իկոնիայի սելջուկ սուլթանի երկրում և նրա մօտ ծառայութեան մտնում։ Իր հաւատարմութեան և քաջութեան համար, նա Ալայէդդին սուլթանի սիրելին է դառնում և շատ բարձր դիրքի է հասնում։ Միևնոյն ժամանակ երէցօղուլը շատ հարստանում և ահագին կալւածների տէր է դառնում։ Իր որդին Օսմանը էլ աւելի է ընդարձակում իր հայրենական կալւածները և աւելի ևս զօրեղանում։

Այդ ժամանակ բիւզանդական կայսրութիւնը բաւականին թուլացած լինելով, Օսմանը պատերազմում է յոյների դէմ և մի քանի ամուր քաղաքներ գրաւում։ Ալայէդդին սուլթանի մահից յետոյ, երբ սելջուկեան տէրութիւնը բաժան-բաժան է լինում, Օսմանն իրան ինքնագլուխ թագաւոր է հռչակում և այդպիսով սելջուկեան տէրութեան վերատակների վրայ հիմնում Օսմանեան տէրութիւնը (1300 թ.), որը մինչև այսօր էլ գոյութիւն ունի։

ԼԱՆԿԹԱՄՈՒՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Ջինգիզ խանի հիմնած լայնատարած տէրութեան

քայքայումից մօտ կէս դար յետոյ, Հայաստանը մի նոր աղետալի թաթարական արշաւանքի է ենթարկւում։

Ջինգիզ խանի շառաւիղներից մէկը, Լանկթամուրը կամ Թիմուրլէնկ (կաղ Թիմուր) անունով, մտածում է նորից վերականգնել թաթարական տէրութիւնը։ Նա Միջին Ասիայի թափառական թաթարներից մի նոր ու ահռելի արշաւանք է կազմակերպում։ Սմբըղանդ մայրաքաղաքից Լանկթամուրը դուրս գալով, գնում, նւաճում է այն բոլոր ազգերն ու երկիրները, որ մի ժամանակ թաթարական տիրապետութեան տակ էին։

Այս թաթարական արշաւանքը նոյնպէս խիստ աղետաբեր է լինում այն բոլոր տեղերի համար, որտեղ է գնում Լանկթամուրը։ Պարսկաստանն ու Հընդկաստանը ողողւում են արիւնով, մարդիկ անխնայ կոտորւում և կտրած գլուխներից բուրգեր են կազմւում։ Մարդաշատ ու հարուստ քաղաքները նորից կործանւում ու կրակի են մատնւում։

Լանկթամուրը, այսպէս տակն ու վրայ անելով ամբողջ Պարսկաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանն ու Ասորիքը, գալիս մտնում է Հայաստան (1387 թ.)։

Շատ հայեր առաջուց արդէն լսած լինելով Լանկթամուրի կատարած սոսկումները, նախօրօք թողել, փախել էին լեռներն ու անմատչելի տեղեր։ Սակայն այդպիսով նրանք չեն փրկւում թաթարական աղէտներից։ Մօտ հինգ տարի շարունակ Լանկթամուրի խառնիճաղանճ զօրքը անպատմելի սարսափներ է տարածում Հայաստանի բոլոր կողմերում։ Բազմաթիւ քաղաքներ ու գիւղեր կողոպտւում ու կրակի են մատնւում, բնակիչներին կոտորում կամ գերի են տա-

նում, իսկ կենդանի մնացածներն էլ փախչում, լեռները են ապաստանում։

Լանկթամուրի պայրոյթին ու կատաղութեան զոհերն եղան մանաւանդ Վան և Սրճէշ քաղաքները։

Այս բոլորի հետևանքն այն է լինում, որ երկիրը մի քանի տարի անմշակ է մնում, մարդիկ վար ու ցանքս չեն անում, ուստի և թաթարական արհաւիրքներին հետևում է սոսկալի սովը (1393 թ.)։ Պատմում են, որ այդ սովի ժամանակ, մարդիկ ուտելու ոչինչ չը գտնելով, սկսել են միմեանց միս ուտել։ Այրը կերել է իր կնոջը, իսկ ծնողները՝ իրանց հարազատ զաւակներին։

Ամբողջ Մեծ Հայքը նւաճելուց յետոյ, Լանկթամուրն անցնում է Փոքր Հայք։ Թաթարների այդտեղ կատարած գազանութիւնները գերազանցում են մինչև այդ ժամանակ բոլոր եղածները։ Պատմում են, որ Սեբաստիա քաղաքն առնելուց և ամբողջովին հիմնայատակ անելուց յետոյ, Լանկթամուրը մարդկանց ու կանանց կապել է տւել ձիերի պոչերից և բաց թողել դաշտի մէջ, ապա մանուկներին էլ ձիերի ոտքերի տակ կոխոտել տւել և մօտ 4,000 հայ գինուոր էլ կենդանի թաղել։ Այդ կենդանի թաղած գինուորների տեղը կոչւել է սեւ հողեր։

Սեբաստիայից Լանկթամուրը մտնում է Օսմանեան երկրի սահմանները, որն արդէն մի զօրաւոր տէրութիւն էր։

Դրանից առաջ օսմանցիք ոչ միայն Իկոնիայի սուլթանութեան ամբողջ երկիրներին էին տէր դառել, այլ և նւաճել էին բիւզանդական շատ երկիրներ՝ թէ Փոքր Ասիայում և թէ եւրոպական սահմաններում։

Լանկթամուրի Օսմանեան երկիրը մտած միջոցին,

սուլթան Բայազէդը Կոստանդնուպոլսի պաշարումով էր զբաղւած։ Լանկթամուրի գալը լսելուն պէս, Բայազէդը իսկոյն թողնում է բիւզանդական կայսրութեան մայրաքաղաքի պաշարումը և գալիս է Լանկթամուրի առաջը կտրելու։ Սակայն Լանկթամուրը յաղթում է, քոնում օսմանեան սուլթանին և փակում երկաթէ վանդակի մէջ։

Այդ փառաւոր յաղթութիւնից յետոյ, Լանկթամուրն ահագին աւարով ու բազմաթիւ գերիներով վերադառնում է Սըմրղանդ, ուր և շատ ժամանակ չանցած մեռնում է (1405 թ.)։

Հայաստանը թաթարներից յետոյ

Լանկթամուրի մահից յետոյ, նրա մեծ տէրութիւնը նոյնպիսի արագութեամբ է քայքայւում, ինչպէս որ քայքայւել էր Ջինգիզ խանի տէրութիւնը։

Բոլոր նւաճւած ազգերն ու ցեղերը միմեանց յետևից գլուխ են բարձրացնում և նորից անկախութիւն ձեռք բերում։

Այս շրջանում Հայաստանը դարձեալ անվերջ պատերազմների ասպարէզ է դառնում Լանկթամուրի յաջորդների և ապստամբ քիւրդ, թիւրքմէն և այլ ցեղապետների միջև։ Դրանցից ամենից աւելի զօրեղանում է Միջագետքի թիւրքմէն Ուզուն-Հասանը, որը պարսից գահը բարձրանալով Պարսկաստանի ու Հայաստանի մի հսկայ տէրն է դառնում (1468 թ.)։

Այդ ժամանակներից սկսած, պատերազմների մի նոր շարք է սկսւում Հայաստանի հողի վրայ, նման այն պատերազմների, որ մի ժամանակ տեղի ունէին պարսից տէրութեան և բիւզանդական կայսրութեան միջև։

Այժմ, սակայն, այլևս չէր կար բիւզանդական կայսրութիւնը։ Օսմանցիք, Մեհեմմէդ II սուլթանի օրով, արդէն գրաւել էին Կոստանդնուպոլիսը (1453 թ.) և իրանց մայրաքաղաքն այնտեղ տեղափոխելով, տէր էին դառել այդ կայսրութեան բոլոր երկիրներին։ Այժմ օսմանցիք էին, որ բռնել էին Բիւզանդիայի տեղը և շարունակում էին նոյն պատերազմները։

Այդ կործանարար պատերազմների փոփոխական բախտով տևում են աւելի քան երկուսուկէս դար։ Այդ շրջանում Հայաստանը երբեմն պարսից, երբեմն օսմանցոց տիրապետութեան տակ է ընկնում։

Հայ ժողովուրդը այդ պատերազմների ժամանակ նոյնքան նեղութիւններ ու տառապանքներ է կրում, որքան թաթարական և այլ արշաւանքների ժամանակ։ Բացի թալանելուց, կրակի ու սրի ճարակ դառնալուց, հայերը մեծ բազմութեամբ ստիպւած էին մի քանի անգամ, կամովին կամ բռնի կերպով, իրանց հայրենիքը թողնել և օտար երկիրներ գաղթել։ Եւ այդ գաղթականութիւնները աւելի ու աւելի էին նւազեցնում հայ ժողովրդի թիւը, քան բոլոր պատերազմները ու կոտորածները։

Շահ Աբաս

Պարսկա-թիւրքական պատերազմների շրջանում տեղի ունեցած գաղթականութիւններից, ամենից նշանաւորը պարսից շահ Աբասի օրով կատարւածն է։

Երբ շահ Աբասը պարսից գահի վրայ է բարձրանում, ամբողջ Հայաստանն արդէն օսմանցիների իշխանութեան տակ էր ընկել։

Օսմանցիք այնպիսի խիստ հալածանքներ են սկսում հայերի դէմ, որ սրանք, ահագին բազմութեամբ գաղթում են զանազան օտար երկիրներ։ Ներանցից շատերը, ինչպէս և Մելքիսեդեկ կաթողիկոսը, անցնում են Պարսկաստան և Աբաս շահի հովանաւորութեան տակ են մտնում։

Ինչպէս որ Մեծն Տիգրանը չափազանց մեծ նշանակութիւն էր տալիս յոյն և ուրիշ լուսաւոր ազգերի գաղթականներին, նոյնպիսի նշանակութիւն էլ շահ Աբասն էր տալիս հայ գաղթականներին։ Նա կամենում էր Պարսկաստանի վաճառականութիւնն ու արհեստները հայերի միջոցով զարգացնել։

Այդ պատճառով իր հովանաւորութեանն ապաւինող հայերին նա շատ սիրով է ընդունում և բնակութեան տեղեր է տալիս։

Իրանց յօժար կամքով Պարսկաստան գաղթած հայերի թիւը, սակայն, շատ էլ մեծ չէր, ուստի շահ Աբասը մտածում էր յարմար առիթից օգտւելով, աւելի մեծ չափերով իրագործել իր վաղուցւայ նպատակը։

Շատ ժամանակ չանցած, շահ Աբասը, օգուտ քաղելով թէ հայերի և թէ քիւրդ բէկերի դժգոհութիւններից, որոնք նոյնպէս գանգատւոր էին օսմանցիներից, բազմաթիւ զօրքով յարձակւում է Աւրպատականի վրայ։ Նա գրաւում է Թաւրիզը, մտնում է Հայաստան և տիրում Երևանին։ Այդտեղից շահ Աբասը ասպատակներ է ցրւում ամեն կողմ, որոնք ուր որ հասնում են, ամեն ինչ թալանում ու քանդում են։ Ներանք շահի կարգադրութեամբ բազմաթիւ ժողովուրդ ձն գերում և Պարսկաստան տեղափոխում։

Իր արշաւանքը շարունակելով, շահ Աբասը հասնում է մինչև Կարս։ Այդտեղ նա իմանում է, որ օսմանցիք ահագին պատրաստութեամբ գալիս են իր վրայ։ Զբվաստահանալով իր ոյժին, թէ պիտի կարո-

ղանայ զօրաւոր թշնամուն դիմադրել, շահ Աբասը որոշում է յետ նահանջել։

Հայերի գաղթը

Իր նահանջի ժամանակ, շահ Աբասը բազմաթիւ հայ գաղթականներ իր հետ Պարսկաստան է տանում։

Նա Հայաստանի արևելեան գաւառները զօրագնդեր է ուղարկում, հրամայելով, որ հայ ժողովրդին իրանց ամբողջ ընտանիքներով և ստացուածքներով Պարսկաստան գաղթեցնեն։ Նա խստիւ պատուիրում է իր զօրավարներին, որ գաղթել չկցանկացողներին անխնայ սպանեն, իսկ գաղթողների էլ տունն ու տեղը կրակի տան այրեն։

Այդ եղանակով շահ Աբասը մտածում էր Ատրպատականի ամայանալից երկիրները բոլորովին աւերակ դարձնել, որպէսզի օսմանցիք հնարաւորութիւն չունենան այդ հարուստ ու բարեբեր երկրին մօտենալու և նրան յետ խլելու։

Օսմանցիների արագութեամբ մօտենալու պատճառով, գաղթը շատ շտապ կերպով է կատարւում։ Գաղթողները հազիւ են կարողանում իրանց ունեցածի մի չնչին մասը հետները վերցնել. մնացած բոլոր հարստութիւնը կրակի են մատնւում։ Օսմանցիների առջևից շտապով յետ նահանջող պարսիկները, հայ գաղթականներին քշում են ոչխարների հօտի նման, իսկ յետ մնացողներին անխնայ կերպով սպանում ու կոտորում են։

Մանաւանդ սոսկալի է լինում գաղթականների Արաքս գետից անցնելը։ Գետի վրայ կամուրջ չկար, պիտի անցնէին լաստերով։ Օսմանցիք վրայ էին հասնում, ուստի հարկաւոր էր շտապել։ Նկատելով այդ, շահ Աբասը հրամայում է լաստերով միայն զօրքին փոխադրել, իսկ գաղթականներին ստիպել, որ լողալով անցնեն։

Բազմաթիւ հայեր, մանաւանդ կանայքն ու երեխաները, որոնք լողալ չգիտէին, զոհ են գնում վարարած Արաքսի ալիքներին։



Նկ. 26. Շահ Աբաս

Այդ նոյն ժամանակ շահ Աբասը գաղթեցնում է նաև Արաքսի ափին գտնուող հարուստ Ջուղա քաղաքի բնակիչներին։ Պարսիկները Ջուղան էլ են կրակի մատնում և այրում (1605 թ.)։

Բազմաթիւ նեղութիւններով ու տառապանքներով Պարսկաստան տարուած հայ գաղթականներին շահ Աբասը շատ լաւ վերաբերմունք է ցոյց տալիս։ Նա

նրանց բնակեցնում է իր Սպահան մայրաքաղաքում ու նրա շրջակայքում, իսկ Ջուղայեցիներին յատուկ տեղ է տալիս Սպահանի հարաւային կողմում, ուր նրանք մի նոր քաղաք են հիմնում՝ Նոր-Ջուղա անունով։

Բացի դրանից՝ շահ Աբասն իր տարած հայ գաղթականներին, ինչպէս և Պարսկաստանում ապրող բոլոր հայերին, թէ կրօնի կատարեալ ազատութիւն և թէ ամեն տեսակ արտօնութիւններ է տալիս։ Այդ բոլորի շնորհով հայերը, մանաւանդ Նոր-Ջուղայեցիք, կարճ ժամանակի մէջ նորից շատ հարստանում և բարեկեցիկ վիճակի տէր են դառնում։

ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ

Պարսից տիրապետութեան օրով Հայաստանը, ինչպէս և ամբողջ Պարսկաստանը, բազմաթիւ մասերի էր բաժանուած, որոնցից ամեն մէկը, Հայաստանի նախկին նախարարութիւնների նման, մի-մի առանձին և կիսանկախ իշխանութիւն էր կազմում։ Պարսկական այդ իշխանութիւնները կոչւում էին *խանութիւններ*՝ իսկ իշխանները՝ *խաներ*։

Ամեն մի խան, հայ նախարարների նման, իր երկրի սահմաններում կատարեալ ինքնիշխան էր։ Նա պարտաւոր էր միայն պարսից թագաւորին մի որոշ տուրք վճարել և իր զօրքով պատերազմի ժամանակ նրան օգնել։

Այդ կիսանկախ պարսից խանութիւնների սահմաններում ապրող բոլոր հայերը, սակայն, միևնոյն վիճակի մէջ չէին գտնւում։ Ղարաբաղի (Սիւնեաց և Արցախի նահանգները) հայերը, պարսից տիրապետութեան տակ ընկնելուց յետոյ, կարողացել էին

իրանց լեռնոտ երկրի շնորհով, դեռ ևս իրանց կիսանկախ դրութիւնը պահպանել։ Նրանք ունէին իրանց հայ իշխանները, որ կոչւում էին *մելիքներ*։

Ամեն մի հայ մելիք, իր փոքրիկ երկրի սահմաններում, նոյնպիսի ինքնիշխան տէր էր, ինչպէս և պարսիկ խանը իր աւելի ընդարձակ երկրում։

Մելիքն էր կառավարում իր հպատակ ժողովրդին և միջնորդ հանդիսանում սրա և՝ իրանից աւելի մեծ իշխանութիւն ունեցող՝ խանի միջև։ Ինչպէս որ խանն էր պարտաւոր շահին տուրք վճարել և օգնել պատերազմի ժամանակ, այնպէս էլ մելիքը պարտաւոր էր տուրք տալ և օգնել խանին։

Հայ մելիքների իշխանութիւնը ժառանգական էր. հօր մահից յետոյ մելիք էր դառնում անդրանիկ որդին, իսկ միւս եղբայրները կոչւում էին *ըէկներ*։

Ղարաբաղի հայ մելիքութիւնները թւով հինգ էին, որոնց բնակիչների ամբողջ թիւը 300,000-ի էր հասնում։ Դրանցից երկու մասը հայեր էին, իսկ մի մասը թուրքեր կամ պարսիկներ։ Իւրաքանչիւր մելիք իր բերդն ու ամրոցն ունէր, և պէտք եղած ժամանակ նա պաշտպանում էր իր փոքրիկ զօրագունդի օգնութեամբ։

Մելիքների ծագումները եւ Մեծն Պետրոս

Պարսից խանները, հայ նախարարների նման, համարեա թէ երբէք հաշտ չէին ապրում միմեանց հետ։ Նրանք կամ իրարու դէմ կռւում և կամ մի մի քանիսը միանալով՝ շահի դէմ էին ապստամբում։

Այդ անվերջ կռիւներն ու արտաքին թշնամիների յարձակումները, XVIII-րդ դարի սկզբներում

մեծ շփոթութիւններ էին առաջացրել ամբողջ Պարսկաստանում, որոնց պատճառով պարսից շահի իշխանութիւնը սաստիկ թուլացել էր։

Ահա հէնց այդ թուլութիւնից ու շփոթութիւններից կամենում են օգուտ քաղել Ղարաբաղի հայ մելիքները։ Նրանք մտածում են մի քրիստոնեայ տէրութեան օգնութեամբ թօթափել պարսից լուծը և մի անկախ հայկական իշխանութիւն ստեղծել։

Այդ նպատակով նրանք մի գաղտնի դեսպանութիւն են ուղարկում Եւրոպա։ Դեսպանութեան գլուխը էին Հնդկաստանցի մի հայ՝ Իսրայէլ Օրի և մի վարդապետ՝ Մինաս անունով։

Դեսպանութիւնը մի քանի եւրոպական իշխանների ու թագաւորների հետ տեսակցելուց և օժանդակութեան խոստումներ ստանալուց յետոյ, անցնում է Պետերբուրգ, ուսաց Մեծն Պետրոս կայսեր աջակցութիւնն ևս խնդրելու (1706 թ.)։

Ռուսաստանը Մեծն Պետրոսի օրով սկսել էր սաստիկ զօրեղանալ ու ընդարձակուել։ Այդ լուսամիտ կայսրն անձամբ ճանապարհորդած լինելով եւրոպական զանազան երկիրներում, տեսել էր, թէ ինչպէս իր երկիրն ու ժողովուրդը սաստիկ յետ են մնացել եւրոպական լուսաւորութիւնից։ Ռուսաստան վերադառնալով, նա սկսել էր բռնի միջոցներով իր երկրի բոլոր հին կարգերն ու սովորութիւնները տապալել և եւրոպական կարգ ու կանոն մտցնել։

Մեծն Պետրոսի ամենամեծ ձգտումներից մէկն էլ այն էր, որ Ռուսաստանը նոյնպէս ծովային հաղորդակցութիւններ ու նաւատորմիղ ունենայ։ Մինչ այդ ժամանակ Ռուսաստանի սահմանները ծովերից դեռ շատ հեռու գտնուելով, ռուսները զուրկ էին մնացել դուրսի աշխարհի հետ հաղորդակցելու հեշտ մի-

ջոցներից։ Դրա համար էլ Ռուսաստանը, մինչև Մեծն Պետրոսի թագաւորութիւնը, մի տեսակ փակուած կեանք էր վարում և անկարող, օտարների հետ յաճախ շփուելով, արագութեամբ առաջադիմել։

Իր երկիրը այդ դրութիւնից դուրս հանելու մըտքով, Մեծն Պետրոսը մտածում էր Ռուսաստանի սահմանները այն աստիճան ընդարձակել, որ նա թէ հիւսիսից և թէ հարաւից մօտ լինի ծովերին։ Հիւսիսում արդէն ընդարձակ նուաճումներ կատարելով, նա մօտեցել էր Բալտիկ ծովին և նրա մօտ մի նոր քա-



Նկար 27. Մեծն Պետրոս

ղաք հիմնել՝ Պետերբուրգ անունով։ Այդտեղ էլ նա Մոսկվայից տեղափոխել էր իր գահը։

Սակայն դրանով լրացած չէր Մեծն Պետրոսի ընդարձակ ծրագիրը։ Նա ցանկանում էր հարաւից էլ Սև ու Կասպից ծովերին մօտենալ, որպէսզի այդ կողմերից նոյնպէս Ռուսաստանը արտաքին աշխարհի հետ հաղորդակցութեան միջոցներ ունենայ։

Ահա այդպիսի ծրագիրներով առաջնորդուած Մեծն Պետրոսին է ներկայանում Ղարաբաղի մելիքների ուղարկած դեսպանութիւնը։

Մեծն Պետրոսը շատ ուրախութեամբ և սիրով է ընդունում հայ դեսպաններին մտածելով, որ ինքը կարող է օգուտ քաղել այդ հանգամանքից և հայերի օգնութեամբ նւաճել պարսիկներից Կասպից ծովի արևելեան ու հարաւային երկիրները։

Նա ամեն տեսակ խոստումներ է տալիս հայ պատգամաւորներին, և Իսրայել Օրիին՝ դեսպանի պատուակով, ուղարկում է Պարսկաստան, այնտեղի գործերի դրութիւնն իմանալու և հայերի ապստամբութիւնը պատրաստելու համար։

Ի. Օրին Պարսկաստանի գործերին մօտիկից ծանօթանալուց և հայ իշխանաւորների հետ տեսակցելուց յետոյ, վերադառնում է Պետերբուրգ ու յայտնում Մեծն Պետրոսին, թէ հայերը պատրաստ են ապստամբութեան և միայն մի նշանի են սպասում։

Դաւիթ բէկ

Այն ժամանակ, երբ դեռ հայ դեսպանները բանակցութեան մէջ էին Մեծն Պետրոսի հետ, Պարսկաստանում մեծ շփոթութիւններ ու խառնակութիւններ են ընկնում։ Մի կողմից կովկասեան լեռնականներն են ապստամբում հայկական նահանգները։

Այդ շփոթութիւնից օգտւելով, Մեծն Պետրոսը իր զօրքով մտնում է Պարսից տէրութեան սահմաններն ու գրաւում Դերբենտը, Բագուն ու Գիլանը։

Ղարաբաղի մելիքները, առիթը շատ յարմար համարելով և վստահանալով ռուսաց կայսրի տւած խոստումներին, որոշում են ապստամբութեան դրօշակ բարձրացնել։ Նրանք դիմում են իրանց հայրենակից Դաւիթ Բէկին, որ Վրաստանում մեծ անուն էր հանել իբրև քաջ և փորձառու զօրապետ, և հրաւիրում նրան հայկական շարժման գլուխ կանգնել։

Դաւիթ բէկը մի խումբ կարիճ հայերի հետ գալիս է և սկսում գործել։

Կարճ ժամանակի մէջ Դաւիթ բէկի շուրջն են հաւաքւում հեռուհեռէ, աւելի քան մի քանի հազար զինւած հայեր, որոնք իրանց հմուտ հրամանատարի առաջնորդութեամբ, մի շարք փառաւոր յաղթութիւններ են տանում թէ Ղարաբաղը ասպատակող լեռնական ցեղերի և թէ պարսից խանների դէմ։

Դաւիթ բէկն իրան բնակութեան տեղ է ընտրում Հալիձոր աւանը, ուր մի ամուր բերդ շինելով, այնտեղից է շարունակում իր պատերազմական գործողութիւնները (1724 թ.)։

Շրջակայ պարսից խանները, Ղարաբաղի հայերի յաջողութիւնները տեսնելով, միանում են և հայերից շատ աւելի մեծ ոյժով յարձակւում Հալիձորի վրայ, սակայն յաղթւում են և մեծ կորուստով յետ քաշւում։

Այդպէս ամբողջ Միւնեաց երկիրը ապստամբներից մաքրելով ու խաների զօրութիւնը խորտակելով, Դաւիթ բէկն իր իշխանութիւնն է հաստատում այդ երկրում։

Այդ միջոցին Պարսկաստանի վրայ են յարձակւում նաև օսմանցիք։

Սրանք անարգել առաջ գնալով, հետզհետէ գրաւում են Երևանը, Նախիջևանը, Թաւրիզն ու Համադանը։ Օսմանցիք մի զօրաբաժին էլ ուղարկում են Դաւիթ բէկի վրայ։

Հայերը, մասամբ օսմանցիների զօրութիւնից սարսափած, մասամբ էլ Դաւիթ բէկի իշխանութիւնից դժգոհ, երես են դարձնում նրանից և մինչև իսկ նրա թշնամիների կողմն են անցնում։ Դաւիթ բէկին հաւատարիմ են մնում ընդամենը մօտ 450 հայեր։

Ջնայելով այդ չնչին ոյժին, Դաւիթ բէկն ու իր կողմնակիցները այնպիսի քաջութեամբ ու համառութեամբ են կռւում օսմանցիների անհամեմատ աւելի մեծ զօրքի դէմ, որ վերջնական յաղթութիւնը հայերի կողմն է մնում։ Օսմանցիք շփոթած փախուստի են դիմում։

Երբ պարսից շահը լսում է Դաւիթ բէկի սարած փառաւոր յաղթութիւնները օսմանցիների դէմ, շատ թանկագին ընծաների հետ, մի հրովարտակ է ուղարկում, որով հաստատում է նրան Սիւնեաց իշխանութեան մէջ, տալով նրան իշխանաց իշխան տիտղոսը և իր անունով դրամ կտրելու իրաւունք։ Սակայն Դաւիթ բէկն այդ արտօնութիւնները երկար չէ վայելում և մեռնում է (1782 թ.)։

Դաւիթ բէկի մահից յետոյ, Սիւնեաց երկրի անկախութիւնն էլ հազիւ մէկ տարի է տևում։ Օսմանցիք կրկին անգամ և աւելի մեծ զօրքով յարձակւում են Հալիձորի վրայ, առնում են բերդը և բոլոր բնակիչներին սրի անցկացնում։

Թէ այդ ժամանակ և թէ դրանից առաջ հայերը մի քանի անգամ դեսպանութիւններ են ուղարկում Պետերբուրգ և ռուսաց կայսրից օգնութիւն խնդրում օսմանցիների դէմ։ Նրանց բոլոր խնդիրները, սակայն, ապարդիւն են անցնում։ Պետրոս Մեծը այդ ժամանակ շատ աւելի կարևոր գործերով զբաղւած, ոչ միայն անկարող էր հայերին օգնել, այլ և իր գրաւած Կասպից ծովեզերեայ երկիրներից չէտ էր քաշել իր զօրքը։ Այդ երկիրների գրաւումը նա յետաձգել էր մի ուրիշ աւելի յարմար ժամանակի։

Ռուսական նւաճումները Հայաստանում

Մեծն Պետրոսից ոչ մի օգնութիւն չըստանալը բոլորովին չէ յուսահատեցնում պարսից և օսմանցոց լուծերի տակ տառապող հայերին։ Նրանք Մեծն Պետրոսի յաջորդների օրով էլ շարունակում են բանակցութիւններ վարել և օգնութիւն խնդրել ռուսաց արքունիքից։

Պետրոսի յաջորդները երկար ժամանակ հնարաւորութիւն չունէին Հայաստանի գործերով զբաղւելու։ Նրանք առայժմ, օգուտ քաղելով հայերի դէպի ռուսները ունեցած մեծ համակրութիւնից, բազմաթիւ հայեր են գաղթեցնում դէպի Ռուսաստան։ Այդ գաղթականներին նրանք ընդարձակ հողեր ու շատ արտօնութիւններ տալով, բնակեցնում են Ռուսաստանի հարաւային մասերում — Նոր-Նախիջևան, Ղզլար, Մոզդոկ, Աստրախան և այլն։

XVIII-րդ դարի վերջերին միայն ռուսները մի շարք պատերազմներ են սկսում նախ պարսիկների և ապա օսմանցիների դէմ և միմեանց յետևից հետզհետէ գրաւում ամբողջ Վրաստանն ու Հայաստանի մի քանի նահանգները։

Այսպէս՝ պարսիկների հետ ունեցած վերջին պատերազմով, ռուսները գրաւում և տէր են դառնում Հայաստանի այն մասին, որ գտնւում է Արաքս և Կուր գետերի միջև, այն է՝ Երևանի և Գանձակի նահանգներն ու ամբողջ Ղարաբաղը (1827 թ.)։

Օսմանցիներից էլ նրանք առնում են Ախալցխան և Ախալքալաքը՝ իրանց շրջակայ գիւղերով (1828 թ.) ու Կարսի ընդարձակ շրջանը (1877 թ.)։

Այդպիսով Հայաստանը XIX-րդ դարի մէջ երեք մասի է բաժանւում. Մեծ Հայքի մեծագոյն մասը և ամբողջ Փոքր Հայքը ենում են օսմանցիների տիրապետութեան տակ, Մեծ Հայքի երկրորդ մասը անցնում է ռուսների ձեռքը, իսկ նրա երրորդ և ամենափոքր մասը՝ ենում է պարսիկներին։

Թէ պարսիկների և թէ օսմանցոց հետ եղած բոլոր պատերազմների ժամանակ, հայերը բազմաթիւ ծառայութիւններ ու մեծ աջակցութիւն են ցոյց տալիս ռուսներին։ Բացի այն, որ նրանք ամեն տեղ ռուսաց զօրքերի համար ուղեցոյցների դեր էին կատարում, բազմաթիւ կամաւորներ էլ մտած ռուսաց բանակի մէջ, անձնւիրաբար կռւում էին իրանց վաղեմի թշնամիների դէմ։

Վերջին ռուս պարսկական պատերազմի ժամանակ շատ մեծ դեր է կատարել ու մեծ ծառայութիւններ մատուցել ռուսներին՝ այն ժամանակւայ Վրաստանի հայոց առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին։ Այդ բարձրաստիճան հոգևորականը, ռուսաց բանակի գլխաւոր հրամանատար Պասկևիչի հետ միացած, ձիու վրայ նստած և խաչը ձեռքին, առաջնորդում էր հայ կամաւորների զօրագունդը։ Նա շարունակ յորդորում էր հայերին՝ իրանց ձեռքից եկած օգնութիւնը չը խնայել ռուսներին։

Թէ ռուս-պարսկական և թէ ռուս-թրքական պատերազմների միջոցին, ռուսաց բանակում ծառայութեան մէջ էին գտնւում շատ հայ զօրավարներ։ Իրանք իրանց քաջութեան և պատերազմական տաղանդի շնորհով, ռուսաց նշանաւոր զօրավարների շարքն են դասւում։ Բարձրաստիճան այդ հայ զօրավարներն էին՝ իշխաններ Մադաթեան, Լօրիս-Մելիքեան, Շոլկովնիկեան, Լազարեան, Տէր-Ղուկասեան և ուրիշներ։

Հայերի կողմից ռուսներին ցոյց տւած օգնութիւնն ու աջակցութիւնը ասատիկ գրգռում ու կատաղեցնում է թէ պարսիկներին և թէ օսմանցիներին։ Նրանք սկսում են թշնամաբար վերաբերւել հայերին և խիստ հալածանքներ են հանում նրանց դէմ։

Այդ հալածանքներից ազատւելու և քրիստոնեայ ու քաղաքակիրթ Ռուսաստանի տիրապետութեան տակ հանգիստ կեանք վարելու համար, բազմաթիւ հայեր գաղթում են Հայաստանի ռուսական բաժինը։ Այդ գաղթականութիւնների շնորհով ռուսական Հայաստանի հայ բնակչութիւնը հետզհետէ բազմանում է։

Այսպէս 1827 թւականի ռուս-պարսկական պատերազմից յետոյ, Պարսկաստանից ռուսաց սահմաններն են գաղթում աւելի քան 40,000 հայեր։ Դրանք բնակութիւն են հաստատում Նախիջևանի և Երևանի գաւառներում։ 1728 թւականի ռուս-թրքական պատերազմից յետոյ, Թիւրքիայից նոյնպէս ռուսական սահմաններն են գաղթում 90,000 հայեր, որոնք վերաբնակւում են Ախալցխայի և Ախալքալաքի գաւառներում։ Թիւրքիայից մեծ բազմութիւն էլ գաղթել է 1877 թ. պատերազմից յետոյ, որոնք մեծ մասամբ բնակւել են Կարսի և Երևանի շրջաններում։

ՌՈՒՍԱՀԱՅՔ

Հայերը երեք տարբեր քաղաքակրթութիւն ունեցող ազգերի տիրապետութեան տակ ընկնելուց յետոյ, իրանց բարեկեցութեան, զարգացման ու քաղաքակրթութեան աստիճանով սկսում են հետզհետէ միմեանցից բոլորովին տարբերուել։

Հայ ազգի այդ երեք հատուածներից շատ աւելի բախտաւոր վիճակ են վայելում քաղաքակիրթ Ռուսաստանի բաժնում ապրող հայերը։ Սրանք կեանքի և ստացուածքի ապահովութիւն վայելելով, անձնատուր են լինում խաղաղ աշխատանքի և կարճ ժամանակի մէջ բարեկեցիկ դրութեան են հասնում։ Այդ բանին չափազանց նպաստում է և այն, որ ռուսները Կովկասին, ինչպէս և Անդրկովկասի հայկական նահանգներին տիրանալով, հաղորդակցութեան յարմար միջոցներ են հաստատում (հեռագիր, երկաթուղի և խճուղի)։ Այդպիսով ազգաբնակութեան միջոց է տրւում իր արդիւնաբերութիւնն ու վաճառականութիւնը զարգացնելու։

Հաղորդակցութեան այդ յարմար միջոցների շնորհով, ռուսաց տիրապետութեան օրով, Կովկասի առևտուրն և արդիւնագործութիւնը այնպիսի մեծ չափերի են հասնում, որպիսին երբէք չէր եղել նախորդ դարերում։

Շնորհիւ այն հանգամանքի, որ Կովկասի քաղաքներից ամենից առաջ վրաց նախկին մայրաքաղաք Թիֆլիսն է երկաթուղիով կապւել մայր-Ռուսաստանի հետ, հէնց Թիֆլիսն էլ ամենից շուտ է զարգացել ու բազմամարդ դարձել։ Հայերը, իբրև առևտրական գործերի մէջ խիստ հմուտ ժողովուրդ, շատ վաղ գնահատելով Թիֆլիսի դիրքը, մեծ բազմութեամբ

գնացին գաւառներից տեղափոխւել ու այնտեղ են հաստատուել։ Թիֆլիսը ամբողջ Կովկասի, ինչպէս և բոլոր ռուսահայերի, թէ առևտրական և թէ մանաւանդ մտաւոր կենտրոնն է դարձել։

Այդ հանգամանքը Ներսէս աշտարակեցին շատ լաւ ըմբռնելով, Թիֆլիսում առաջին անգամ (1824 թ.) հիմնում է մի միջնակարգ դպրոց, որն իր անունով կոչւում է Ներսիսեան հոգեւոր դպրոց և որը մինչև այսօր էլ գոյութիւն ունի։

Ներսէսն իր կաթողիկոս դառնալուց յետոյ էլ, մեծ խնամք է ցոյց տալիս թէ ընդհանրապէս հայոց դպրոցների բազմանալու և թէ մասնաւորապէս Ներսիսեան դպրոցի յարատևութեան ու բարեկարգութեան մասին։ Նա հարուստ կալւածներով ապահովում է այդ դպրոցի գոյութիւնը։

Ներսիսեան դպրոցը հիմնւելուց մօտ տաս տարի առաջ, Մոսկւայում բացւել էր մի այլ հայկական ուսումնարան, ուր նոյնպէս մինչև այսօր էլ բազմաթիւ հայ մանուկներ միջնակարգ կրթութիւն են ստանում։ Այդ ուսումնարանն էլ իր հիմնադիր Յովակիմ Լազարեանի անունով կոչւում է Լազարեան ճեմարան։ Աւելի ուշ (1874 թ.), Էջմիածնում, Գէորգ IV կաթողիկոսը հիմնում է մի հոգևոր ճեմարան, որ իր անունով կոչւում է Գէորգեան ճեմարան։

Ռուսահայերի լուսաւորութեանն ու բարգաւաճմանը չափազանց նպաստում են մանաւանդ ռուսաց պետական ուսումնարանները, մամուլն ու գրականութիւնը։

Կովկասն ու Անդրկովկասը նւաճելուց յետոյ, ռուսները այդ երկրի համար եթէ բոլոր քաղաքներում հետզհետէ մի շարք գիմնազիաներ և այլ միջնակարգ երկու սեռի ուսումնարաններ են հիմնում։

Այդ ուսումնարաններում բազմաթիւ հայ աշակերտները իրանց կրթութիւնը վերջացնելուց յետոյ, դնում են Ռուսաստանի համալսարաններն ու այլ բարձրագոյն դպրոցները, իրանց ուսումը շարունակելու։

Եւրոպական գիտութիւններով օժտուած այդ հայ երիտասարդները հայրենիք են վերադառնում և չափազանց մեծ զարկ են տալիս իրանց ժողովրդի առաջդիմութեանն ու լուսաւորութեան գործին։

Այդ համալսարանական երիտասարդներն են գլխաւորաբար, որ հիմք են դնում ու զարգացնում ռուսահայոց մամուլն ու գրականութիւնը։

Ռուսահայ ականաւոր այլ գրականագէտներն էլ, որոնք հնարաւորութիւն չեն ունեցել համալսարանական ուսում ստանալու, ինքնակրթութեամբ են զարգանում ռուսական մամուլի և գրականութեան միջոցով, որը բաւականին ու հարուստ է թէ ինքնուրոյն և թէ թարգմանական գրւածքներով։

«Պ ո լ ո ժ է ն ի ա»

Երևանեան նահանգին ու Վաղարշապատին մերձելուց յետոյ, ուր գտնւում է հայոց կաթողիկոսական մայր-աթոռը, ռուսաց կառավարութիւնը յատուկ կանոններ է մշակում ռուսահայերի եկեղեցական և այլ զուտ ազգային գործերը վարելու համար (1836 թ.) Այս կանոնադրութիւնը ռուսերէն լեզուով կոչւում է Պոլոժենիա և նրանով որոշւում են կաթողիկոսի իրաւունքներն ու նրա յարաբերութիւնները կայսերական կառավարութեան հետ։

Պոլոժենիայի համաձայն, հայոց կաթողիկոսները, իբրև բովանդակ հայերի Հայրապետ, ընտրւում են ամբողջ հայ ազգից ուղարկւած եկեղեցական և աշ-

խարհական պատգամաւորներից և ապա հաստատւում ռուսաց կայսրի կողմից։

Ընտրութիւնը կատարւում է Էջմիածնի տաճարում, ուր հաւաքւած պատգամաւորները ընտրելիների քառանուն ցանկ են կազմում բարձրաստիճան հայ եկեղեցականների միջից և ապա ընտրում երկու կաթողիկոսական թեկնածու։ Առաւելագոյն քւէ ստացող այդ երկու թեկնածուների անունները ներկայացւում են ռուսաց կայսրին, որը նրանցից մէկին կամ միւսին հաստատում է ամենայն հայոց կաթողիկոս։

Նոյն Պոլոժենիայի համաձայն, ամենայն հայոց կաթողիկոսը հանդիսանում է հայոց եկեղեցու բարձրագոյն ներկայացուցիչն և իշխանաւորը. նրան է վերապահւած եկեղեցական կանոնների ու ծէսերի անթերի կատարման հսկողութիւնը և բոլոր եկեղեցական ու դաւանաբանական գործերի տեսչութիւնը։

Պոլոժենիայի զօրութեամբ Էջմիածնում հաստատւում է նաև բարձրագոյն մի հոգևոր ատեան, որ կոչւում է Սինօդ, որի բոլոր ութ անդամներն էլ հոգևորականներ պէտք է լինեն։ Դրանք նշանակւում են կաթողիկոսի կողմից և հաստատւում կայսրից։ Կայսրը իրաւունք ունի սակայն կաթողիկոսի նշանակածին չհաստատել և առաջարկել մի ուրիշին ընտրելու։

Սինօդի նախագահը թէև կաթողիկոսն է, բայց այդ բարձրագոյն հոգևոր ատեանը ենթարկւում է ներքին գործերի մինիստրութեանը և նրան էլ պատասխանատու է։ Սինօդում կայ և մի ուրիշ՝ յատուկ պաշտօնեայ՝ պրոկուրորը։ Նա նշանակւում է ներքին գործերի մինիստրի կողմից և պարտաւոր է հսկել, որ Սինօդն ու կաթողիկոսը չը շեղւեն պոլոժենիայով իրենց տրւած իրաւունքների սահմաններից։

Բացի զուտ կրօնական ու դաւանաբանական խնդիրներից, որոնց վերջնական վճիռը հայոց կաթողիկոսին է վերապահուած, միւս բոլոր եկեղեցական, դպրոցական, կալուածական և այլ գործերի վարչութիւնը Սինօդին է պատկանում։

Ռուսահայերի ամբողջ վիճակը բաժանուում է վեց թեմերի, որոնցից իւրաքանչիւրը կառավարուում է կաթողիկոսից նշանակուած և կայսրից հաստատուած թեմակալ առաջնորդների միջոցով։ Իւրաքանչիւր թեմում կայ մի հոգևոր ատեան, որ կոչւում է Կօնսիստորիա և որի նախագահն է թեմական առաջնորդը։

Թեմերը չափազանց մեծ լինելով, բաժանուում են մի քանի վիճակների, որոնցից ամեն մէկն իր յատուկ հոգևոր վարչութիւնն ունի։ Վիճակային վարչութեան նախագահը լինում է առաջնորդական փոխանորդը կամ յաջորդը։

Վիճակային այդ վարչութիւնները ենթարկուում են Կօնսիստորիային, իսկ Կօնսիստորիան էլ Սինօդին, որին ամեն տարի նրանք պարտաւոր են հաշիւ ներկայացնել իրանց գործերի մասին։

ԹԻՒՐՔԱՀԱՅՔ

Բարեկեցութեան ու լուսաւորութեան կողմից Հայաստանի օսմանեան բաժնում ապրող հայութիւնը բոլորովին այլ կացութեան մէջ է գտնւել։

Այդ երկրում հայը, տեղական օրէնքի համաձայն, մահմեդականի հաւասար քաղաքացի չէ համարուել, այլ մի «ռայա»—հպատակ։ Բայց ոչ միայն մահմեդականի համահաւասար իրաւունքներ չէը վայելում, այլ և նրա ամբողջ ստացուածքն ու կեանքը մահմեդականի սեփականութիւն են ճանաչւել։

Ամեն մի օսմանցի, եթէ մանաւանդ նա պետական պաշտօնեայ էր, կարող էր անպատիժ վերպով յափշտակել հայի ամբողջ կարողութիւնը և նրան կատարեալ սովի մատնել։

Հայաստանի օսմանեան մասում ոչ միայն նոր և յարմար հաղորդակցութեան ճանապարհներ չեն շինւել, այլև տիրող կառավարութեան կատարեալ անհոգութեան պատճառով, հին ժամանակներում շինուած ճանապարհներն էլ քայքայւել ու անպէտ քացել են։ Քանդւել և ոչնչացել են նոյնպէս այն բոլոր ջրանցքները, ջրամբարներն ու անտառները, որոնք մի ժամանակ մեծ ծառայութիւն էին մատուցանում երկրի բերրիութեանը։

Դրա հետևանքն այն է եղել, որ այդ երկրում մի ժամանակ ծաղկած արդիւնաբերութիւնը, արհեստներն ու վաճառականութիւնը սաստիկ ընկել են, իսկ ժողովուրդն էլ վերջին ծայր աղքատութեան է մատնուել։

Ծայրայեղ աղքատութիւնից, կառավարչական հալածանքներից ու թափառաշրջիկ քիւրդ ցեղերի բարբարոսութիւններից ազատւելու համար, հայերը յաճախ ստիպւել են մեծ բազմութեամբ գաղթել օտար երկիրներ։ Գաղթականութիւնների շնորհով Հայաստանի հայ բնակչութեան թիւը հետզհետէ սաստիկ նւազել է, իսկ գաղթականներն էլ իրանց նոր հայրենիքում, ժամանակի ընթացքում, լուծւել են իրանցից շատ աւելի զարգացած ազգերի մէջ և կորցրել մայրենի լեզուն և ազգութիւնը։

Կրթութեան ու լուսաւորութեան կողմից էլ Թիւրքիան յետ էր մնացել։

Օսմանցիք թէև Կոստանդնուպոլսում մի համալսարան և մի քանի հատ էլ միջնակարգ ուսումնարաններ ունին, բայց դրանք թէ շատ վատ են դրված և թէ շատ քիչ են մատչելի քրիստոնեաների համար։

Կանոնաւոր ուսումնարաններից զուրկ են թիւրքահայերը։ Նրանց մէջ ուսումնարանական գործը, գրականութիւնն ու մամուլը կարողացել են զարգանալ, հայկական գաւառներից հեռու՝ բնակած՝ Կոստանդնուպոլսում և Զմիւռնիայում միայն։

Դեռ շատ հին ժամանակներից այդ կողմերը գաղթած հայերը բաւականին պատկառելի թիւ են կազմել։ Օսմանեան սուլթանները չը վախենալով այդ՝ իրանց բնիկ հայրենիքից կտրած՝ հայերի ապստամբական ձգտումներից, միշտ աւելի մեզմ աչքով են նայել նրանց վրայ և շատ էլ մեծ հալածանքների չեն ենթարկել։ Բացի դրանից՝ ծովային ամենափառաւոր հաղորդակցական միջոցներով կապած լինելով եւրոպական երկիրների ու ազգերի հետ, այդ հայ գաղթականները կարողացել են համեմատաբար թէ բարւոք վիճակ ունենալ և թէ աւելի կրթուել ու զարգանալ։

Թիւրքահայերի առաջին միջնակարգ դպրոցը, «Ճեմարան ս. Երուսաղիմայ» անունով, հիմնուել է Կոստանդնուպոլսում (1838 թ.)։

Այդ ճեմարանը այժմ գոյութիւն չունի, բայց նրա փոխարէն աւելի ուշ բացուել է «Կեդրոնական» վարժարանը, որը նոյն դերն է կատարում թիւրքահայերի համար, ինչ դեր կատարում է Ներսիսեան դպրոցը ռուսահայրի համար։

Թիւրքահայերի ամբողջ գրականութիւնն ու մամուլն էլ գլխաւորապար այդ քաղաքներումն են կենտրոնացած։

Թիւրքահայ երիտասարդները իրանց բարձրագոյն կրթութիւնն ստանում են եւրոպական համալսարաններում։ Սակայն նրանք չեն կարողանում շատ էլ պիտանի լինել հայկական գաւառների համար։ Լաւ ճանապարհների բացակայութիւնն ու երկրի այլ պայմանները հարկադրում են ուսումնասիրած Հայաստանցի երիտասարդներին անգամ՝ հեռաւոր Կոստանդնուպոլսում հաստատուել և այդպիսով կտրուած մնալ մայր-հայրենիքից։

Ազգային սահմանադրութիւնը

Թէև օսմանցիք կողմնակի կերպով ամեն միջոց գործ են դրել իրանց հպատակ հայերին Իսլամի կրօնին դարձնել, բայց և այնպէս տէրութեան օրէնքներով թիւրքիայի քրիստոնեաները յայտնի չափով կրօնի ազատութիւն են վայելել։ Հայերին է վերապահուած իրանց կրօնական բոլոր գործերի վարչութիւնը։

Դեռ XV-րդ դարում, օսմանեան Մահմմէդ II-րդ սուլթանը մտածում է իր հպատակ հայերին անջատել պարսից իշխանութեան տակ գտնուղ կաթողիկոսի ազդեցութիւնից։ Այդ նպատակով նա Բրուսայի առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք է նշանակում և իր հպատակ հայերի բոլոր հոգևոր և ազգային գործերի անօրինութիւնը նրան յանձնում (1461 թ.)։

Այդ ժամանակից ի վեր օսմանեան հայերի ներկայացուցիչն ու հոգևոր պետը պատրիարքներն են հանդիսանում։

Պատրիարքները ընտրում են թիւրքահայերի կողմից և ապա հաստատում սուլթանից։ Պատրիարքները ամենայն հայոց կաթողիկոսին չեն ենթարկւում, բացի զուտ դաւանաբանական խնդիրներից։ Նրանք են հաստատում ամբողջ Թիւրքիայի հայկական թեմերի համար ընտրւած թեմական առաջնորդներին։

Մինչև XIX-րդ դարի կէսերը պատրիարքները իրանց պաշտօնավարութեան յանձնւած գործերը վարում էին պօլսաբնակ մի քանի հայ ամիրաների մանակցութեամբ։

Ամիրաներ կոչւում էին նրանք, որոնք մեծ հարստութեան տէր էին և մեծ կապեր ունէին զանազան թիւրք փաշաների հետ։ Դրանք հայ ազգի մեծամեծներն էին համարւում։

Այդ հարուստ ամիրաները, իշխելով իրանց ունեցած դիրքն ու կապերը, երկար ժամանակ իրանց ձեռքում խաղալիք էին դարձրել թէ պատրիարքներին և թէ բոլոր ազգային և եկեղեցական գործերը։ Այդ բանը ահագին խռովութիւններ էր առաջացնում ժողովրդի ստորին խաւերում, գլխաւորաբար արհեստաւորների մէջ։ Երկար մաքառումից յետոյ, այս վերջիններին յաջողւում է, վերջապէս, ազգային գործերի վարչութիւնն ամիրաների ձեռքից խլել ու ժողովրդից ընտրւած մարդկանց յանձնել։

Կառավարութեան թոյլտւութեամբ հաստատւում է 140 անձերից բաղկացած մի ժողով (1860 թ.), որը կոչւում է Ազգային ժողով և որը վարում էր թիւրքահայերի բոլոր եկեղեցական և ազգային գործերը։ Ազգային ժողովը նոյն թւականին իր համար մի կանոնադրութիւն է մշակում, որը քիչ փոփոխութեամբ հաստատւում է օսմանեան կառավարութիւնից։

Տէրութեան կողմից հաստատւած ազգային ժողովի կանոնադրութիւնը կոչւում է Ազգային Սահմանադրութիւն։

Այդ սահմանադրութեան համաձայն, Ազգային ժողովի 140 անդամներից, որոնք կոչւում են երեսփոխանները, 20-ը պօլսաբնակ եկեղեցականներ պիտի լինեն, իսկ մնացած 120 աշխարհական երեսփոխաններից 80-ը լինելու են պօլսաբնակ, իսկ 40-ը դաւառներից։

Ազգային ժողովը ընտրւում էր 10 տարով, բայց 2 տարի մի անգամ նրա հինգերորդ մասը հեռանում էր և նրանց տեղ նորերն էին ընտրւում։

Ընդհանուր Ազգային ժողովը իր միջից ընտրում էր երկու վարչական մարմիններ՝ կրօնական ժողովը, որ բաղկացած էր 14 եկեղեցականներից և Քաղաքական ժողովը, որ կազմւած էր 20 աշխարհականներից։ Այդ երկու մարմիններն էլ նորոգւում էին երկու տարին մի անգամ։

Կրօնական ժողովը վարում էր թիւրքահայերի բոլոր կրօնական գործերը, իսկ քաղաքական ժողովի պաշտօնութեան էին վերապահւած՝ բոլոր կրթական, տնտեսական, բարեգործական ու դատաստանական գործերը։

Թէ Ազգային ժողովի և թէ նրանից ընտրւած կրօնական և քաղաքական վարչութիւնների նախագահը պատրիարքն էր։

Սահմանադրութեան համաձայն, նոյն ձևով ազգային երեսփոխանական ժողովներ գոյութիւն ունէին նոյնպէս և գաւառներում, որոնց նախագահում էին թեմական առաջնորդները։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Պարսկահայերի թէ տնտեսական և թէ կրթական վիճակը շատ աւելի վատ կացութեան մէջ է գտնուում։ Այնտեղ էլ հայերը չունին ոչ կեանքի և ոչ գոյքի ապահովութիւն։

Երկրի վերջին ծայր յետամնացութիւնը, կառավարութեան անկազմակերպ վիճակը, պարսիկ խաների և քիւրդ բէկերի կամայական հարստահարութիւնները, պարսկահայերին էլ ստիպել են շարունակ իրանց հայրենիքը թողած՝ ուրիշ երկիրներ գաղթել։

Պարսիկները ոչ միայն համալսարան կամ միջնակարգ դպրոց, այլ և ամենատարրական ուսումնարանները էլ չունին, որոնցից հայերն էլ կարողանային փոքը ի շատէ օգտուել։ Այդ կողմից հայերը շատ աւելի բարձր են, քան տիրող ժողովուրդը։

Նրանք թէ Թաւրիզում, թէ Թէհրանում և թէ Սպահանում ունեն բարեկարգ երկսեռ դպրոցներ, որոնք թէև հեռու են միջնակարգ դպրոց լինելուց, բայց և այնպէս բաւականին նպաստում են հայ ժողովրդի մէջ կրթութիւն և ուսում տարածելուն։

Պարսկահայերի մէջ գրականութիւնն ու մամուլը համարեա թէ բոլորովին չէ զարգացել։ Պարսկահայ եւրիտասարդներն իրանց ուսումը շարունակելու համար մանում են Ներսիսեան դպրոց, Գէորգեան ճեմարան ու ռուսական միջնակարգ և բարձրագոյն դպրոցները։

Պարսկահայերն էլ յայտնի չափով կրօնի ազատութիւն են վայելում։

Նրանց է վերապահուած իրանց կրօնական ու կրթական բոլոր գործերի անօրինութիւնը։

Պարսկահայերի ամբողջ վիճակը 2 թեմի է բաժանուած, որոնց թեմական առաջնորդները կամ ամենայն հայոց կաթողիկոսից են նշանակւում և կամ ընտրւում թեմի ժողովրդից և ապա հաստատւում կաթողիկոսից։

ՅԱՆԿ

ՄԱՍՆ I

Հին Հայաստանի երկիրն ու ժողովուրդը

Երկիրը 3
Ժողովուրդը 4
Հայաստանի կառավարչական կազմը . . 6
Վարչական ու պալատական պաշտօնեաներ . 8
Հայ ժողովրդի զբաղմունքը . . . 11
Հայոց ընտանեկան կեանքն ու սովորութիւնը . 12

ՄԱՍՆ II

Մեծն Տիգրան

Ընդհանուր դրութիւնը Փոքր Ասիայում Մեծն Տիգրանից առաջ 15
Հայաստանը Տիգրանից առաջ . . 17
Մեծն Տիգրանի քաղաքակրթական ձգտումները . 33
Հայաստանը Տիգրանից յետոյ . . 37
Հայերի հեթանոսական կրօնը . . . 39

ՄԱՍՆ III

Քրիստոնեայ Հայաստանը

Տրդատ և ս. Լուսաւորիչ 42
Հայաստանը քրիստոնէութիւնից յետոյ . . 50
Արշակ II և Մեծն Ներսէս 52
Ս. Սահակ և Ս. Մեսրոպ 64
Կրօնական պատերազմներ 68
Արաբների արշաւանքը 80
Հայաստանը արաբների իշխանութեան տակ . 84

ՄԱՍՆ IV

Բագրատունեաց Թագաւորութիւն

Բագրատունիք 87
Սելջուկների արշաւանքը 98
Սելջուկների տիրապետութիւնը . . . 106

ՄԱՍՆ V

Ռուբինեան Թագաւորութիւն

Հայերի գաղթականութիւնները . . . 109
Ռուբինեան իշխանութեան ծագումը . . 110
Լևոն Մեծագործ 112

ՄԱՍՆ VI

Հայաստանը Բագրատունիների անկումից յետոյ

Վրաց տիրապետութիւնը 120
Թաթարների արշաւանքը 122
Հայաստանի վիճակը թաթարների օրով . . 125
Իլխանների սուլթանութեան քայքայելը և օսմանեան պետութեան ծագումը 127
Լանկթամուրի արշաւանքը 128
Հայաստանը թաթարներից յետոյ . . . 131

Շահ Աբաս 132
Ղարաբաղի Մելիքները 136
Մելիքների ձգտումները ու Մեծն Պետրոս . . 137
Դաւիթ բէկ 140
Ռուսական նուաճումները Հայաստանում . . 143
Ռուսահայք 146
«Պոլժենիա» 148
Թիւրքահայք 150
Ազգային Սահմանադրութիւնը . . . 153
Պարսկահայք 156

3005

2013

3— Ч. В-1 А О

ЗОР
3 +